



Բնօրինակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՈՇԵՄՆԻ

Բ. ՏԱՐԻ 1963
Ա Պ Ր Ի Լ

4

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارنيك كارنيك قزائجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

բւկին

ԱՄՍԱԳԻՐ

ԴՐՈՒՆԱՆՈՒԹՅԱՆ
ԵՒ ԱՐՈՒԾԱՅԻ

ՎԱՐԻՋ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ԱՍԱՌԻՆԻ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

ԵԴ. ՊՕՑԱՃԵԱՆ, Պ. ԱՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄԵՐ

Յ. ԳԵՂԱՐԴ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Վ. ՕՇԱԿԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

Վ. ԳԵՌՐԳԵԱՆ

Բ. ԿՈՒՆԵԱՆ

ԱՐՇԻ

Ն. ՊԵՇԻԿՍԻՆԵԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ԹԱԻՐԻՋԵԱՆ

ԳՈՒՏՑԻ Պ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Ղ. ԺԻՐԱՅՐ

ՋՕՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Բ. ԹԱՇԵԱՆ

Բ. Փ.

Վ. Գ.

ԵԴ. ՊՕՑԱՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

E. D. BOYADJIAN

B. P. 1153, BEYROUTH - LIBAN

Հեռագրային թիվ 256078

Բացի արգելա նշանակություն, Հարուստիկի ևն նաև այլ թիւով տպուած Բ. Փա-
փագեանի գրքից կը պահանջուի գրողէանէն Սովետ. աշխարհին մէջ գրութիւնը եւ Լ
Մկրտչեանի ձեռնիկ բաժնեցոյն:

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Բ. ՅԱՐԻ, ԶԻՒՒ 4

Ա. ԳՐԻԼ 1963

ՊԵՏՐՈՒԹ

ԲՈՂՈՐԸ ԿՈՏՈՐԵՑԻՆՔ

Գրեց՝ ՄԵԼԳՈՆ ԵՊԼԻՂԱԹԵԱՆ

— Վաղը կէսօր վերադարձած կ'ըլլամ: Գիշեր քարի, Լեւոն: Կը յուսամ որ հիւանդանոցում քանի մը հատը ողջ կը ձգես...

— Գիշեր քարի եւ ցտեսութիւն, պարոն քմիշկ:

Մեծաւորս կը մեկնէ եւ Հիւանդանոցին մէջ մինակ կը մնամ: Այս վայրկեանէն սկսեալ մինչեւ վաղը կէսօր՝ պատասխանատու վերաբոյժը ես եմ:

Ինչ լա՛ւ է մեծ քաղաքներու մէջ, ուր քանի մը Հիւանդանոցներ եւ տանեակներով վերաբոյժներ կան: Զունիս պատասխանատուութեան այս անմարդկային բեռը: Պարագան ծա՛նր է, չե՞ս կրնար միեակդ վճռել. փորձառու պաշտօնակիցի մը կարծիքը կ'առնես: Թէ՛ք մի՛ գոհարարութեան մը հանդիպեցար. — Հեռաձայնով մասնագէտ մը կը կանչես:

Տարբեր է պարիկ քաղաքի մը միակ Հիւանդանոցին միակ վերաբոյժը ըլլալը: Ուրիշէն բան չես կրնար սպասել: Դուն պիտի դատես, դուն պիտի վճռես,

դուն պիտի գործադրես: Պատասխանատուութիւնն ալ, անշուշտ, դո՛ւն պիտի ստանձնես: Փախուստի դուռ չկայ:

Ամիսը անգամ մը բժշկապետը քաղաքէն կը բացակայի: Որպէս օգնական վերաբոյժ, ինծի կ'իյնայ զինք փոխարինելու, ի՛նչ ըսեմ, այո՛, ըսեմ, պատի՛ւը:

Պատիւ կամ մտահոգութիւն, խընդիբ չէ: Երբ կը մտածեմ որ այս գիշեր տասէ աւելի ծանր Հիւանդներու կեանքը ինձմէ կախում ունի...

Կախում ունի բժշկական փորձառութենէս, գիտական պաշարէս, մասունքներու ճարտարութենէն, դատումներու պայծառութենէն:

Տակաւին ինձմէ կախում ունի նաեւ քաղաքին ո՛րեւէ արկածեալի կեանքը:

Ամենափոքր սխալս կրնայ եղերական Հետեւանքներ ունենալ: Կրնա՞ս մէկուն ներողամտութեան ապաւինիլ: Առանց դատաւարութեան քեզ թաշը կը

հաննին: Բժիշկը իրաւունք չունի սխալելու:

Այո՛, սպառնալից զրոտեղանին հետեւ, կամ պատերազմի զաւտին վրայ՝ սպան կրնայ սխալել, ու մարդիկ՝ կը մեռնին: Ոչինչ: Սպան հերոս ըլլալէ չի դադարիր: Իսկ բժիշկը...

Ան ալ մարդ չէ՞: Ներքին փոթորկումներ կ'ունենայ, Ֆիզիքական եւ հոգեկան տկարութիւններ կ'ունենայ, զըլխու ցաւ կ'ունենայ, աղիքներու խանգարում կ'ունենայ: Ձեռն հասկնար:

Հասկնան իսկ՝ չեն ներեր:

Յետոյ, ի՞նչ կարեւորութիւն ունի հասարակութեան նշանակութիւնը կամ լայնխառնութիւնը, երբ քու մէջը ունիս զատուորներուն ամէնէն անկաշառը, ամէնէն անպաշտօն: Ի՞նչ փոյթ թէ ուրիշներ կը ներեն՝ երբ չես կրնար դուն քեզի՛ ներել:

Երբեմն կը մտածեմ: Ինչո՞ւ այսքան զոհուիլ: Ապրուստի՛ համար. — ծիծաղելի պատճառաւորութիւն: Վե՛հ ըսկըզրունքներով համար: Կ'արժէ՞ զոհուիլ, կ'արժէ՞...

Սկսայ չափը անցնել: «Լաւ բժիշկ մը» այդքան խորը չի պրկուր: Մի՛շտ առողջ, մի՛շտ ժպտաղէժ, մի՛շտ ամենազէտ, մի՛շտ պազարիւն, իր գործը միշտ լաւագո՛յն կը կատարէ: Ու կ'անցնի:

— Տօքթօր Լեւոն, թիւ չորսը ամպատնառ անգի ետ խօսիլ կ'ուզէ:

— Ի՞նչ ունի նորէն ծերուկը:

Թիւ չորս: Խեղճ Յովհաննէս աղա: Քաջառողջ այդ հսկան որքա՞ն ծերացած է, որքա՞ն խեղճացած: Վերածուած է թիւ չորսի:

— Բարի իրիկում Յովհաննէս աղա, ինչպէ՞ս ես:

— Ինչպէ՛ս պիտի ըլլամ տօքթօր, վիճակս կը տեսնես: Ա՛խ, անգամ մը հիւանդանոցէն խելով-բարով ելլէի:

— Կ'երեւի տունդ կարօտցար, քնակամ է: Կ'ելլես, Յովհաննէս աղա, կ'ելլես: Մօտ օրէն, կ'աղէկմաս, կ'ելլես:

— Կ'ելլեմ, աղաս, սակայն մթնած կ'ելլեմ...

— Ձե՛ր, այդպէս խօսելու իրաւունք չունիս:

— Ինչպէ՛ս թէ չունիմ: Պարզ փորիցաւ մըն էր, աղէկ-գէշ կը քաշէի: Եկամ — «գործողութիւն պետք է» ըսիք — խօսքս մի՛ կտրեր, գիտե՛մ, ըսողը դուն չէիր — մեզի դանակիմ տակ պառկեցուցիք: Այսօր լաւ կ'ըլլատ, վաղը լաւ կ'ըլլատ ըսիք, զիս խաղցուցիք: Ես վիճակիս մէջ փոփոխութիւն չեմ տեսներ: Կարուած տեղն ալ միշտ կը ցաւի: Վերջըս ի՞նչ պիտի ըլլայ տօքթօր, վերջո ի՞նչ պիտի ըլլայ...

— Քիչ մը պիտի համբերես, Յովհաննէս աղա: Գէշ օրերը կ'անցնին: Հայրս քեզի շատ բարեւ ունի: Կը սպասէ որ աղէկմաս եւ միաւրմ դարձնալ թաւշի խաղաք:

— Ա՛խ, պիտի գա՞յ այդ օրը:

— Յոյսդ մի՛ կտրեր, կու գա՞յ:

Ի՞նչ ըսեմ: Թէ մեծաւորը փորը բացաւ, տարածուած քանդակ մը գտաւ եւ անգոր՝ վէրքը զոցե՞ց: Թէ քանի մը ամսըս կեանք ունի միայն: Թէ հիւսնադանդէն պիտի ելլէ՞ գերեզման՝ երթալու համար:

Համալսարանին մէջ չսորվեցուցին, բայց հո՛ս, կեանքի համալսարանին մէջ սորվեցայ՝ անխռով եւ ժպտաղէժ, սո՛ւտ խօսիլ, Եթէ բացատրութեան չհասնեցաք, ըսէ՛ք — հիւսնադը յուսադրե՛լ, կամ ո՛րեւէ ուրիշ գեղեցիկ բան: Միեւնոյնն է: Անխռով, այո՛, բայց արտաքինապէս միայն:

— Տօքթօր, խնդրեմ մի՛ մոռնաք թիւ հինգը, պարոն Ասատը:

Քիչ մնաց պիտի մոռնայի: Լաւ յիշեցուց հիւսնադապահուհին: Ահադին տաղտուկ կրնայինք ունենալ, Հաւրկա՛ւ, պարոն Ասատը երեսփոխան է, մե՛ծ, մե՛ծ անձնաւորութիւն է:

— Բարի իրիկում պարոն Ասատ, ինչպէ՞ս էք այս իրիկում:

Ճարպիկ կոյտի մը վրայ պզտիկ գըլուխ մը: Անշարժ կըլոր աչքեր: Քաջիւն թերանէն ուղղակի մաղձ կը ծայրէքէ:

— Լաւ չեմ. քնաւ լաւ չեմ: Շատ գէշ եմ: Կէսօրէ ետք տալիսքիւն ունե՛-

ցայ — քէնու հիւանդապահուիլն ինձմէ պահելու զգոյց: Թեւեւ, ներառւումն տեղը, ուռած եւ կապուողած է: Փոքր չեղաւ: Փորձեցի քննել: սակայն չյաջողեցայ: Դուլիս սարսափելի կը ցաւի: Քիչ առաջ ալ քանի մը անգամ հազացի...

Երկար կը քնենա՞ն հիւանդը: Բա՛ն չունի:

— Պիտի քանամ որ շուտով ապաքինիք պարոն Ասատ: Զմռնամք որ մեր գործողութիւնը երէկ այս ժամուն վերջացաւ: Առաջին օրը այսպէս քիչ մը գլխացաւ, քիչ մը տախիքիւն՝ անխուսափելի են: Մտանդակի նշան մը չեմ տեսներ:

Ո՛չ, դժգոհ է պարոն երեսփոխանը եւ անվերջ կը դանդաղի հիւանդանոցէն, գթութեան քոյրերէն, բժիշկներէն, ըստաստերներէն, ուսելիքէն, ձայնէն, օգէն, լոյսէն...

Բողաքավարութեամբ եւ մա՛նտաւոր համբերութեամբ մտիկ կ'ընեն դիմեք, մինչեւ վերջը: Թող չըսեն թէ տօթթէօր Լեւոնը, բոլոր Հայերուն պէս, «ճկունութիւն» չունի: Եւ իրեն կը խոստանամ, ամէն բան կը խոստանամ: Կարեւորութիւն չունի, վաղը մոռցած կ'ըլլայ եւ անշուշտ կը ներկայացնէ դանդաղանքիւ նոր հաւաքածոն:

Մինչդեռ ամէնքս, գետինը մաքրողներէն մինչեւ բժշկապետը, հազար կտոր կ'ըլլանք իրեն համար:

Անշուշտ մեծաւորին պիտի բողոքէ նաեւ «Հայ երիտասարդ բժիշկին» դէմ: որովհետեւ անունս միտքը պահելու տարրական քաղաքավարութիւնն իսկ չունի: Թող բողոքէ: Աւելին չեմ կրնար ընել: Խնչ կը կարծես, դժգոհ խոզ: Զիտ ծառա՞յ կը կարծես:

Եթէ կ'ուզես պիտեալ, ըսե՛մ: Մառան եմ հիւանդին: Ո՛չ միայն չեմ ամբողջար ալլ հպարտ եմ այդ հանգամանքով, որ իմաստ կու տայ կեանքիս: Ուրեմն ծառան եմ քու մէջը տառապող հիւանդ մարդուն եւ ո՛չ թէ փառքած քաղաքական անձնաւորութեան: Ճարպա-

կալած ուղեղդ այս ներութիւնը չի կրնար հասկնալ:

Տրամադրութիւնս փոխելու համար թիւ վեց սենեակը կը մտնեմ: Օ՛ր, օրիորդ Սօնիան արդէն մաղերը խնամքով սանտրած է, այտերը չպարած, չբռնեցները ներկած: Լաւ նշան: Կին մը որ կը սկսի արդուպարզով զբաղուիլ, ապաքինումի ճամբուն վրայ կը գտնուի:

— Ինչպէ՞ս է մեր գեղեցկուիլն:

— Ենթադրեալ եմ բժիշկ, շատ լաւ եմ, կեանքս մեծ կը պարտիմ:

Ինչ աղուո՞ր ժպիտ: Խնչ աղուոր մեծարանք: Ինձի՞ կը պարտի: Հապա՞:

Մինչդեռ իր գործողութիւնը բժշկապետը կատարեց եւ տուէ՛ն անշուշտ տեղեակ է վարպետորդի աղջիկը:

— Ե՞րբ կը կարծէք թէ տուն կ'երթամ, բժիշկ:

— Եսթաւան վերջը հիւանդանոցէն ելած կ'ըլլաք եւ կը մոռնաք այս տխուր օրերը:

— Տխուր օրեր չանցուցի հիւանդանոցին մէջ եւ մեզ երբեք չեմ մոռնար: Նորէն ժպիտ: Թարթիչներու խաղ: Խոստումներ՝ ձայնին եւ շնորհակալութիւն: Գթութեան քոյրը անակնկալօրէն կը մտնէ եւ կ'սկսածոտ նայուածքը կը մզէ անգամ մը ինձի, անգամ մը Սօնիային: Գիտե՛մ մաքէն անցածը: Բժիշկը սա անպիտանին ճանկերուն տակ չի՛նա՞յ...

Սօնիային սիրային զոհերը շատ են: Համբարը անշուշտ կ'ընտելուէ՛ն ալ հասած է: Տե՛ս, վիճակը տես. հի՛մա ականջէս պիտի բռնէ եւ գոբոս պիտի քաշէ... Մօրս պէս, երբ իր փոքրիկ տղան յանցանքի վրայ կը բռնէր:

— Տօթթէօր Լեւոն, վերադարձ մը ընդունեցինք, կրնա՞ք գալ:

Վա՛յ նախանձոտ, վա՛յ: Ինչպէ՞ս ալ կը կճէ: «Կրնա՞ք գալ»: Ինչու՞ կրնա՞մ չգալ:

— Ուշտաւար մըն է, օտարակից: Լեզուէն քան չենք հասկնար:

Պատգարակին վրայ երկնցած է չորցած ծերունի մը, աչքերուն մէջ սարսափ: Կը բացատրէ, կը պաղատի, դա-

ւակները կը կանչէ: անոնքիս կոչոթ թըր-
քերէնով մը որ հազիւ կը հասկնամ:

Հանդարտեցնելու համար է՛ս ալ
թրքերէն կը խօսիմ: Կը կարծէ հայրե-
նակից մը գտած ըլլալ, ոտքերուս կը
փաթթուի, կը սկսի լալ: Վաղը առա-
ւօտ նսալը կը մեկնի, անպատեհաւ միւս
ուխտաւորներուն հետ երկիր պիտի վե-
րապառնայ:

— Ամա՛ն տղաս, զիս հիւանդամոցիմ
մէջ մի՛ ձգել, իմիկներէս հետեւ չմնո-
նիմ: Գնուի՛ս համար քաղաք իջած էի —
այս, սեւ ժամ, երանի՛ր ոտքս կոտորէր
եւ նստէի չիլիէի — ինքեանքս մը եկաւ,
առնի քեքեւ քուեցաւ: Ոստիկանները
հոս քերթն: Բամ չուցիմ, տղա՛ս, զիս
նստ գրկէ, զորպա՛ն...

Շատ դժուարութեամբ ցնցոտիները
կը հանկեք բռնկական քննութեան հա-
մար: Վէրք չունի: Յաւ մը ձախ կողե-
լուն տակ, զգայուն եւ խոշոր փայծաղ,
երակային ցած ճնշում:

Ամբիջպէս միտքս կու գայ ճեղքը
ւած փայծաղի ախտաճանաչումը: Այս
տարի երեք պարագայ ունեցանք:

Ընելիքս որո՛շ է: Որովայնը քանալ
եւ արիւնահոսութիւնը դադարեցնել: Ե-
թէ մինչեւ վաղը սպասեմ՝ ծերուկը վըս-
տահօրէն կը մեռնի:

Այո՛, սակայն ախտաճանաչումս վըս-
տա՛հ է: Ֆիզիքական եւ հոգեկան ցրն-
ցումը կրնան միեւնոյն նշաններով յայտ-
նուիլ: Պարագ տեղը գործողութիւնը ը-
րած կ'ըլլամ:

Կորոշեմ ամօքիչներ տալ եւ մէկ
ժամ սպասել: Եթէ ներքին արիւնահո-
սութեան ախտանշանները չքայտն, լա՛ւ,
աժան կ'աղատինք: Հակառակ պարագա-
յին՝ գործողութիւն:

Քիչ մը ժամանակ անցընելու, քիչ
մըն ալ ծերուկին վստահութիւնը գրաւե-
լու համար քովը կը նստիմ եւ կը հար-
ցընեմ անունը, ծննդաւայրը, գրադումը:
Էրզրումի գիւղերէն է: Ծննդեան
թուակներ չի յիշեր: Տուն, կին, զա-
ւակներ ունի: Շատ ուրախ է որ իրակա-
նացաւ ամբողջ կեանքին երազը, ուխ-
տագնացութիւնը: Գիտէ թէ պիտի մեռ-

նի: Հոգ չէ, միայն զաւակները անգամ
մը տեսնէր...

Աստիճանաբար կը թուլնայ լեզուն
կապող վախի հանգոյցը: Կը հանդարտի:
Փառք կու տայ Աստուծոյ որ հայրենա-
կից մը դիմացը հանած է այս չար ժա-
մուն:

Հաշիւցա՛ր, տօքթօր Լեւոն: Դուն
բարեք ըրէ, ան ալ քեզ թրքացնէ: Է՛,

կը շնորհաւորեմ...

Եթէ բռեմ որ հա՛յ եմ, ծերուկը յու-
սախտս պիտի ըլլայ: Հիւստ ժամանակը
չէ: Սա վստահը անցնի:

Բայց ինչպէ՞ս, ինչպէ՞ս կրցայ ի-
րեն ուղղել ապո՛ւշ հարցումը, կեանքիս
ամէնէն ապուշ հարցումը:

— Անիկա տղա, ձեր կողմերը Հայեր
կա՞ն:

— ԿԵԱՎՈՒՐ ԳԱԼՄԱՏՈՐ, ՀԵՐՍԻՆԻ
ՓԷՍՏԻՓ:

Շատաշու՛ն ապտակ մը քթիս-բեր-
նիս: Արիւնը դուրս կը խուփէ, աչքերս
կը՝ մթաղին:

Բոլո՛րը կոտորեցինք:
Ի՞նչ, ինչպէ՞ս:

Անիկից բոտերը ուղեղիս մէջ կ'ար-
ձագանդեն...

Բոլո՛րը կոտորեցինք, բոլո՛րը կո-
տորեցինք, բոլո՛րը...

Կը բաւէ՛, կը բաւէ՛:

Դժուարութեամբ ետ կը քաշեմ
պրկուած մատներս որոնք կ'երթային
ծերուկին միտերուն մէջ խրուիլ:

Մեր սերունդին տղաքը Թուրքը
ո՛ւղղակի չճանչցան:

Սա արդահատելի ծերո՞ւկն է ուրե-
մին Թուրքը, որ ամբողջ ազգ մը — մե՛ր
տղեր — տեղահան ըրաւ, կոտորեց, ան-
պատուեց, ցրուեց: Սպանդի տարիներ
ունս սա՛ ալ անշուշտ երիտասարդ գա-
ղան մըն էր:

Ճիշդ է, մեզի խնայուեցաւ Ողեո-
նին ամօթը: Բախտաւոր սերունդ: Բայց
ի՞նչ վիճակուեցաւ:

Վրանաբաղաքներու ցե՛խը:
Ամէ՛ն տեղ օտարական ըլլալու դառ-
նութիւնը:

— Սատկելի՛ք: Արդեօք քանի՞ Հայու

արիւն չորցած է դարչելի ձեռքերուդ վրայ:

Քեզ աղատելը ուժերէս վեր է: Լաւ է որ մեռնիս, ծերուի, լաւ է որ հիմա մեռնիս: Գործողութեան սեղանին վրայ նշարակա կրնայ չհնազանդել բժիշկին ձեռքերուն: Վարպետ է անիկա. վայրկեանի մը մէջ միտերդ կը կտրէ, երակներդ կը պայթեցնէ, աչքերդ կը փոքէ...

— Ի՞նչ ունիք, բժիշկ, ամեանցիստ կ'երեւիք, քեյ մը քերե՞մ:

— Շնորհակալ եմ: Գլխիս քիչ մը կը ցաւի: Բան մը չէ:

— Օտարակեանքի մեջումը հետզհետէ կ'իջնէ: Նախագուշտութեամբ համար արիւնը բնակեցնէք: Եթէ ներարկելու ձգէք, պահետակումէ իրեմ յարմար մէկ շիշ արիւն ունիմք միայն:

— Կը տեսնեմք:

— Գործողութեամբ համար ամէն ինչ պատրաստ է:

— Ո՞վ ըսաւ քեզ գործողութիւն պիտի ընեմ:

— Այսինքն, դուք չըսիք, սակայն ինծի այնպէս թուեցաւ որ, ինչպէս ըսեմ — վերջապէս դո՛ւք պիտի վնասէք, բժիշկ:

— Որքա՞ն է երակային ճնշումը:

— Իմը, վեցի վրայ:

— Լաւ, կու գամ ամզում մըն ալ բնակելու:

Վերաւորը հանգարտ է: Այն իմաստով որ շարժելու կարողութիւն չունի: Անկնայտ է վիճակին ծանրութիւնը: Զիս տեսնելով մարած աչքերը կը վերականգնողանան: Հաղիւ լսելի ձայնով մը կ'աղաչէ...

— Տղա՛ս, ինքզինքս Աստուծոյ եւ քեզի կը յանձնեմ:

Եթէ հիմա գործողութիւն չընեմ՝ մէկ ժամէն աւելի չ'ապրիր: Մարդը ըստպանած կ'ըլլամ ո՛չ թէ բան մը ընելով՝ այլ բան մը չընելով:

Ատոր ի՞նչ կ'ըսեն, տօթթէ՛օր Լե-

ւոն: Վրէժխնդրութիւն կ'ըսեն: Ո՛չ, ատոր վատութիւն կ'ըսեն:

Կը վայելէ՞ քեզի, տօթթէ՛օր Լեւոն: Ո՛ր մնաց երգումդ: Թուրք պիտի բուսնանա՞նք զնա առողջ երիտասարդ մը դուրս եւ հետը չափուէ: Կամ զոնէ կտրելուր մէկը, դեռ պան մը, նախարար մը սպաննէ որ ծնաթղ որպէս բողոք՝ իմա՛ստ ունենայ: Ի՞նչ կ'ուզես անպաշտպան ծերուկէն:

— Որքանցի՞ք, բժիշկ:

— Քոյր Անիլիա, ամսիջապէս զգայականիւր կը կանչէք: Տաք վայրկեանէն կը սկսիմք: Զմառնա՛մ, մա՛խ արիւն, յետոյ ՍէրՈՄ:

Արագ շարժիր, Լեւոն: Արդէն բուսական ժամանակ կորսնցուցիր ՌՈՄԱՆԹԻՔ պատճառներով:

Սխալ է: Բժիշկ ես, նոյնիսկ պատերազմի զաշտին վրայ իրաւունք չունիս թշնամի բարեկամէն զատելու: Քեզի վստահութեամբ վերաւորներ կան, պարտաւոր ես խնամել: Այսքան: Մնացեալը փուռ փրկստօթայութիւն է:

Գործողութիւնը յաջող կ'անցնի: Ախտաճանաչումս ճիշդ էր: Կը հանեմ հեղքուած փայծաղը: Երակային ճնշում մը կը բարձրանայ: Եթէ անահնկալ բարձրութիւն մը չսպասահի կրնանք վերանայլ անցած համարել:

Պարտականութիւնս կատարեցի:

Գո՛հ եմ:

Զեմ դիտեր: Ամէն պարագայի ուրիշ կերպ չէի կրնար շարժել:

Բայց, ինչպէ՞ս լուեցնել սա մէջէն բարձրացող ձայնը որ անվերջ կը հայհոյէ՝

— Ստրկամիտ հայ, Հայու մանրո՛ւք, ձեռքերդ դալա՛մ մնան, այսօր Թուրքի մը կենաքը աղատեցիր, եւ ի՞նչ Թուրք...

Մ. Է.

ՎԱՐԴԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԵՐՏ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ



Հոգն հայրենի ուր կ'ապրի ցեղն հիմա խաղաղ,
Հայ հողի գուժ վերածեցի՜ր միապաղաղ.
Ոսկեմերձով ռքացած լոյս երկիրը մեր
Նուանելով հայութեան գուժ ըրի՜ք նուէր:

Յուրտ էր ակութն ուր փռուած էր խշտեակը մեր,
Ձի ծուարած ամէն անկիւն կային իծեր,
Խռով էր մեր նիրհն անդռնով, մզմաւանդով,
Քանի կ'ապրէր նեղ քշմամբն մեր դրան քով:

Մեր հաղորուն բերքն սկազմուն ոսթին էր,
Մեր հունձքով լեցուն էին իր ամբարներն,
Երբ կ'իսամերկ ու անսուաղ կը կոտորուէր
Հայն տարագիր, վրէժն հոգւոյն մէջ կարեւլէր:

Մի՞թէ երկիր էր, հայրենի՞ք ան, կ'իշխէր ուր
Հանճարեալած նեղ քշմամբն, ճեղքին մէջ սուր,
Քատրաստ ընդմիշտ դաշունելու մեզ մեր սրտէն,
Մեր դիակին շուրջ դառնալու պարն իր դժխեմ:

«Աստուածներն իսկ թէ այսպանն վրէժը մեր,
Անոնց՝ նման իրաւունք մը մենք չե՛մք ներք»,
Ձեր վե՛րն այս եղաւ հատու, ճեր ուխտն եզօր,
Եւ այս ուխտով ալ կերտեցի՜ք հայրենիք նոր:

Ո՛վ հերոսներ, այժմ ուրացուած, կեցե՛ք խաղաղ,
Դու՛ք որ տուիք մեզ հայրենիք միապաղաղ,
Իր փառքն ըլլայ պիտի փառքին ձեր՝ պատուանդան,
Ձեր համբաւը գրկէ դարեր յաւերժական...

Հայրենասիրական ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

(Վ Է Պ)



Գրեց՝ ԲԻԻՋԱՆԴ ԿՌԱՆԵԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ճամբու ծախսին համար գրեց Ամերիկայի ազգականներուն: Թա-
ղուհիին օգնութեամբ բանակցութեան մ'տու եւ արձանագրուեցաւ գաւա-
ռական քաղաքի մը համալսարանի նախապատրաստական կարգը:

Յուլիսին կրտկնէրը հասեր էին Օգոստոսի սահմանները: Հոկտեմ-
բերի սկիզբը պէտք էր Ամերիկա ըլլար: Հազար ընելիք ունէր. վրայ գը-
լուխ, անցագիր, վիզա եւ գրամ:

Քանի օրերը սահէին, մօրը աչքերուն տխրութիւնը կը խորանար:
Անոյին զաւկացումներ կը պտտէին դէմքին: Աւելի քիչ կը խօսէր, դը-
թէ չէր ուտեր, չարաչար կ'աշխատէր: Կ'աղօթէր, կ'աղօթէր:

Ապագայի յոյսը եւ սէրը մօրը հանդէպ՝ պլլուէր էին իրարու,
թշնամական գրկախառնումի մը մէջ եւ կը ջանային գիրար զգեստնել: Թէեւ
ճամբորդական պատրաստութիւնները տուալ կ'ընթանային, բայց դեռ չէր
հասնում համար կացութիւնը բիւրեղացած չէր: Երկուութեան մէջ կը տարու-
բերէր:

Եթէ ձգէր երթար եւ իր բացակայութեան մօրը բան մը պտտահէր,
երբեք պիտի չնկրէր ինքզինքին: Խիզ՞ը յաւէտ պիտի տանջէր զինք: Միւս
կողմէ, եթէ այս պատահութիւնն ալ փախցնէր, այլեւս առիթը ընդմիշտ
պիտի կորսնցնէր: Դերձակի աշկերտ մը պիտի ըլլար, գուցէ օր մըն ալ,
տարիներ վերջ, բարձրանար վարպետի աստիճանին: Օր մը: Մօրը սպա-
ռած, պարտաւած մարմինը պիտի հասնէ՞ր այդ հեռաւոր օրուն:

Ամերիկա ալ անորոշութիւն կը սպասէր իրեն: Ինչպէս պիտի ճարէր սպորտսան ու ուսումնական ծախսերը: Կեանքը, ինչ ուղղութիւն ալ բռնէր, պայծառ հորիզոններու վրայ չէր բացուեր: Ձարազուշակ նախադրացումներ կը խոսովէին զինք: Արեւելքը նախապաշարուած է եւ ճակատագրապաշտ:

Կը ճզնէր անոնել ապագայ պատահարներու թուիւպին մէջ ու կը հանդիպէր Պուտտայի անթափանց ժպիտին: Եւ ի վերջոյ, արեւելեան վիպապաշտութեան կը յանգէր, կ'ընդգծէր ճակատագրին դէմ, կը նշովէր բախտը, կը ծառանար նախախնամութեան դէմ: Կ'անհծէր օրը՝ երբ ծնաւ: Տրտում է անձն իմ մինչ ի մահ:

Հայր չէր ունեցեր: Ձարդէն ազատեր էին: Խոտ էին կերեր, ծաբաւ մնացեր, ցնցոտիներով, արիւնած ոտքերով անցեր էին երկրէ երկիր: Միշտ հալածուած, անտէր, օտարական, ուղքատ: Ձղուելի էր կեանքը: Ձէր արժէր ապրիլ: Վասն ինչի՞: Կոբլը կորսուած էր: Ձափահասութեան հասած էր առանց մանուկ ըլլալու: Ասիկա մեծագոյն ողբերգութիւնն է: Ծեր կը զգար, հազար տարի:

Տրտում է անձն իմ մինչ ի մահ:

Դարեր առաջ, այս խօսքերը ըսուած էին իրեն համար:

– Մայր, – ըսաւ ու կեցաւ:

Ճիշ մըն էր կարծես: Էութեան խորէն բարձրացող զսպուած աղաղակ մը:

– Եթէ չես ուզեր, չեմ երթար:

– Ինչո՞ւ, տղաս, ես ինչո՞ւ արդեւք ըլլամ... Գու գիտնալիք բանդ է... Դուն ինձմէ լաւ գիտես...

Այս խօսքերուն տակ դառնութիւն կար, ոչ բարեկամական կեցուածք մ'իսկ...

– Մայր, այդ չէ բռնած... Ըսել կ'ուզեմ... Եթէ իսկապէս երթար ցաւ պիտի պատճառէ քեզի... Ըսել կ'ուզեմ... Եթէ երթամ առանձին պիտի մնամ... Ո՞վ պիտի...

Ձկրցաւ շարունակել: Ձայնը դողաց, կոկորդը սեղմուեցաւ, արցունքը խուժեց դէպի աչքերը, – զսպեց պայն ճիգով մը:

Ծանր լռութիւն տիրեց: Մայրը կ'աշխատէր ջղային մատներով: Հանդարտ կ'երեւէր, բայց մորթին տակ խռովքներ կը շարժէին:

– Մայր, – վերսկսաւ տղան ու կեցաւ կրկին:

– Ինչո՞ւ բան չես ըսեր:

Մայրը դադարեցուց աշխատանքը, նայեցաւ տղուն աչքերուն:

– Ձաւակ, ինքզինքդ մի չարչարեր: Ըրածդ չիտակ է: Ի հարկէ, չեմ ուզեր, որ երթաս, բայց քու բրածդ է ճիշդը: Ձեմ ուզեր, որ ես արդեւք հանդիտանամ ապագայիդ: Ի հարկէ, զժուար պիտի ըլլայ առանց քե...

Ձկրցաւ շարունակել: Արցունքները ժայթքեցին վեր, վեր, բայց զսպեց զանոնք, ակունքները սեղմեց, շրթները պինդ պրկած մնաց պաշ մը, ապա շարունակեց շատ հանդարտ.

– Ձեմ ուզեր, որ արդեւք ըլլամ ապագայիդ: Այլապէս, խիղճս զիս պիտի տանջի: Թերեւս այդքան ալ զժուար պիտի չըլլայ: Աստուած համբերութիւն եւ ուժ պիտի տայ: Ինչպէս Յակոբ սպասեց Յովսէփին, պիտի սպասեմ քեզի...

Ազգականները պատասխանեցին ուղարկելով իրենց լէքերը: Ճամբու ծախսը, աւելիով, պատրաստ էր արգէն:

Թագուհին հետ ժողովի նստան սմէն գիշեր: Ան էր իր խորհրդադատուն: Առաջին անգամն էր, որ երբ դժուարութիւն ունէր, փոխանակ մօր, ուրիշի մը կը դիմէր: Մայրը կողմ էր այս խնդրին մէջ եւ չէր ուզեր նստակել եւս խռովել զայն:

Մայրը դերձակուհին գացած էր զործ յանձնելու, իսկ Նազիկը, չեա դիտեր ինչ հրաշքով, տունէն բացակայ էր: Հանդուցեալ Մայրիկին տեղ այր եւ կին մը եկած էին: Սուսիկ փութիկ մարդիկ էին եւ ուրիշին զործին չէին խառնուէր:

Հայկական յատկանիշ մըն էր այդ. Հայերը ինքնուսույզ էակներ են: Կ'ուրբին ներքին աշխարհին մէջ: Ներկան քիչ կը հետաքրքրէ զանոնք: Ներկան անորոշ է, անբաղձալի, անցաւոր: Հայը ունի միայն անցեալ եւ ապագայ: Ներկայի մէջ չ'ապրիր բնաւ: Միշտ դարձած է դէպի ներքին լոյսը:

Լեւոնի բաղձանքն ալ այդ էր. առանձինն մնալ Թագուհին հետ: Սրկը կը հասնէին արաղօրէն, ժամանակը ենթադրական կ'էր: Ամէն անհատ ունի իր կշռոյթը, Հիմա որ պիտի մեկնէր, աւելի անհամբեր տենդ մը բռնած էր զինք: Մինակ էր, բոլորովին մինակ աշխարհի ուժերուն դէմ: Մօրն անգամ չէր կրնար բացուիլ: Սիրտը միշտ լեցուն էր, կ'ուզէր պարպրել: Թագուհին միակ ապաստանն էր:

Թագուհին այդ երեկոյ, սովորականին պէս, լուացուած ու փակուած էր իր սենեակը: Դրան վերեւի փոքր պատուհանէն կ'երեւէր լոյսը: Որքան դիտած էր այդ լուսամուտը: Նորահիւս, ծալած ժանեակներ, որոնք կուտութիւն կը բուրեն եւ որոնց ետին բոսոր լոյս մը կը թրթուար: Միայն զուտ մը կը բաժնէր զիրենք եւ այդ զուտը կը թուէր ըլլալ հեքիաթին խորհրդաւոր դուռը, որուն ետին գանձեր, չտեսնուած կայքեր պահուած էին:

Մեղմօրէն զարկաւ: Զարմացաւ իր յանդգնութեանը: Սիրտը տարադ կը զարնէր: Կը վախնար որ, հիմա, մէկը ներս մտնէր եւ տեսնէր զինք: Մեղքի ախորժալի զղայնութիւն մը համակեց զինք: Կրկին զարկաւ, քիչ մը աւելի ուժով, աւելի ջղայնոտ:

— Ո՞վ է, — եկաւ Թագուհին կիտածայնը:

— Ե՛ս, — ըսաւ ողան, միշտ զարմացած իր համարձակութեան:

— Վայրկեան մը:

Անպայման կիսամերկ է, մտածեց տղան, եւ ողնայարէն վար կըրբակ մը վազեց:

Կողանքը դարձաւ եւ զուտը մեղմօրէն բացուեցաւ:

— Մտի՛ր, — ժրմնջ Թագուհի դողալով:

Տղան շմած կեցած էր, ոտքերը գամուած գետնին, առաջին անգամն էր...

— Մտի՛ր, — կրկնեց աղջիկը, — չուտ ըրէ՛ր...

Քայլերը թեթեւօրէն կոխելով, երկուդածութեամբ ու հմայուած, անցաւ խորհրդաւոր դրան սեմը: Դուռը գոցուեցաւ իրենց ետին: Աշխարհէն կտրուեցան: Ատիկա յատկօրէն զգաց: Եւ մէկէն, էութեան մէջ հաղար Զահեր նշուեցին:

Անցած էր հեքիաթին գոց դռնէն:

— Նստէ՛, — բտաւ Թադուհին:

Խօսիլէ աթոռ մը ցոյց կու տար, — նստաւ: Նայուածքը չըմբռնաւ սենեակը: Առաջին իրը, որ դրաւնց իր ուշադրութիւնը — անկողինն էր: Պարզ, գաւառական մահճակալ մը: Ժանեկազարդ չղարչէ վարազոյր մը, որ կիսով բաց էր, ժապաւէնով երկու կողմերը հաւաքուած: Կապոյտ ծածկոց մը կ'իջնէր մինչեւ յատակը, վրան խոշոր վարդեր: Ժանեկէ վարազոյրին բացուածքը կը խորանար ու կը հմայէր աչքը: Անկէ անդին խորհուրդով պատած էր, կարծես երբեք արեւը թափանցած չէր այնտեղ: Առանձին, գաղտուկ աշխարհ մը, ուր ոչ ոք մտած էր: Մեղաւոր, անոյշ զգայնութիւններ արթնցան յուրորէն: Պահուած, դարանակալ իղձեր ցատկեցին ժողովորէն: Թադուհին, ի'ր Թադուհին (վերջը զարմանքով յիշեց սեփականութեան այս զգացումը), հոն, այդ կիսամութ աշխարհին մէջ է, որ կը փթթէր, կը լինար, ամբողջովին ինքզինքն էր: Իր կատարեալ անձը: Եւ այդ անձը չըմբռնուած էր զինք հիմա, տաք ալիքներով զրկած էր մարմինը եւ ամէն կողմէ կը մօտենար, կը դպչէր, կը սեղմուէր իրեն:

Աղջիկը կը զգար ինչ որ կ'անցնէր տղուն հոգիէն: Մարդկային լեզուն անկառար միջոց է դեռ: Աչքը եւ անոր հրամայող բնազդը կը թափանցեն աւելի խորունկը: Աղջիկը կը զգար այն ինչ որ տղան կը յուզէր եւ կարծես զգեստները հետզհետէ կը քաշէին իր վրայէն եւ մինչեւ հիմա պահուած մարմինին մերկութիւնը կը քողազերծուէր օտար նայուածքներու:

— Դարեւոց ո'ւր, ալ կը բաւէ՛, — պուաց բիրտ, զրեթէ վայրագ ձայնով մը ու տնմիջապէս ամչաւ, շիկնեցաւ ու կախեց գլուխը:

Տղան ընդոտտ արթնցած էր կախարդանքէն: Կարմրեցաւ ու գլուխը կտրեց, նոյնպէս: Ամօթի, յանցապարտութեան եւ նողկանքի զգացում մը տանջեց սիրտը: Ինչո՞ւ աշխարհ եկած էր: Ամէն կողմէ պաշարուած, թակարդի մէջ ինկած կենդանիի մը պէս զգաց: Ձէր կրնար փախչիլ:

Աչքը միայն յանդգնեցաւ շրջիլ:

Անկողնին վերեւ, գլխուն կողմը, փողոկիւն խաչ մը կախուած էր: Երուսաղէմէն բերուած, անպայման:

— Մեղայ Տէր, մեղայ...

Գրառեղանին վրայ դարսուած տետրակներ ու զրօքեր, կաղամբ ու լուսամփոփ մը՝ վառած: Ըստ երեւոյթին, սրբազրութիւններ ընելու վրայ էր, երբ դուռը զարկաւ: Երանի դուռը զարկած չըլլար: Ատկէ սկըսաւ ամէն ինչ: Ի՞նչ յիշուր էր: Ի՞նչ դործ ունէր հոս: Հիմա, կ'ուզէր մեկնիլ, չէր կրնար: Ձէր գիտեր ինչպէս: Սատանան տանի երիտասարդութիւնը:

Գործով պատած տիւան մը, հայելիով պահարան, դետինը արեւալեւան մէկ ուրիշ դորգ, որուն տիրող գոյնը կարմիրն էր, իր սիրած դոյնը: Սեղանին վրայ երիտասարդի մը նկարը: Աչքերը գամուեցան: Մօտի ծաղկամանէն ծաղիկէ թերթեր ինկած էին նկարին առջեւ: Նիհար, տըժ-դոյն դէմքով երիտասարդ մըն էր: Սուր, հասու կրակ մը ճեղքեց սիրտը: Նախանձ: Անպայման:

— Գոհացա՞ւ հետաքրքրութիւնդ, — հարցուց Թադուհին, մեղմօրէն ժպտելով: Վերաւորուած ամօթխածութեան եւ ընդվզումին յաջորդած էր հպարտութեան ուրախ հեշտանք մը: Այս տղան — երեւակայութեան մէջ —

տեսած էր իր նուիրական մարմինը մերկութեանը մէջ եւ ինք տոժմ չէր
ամջնոր ատոր համար, մինչեւ իսկ — ի մեծ դարմանք — ուրախ էր: Կը
զդար, որ ոչինչ պիտի կրնար պահել անկէ: Այս երկչոտ, սեւ աչքերով
պատանիէն:

Լեւոն ուշքի եկաւ, դառաւ իր բնականոն վիճակը:

— Օ, ներողութիւն, օրիորդ, ի՞նչ յիմար եմ... ներողութիւն...
Պատճառը... Գիտէ՞ք, առաջին անգամն է եւ... ներողութիւն, չտեսի մը
նման...

— Ոչինչ, մարդկային է:

— Պատճառը տոյն է, որ... կ'ուզեմ անկեղծ ըլլալ... Այդ նազիկը
այնքան խօսած էր... որ...

— Որ... ոչ մէկ տորօրինակութիւն... Ոչ մէկ խորհրդաւորու-
թիւն...

Տղան ժպտաց:

— Ճիշդ այդպէս... Արդէն գիտէի...

— Ի՞նչը:

— Որ սովորական սենեակ մըն էր... Ըսել կ'ուզեմ... արտառոց
ոչինչ կրնար ունենալ... միայն կսկիկութիւն եւ մաքրութիւն... ձեր ան-
ձին պէս...

Ու մէկէն.

— Բայց ես պէտք է մեկնեմ... արդէն

— Նստէ, — ըսաւ աղջիկը, զրեթէ հրամայական, — Թող խօսին,
արդէն կը խօսին... Հոգս չէ... Օրերը կը հատնին... չուտով կը մեկ-
նին...

Աչքերը հանդիպեցան, բռնուեցան իրար մէջ, պլլուեցան իրարու:
Գիտինը անկայուն դարձաւ:

— Միայն դու կայիր... Հիմա դուն ալ պիտի մեկնես...

Խոստովանանքի նման արտայայտութիւն մըն էր: Տղուն ոտքերը
կտրուած էին դետնէն: Նայուածքը չէր կրնար հեռացնել Թադուհիէն:

— Պիտի յիշե՞ս զիս, — ըսաւ աղջիկը, — եկուր մօտս նստէ, հո՛ս,
նստէ... Պիտի յիշե՞ս զիս...

Ձայնը խորերէն կու դար, քաղցր, քաղցր վայրերէ: Անցած էր
հեքիաթին դռնէն:

— Ի հարկէ, ի՞նչպէս կրնամ մոռնալ քեզ...

Ինք չէր խօսողը, ուրիշ մըն էր, իր մէջ: Հմայուած էակ մը, քաջ
ու յանդուգն, ձիաւոր ասպետ, որ անմահութեան ազրիւրէն խածած ժա-
մանակ, դուռին մէջ տեսեր էր հուրիին դէմքը եւ խաղաղութիւնը կտրուե-
ցուցեր:

Մարմինը պարապին մէջ չէր այլեւս, ջերմութիւն մը հեշտանքով
զրկած էր զինք ամէն կողմէ եւ ականջին արգիւրուած խօսքեր կը փսփսար:
Անհունը կծկուած էր, տիեզերքն համակ հաւաքուած՝ սեղմած էր
զինք:

Անցած էր հեքիաթին դռնէն:

Բաժանումը մօրմէն շատ դժուար եղաւ:

Առաջին անգամն էր, որ պիտի բաժնուէին: Իրարու փարած էին

աւելի, քան սովորաբար կը կապուին մայրերն ու որդիներ: Իրարմով կ'ապ-
րէին եւ, կերպով մը, իրարու համար կ'ապրէին:

Տէր Զօրն իսկ չէր կրցեր պահել որդին մօրմէն եւ հիմա, խաղաղ
պայմաններու մէջ, կետնքը... Կարելի էր ըսել, որ Լեւոն զաւակէ մը տ-
ւելին էր մօր համար: Երկար եւ բարդաւանդ դերդաստանի մը, — որուն ար-
մատը կը կորսուէր ժամանակի մշուշին մէջ, — վերջին եւ միակ շառաւիղն
էր: Անունը, արեան դինը, տեսակը պէտք է շարունակուէին: Եւ այս հնա-
մանի կէնը, թէեւ արտաքուստ չափաւոր, երբեմն՝ անտարբեր իսկ, ներք-
նապէս տղուն վրայ կը դողար: Մասունքի, նուիրական աւանդի մը պէս
կը դուրդաւար: Երկիւղած, կրօնական զգացումէ մը զուրկ չէր այս սէրը:
Արեւելքը լաւ կը ճանչնայ այդ զգացումը:

Աւանդ ըսի, այո, դարաւոր պատկամ մը, խորհուրդ խորին, որ
իր ձեռքն էր հիմա եւ, քանի ուշ չէր, վայն պէտք էր փոխանցէր որդւոյն,
որ չմարի, չկորսուէր ժամանակին մէջ: Յեղի մը սիրտը կը տրոփէր այդ
աւանդին մէջ, խտացած ու բիւրեղ:

Քանի օրերը մօտենային, մօր սիրտը կը հատնէր: Գոյնը աւելի կը
դեղնէր, աչքերուն լոյսը կը մաշէր: Աղօթելէն ծունկերը կը ցաւէին եւ
լուռը կը պակսէր: Գիշերն ի բուն արցունքները կը հոսէին լուսեայն:
Վերմակը դուրսը կը քաշէր ու կ'արտասուէր, սրպէսդի տղան չլսէ: Որքան
արցունք կար այդ մարմնին մէջ, ինք իսկ կը զարմանար: Ի՞նչ խորունկ
եւ յորդ ազունքէ կը ցայտէին:

Միշտ առաւօտները կ'արթննար յոյսով լեցուն: Երբ աչքերը բա-
նար ու տեսնէր լոյսը, որ պատուհանէն շեղակի կը թափանցէր, հաւատ-
քին դանդերը կը հնչէին: Կը դօրանար, կ'ամբապնդուէր:

Հիմա, կը վախնար լոյսէն: Սմէն առաւօտ նոր օր մըն էր եւ թեւը
կը հատնէր:

Քով քովի ծնկաշոք կ'երգէին.

«Առաւօտ լուսոյ

Արեգակն արդար»...

Բայց սրտին տարակոյսը կը սողոտկէր: Կը զարմանար, մեղքի ըզ-
գացումով խառն ահ մը կը տուտոյտէր դինք, երբ կը մտածէր՝ թէ լոյսն
ալ միշտ հրաշագործ չէր: Կ'ընդմիջէր թերահաւատութեանը վրայ: Այն օ-
րերուն, Տէր Զօրի սպանդանոցին մէջ իսկ, լոյսը կը ճառագայթէր աչքե-
րուն առջեւ եւ անպարտելի կը դարձնէր դինք: Գիտէր, իբրեւ պարզ իրո-
դութիւն, որ որդին պիտի ապրէր: Վերջինը, Բենիամինը ցեղին, պիտի
ապրէր: Չէր կրնար չապրիլ:

Իսկ հիմա՞:

— Մեղա՛յ Տէր, դի հաւատքիւ բոցը կը դողայ եւ մարմինս տկար է:

Ալ չէր կրնար դիմանալ: Բաժանումին մտածումը քանդած էր բո-
լոր դիմադրական ամբուսթիւնները: Առտին անդամ ըլլալով կը դիտակ-
ցէր՝ թէ ի՞նչքան տկար էակ մըն էր: Կը զարմանար անցեալի իր տոկոս-
նութեան:

Ի վերջոյ, ուրիշ տպաւէն մը շունչէր աշխարհի վրայ: Անիկա իր
արեւն էր, լուրը, օդը, լոյսը: Առանց անոր ինք գոյութիւն չէր կրնար
ունենալ: Անոր բացակայութեան գաղափարն իսկ ծուռկերը կը կթոռէցը-

նէր, որտեղ տրոփինը կը դանդաղեցնէր, աչքերը կը մթնէին եւ մարմինն համակ կը տատանէր:

— Տէ՛ր, մեծ է զօրութիւնդ, հաո՛ր մեղաւորեա...

Տղան ալ կը տառապէր, անոր վիճակը աւելի լաւ չէր: Այդ կը տեսնէր մայրը եւ առաւել եւս կը տանջուէր: Ի վերջոյ, բախտ մըն էր, որ կը բացուէր... Պիտի կրնար ուսանիլ, մեծնալ, նշանաւոր մարդ մը դառնալ... Ընդունակութիւններ ունէր... Պիտի հպարտանար իրմով... Յետոյ, ի՞նչ իրաւունք ունէր... Խիղճը պիտի տանջէր պինք, երբեք պիտի չնհրէր ինքզինքին... Եսասիրութիւն չէ՞ր իր ըրածը... Կ'ուզէր զաւակին ապագան զոհել իր երջանկութեան... Եսասիրութիւն չէ՞ր ասիկա...

Բայց մտածելը մէկ բան էր, ապրիլը՝ ուրիշ: Դիւրին էր խօսիլը: Ի վերջոյ, ինչպէս յունական ողբերգութիւններուն մէջ, Աստծոյ կ'ապաւինէր: Deus ex machina... Եղածը շատ էր իր նախնական ուղեղին համար: Արեւելքը ճակատադրապաշտ է:

— Այո է եղեր ճակատագիրս: Գրուածը դրուած է: Ամէն ինչ իր վախճանին պիտի հասնի:

Տղան կը ճգնէր Արեւելքը թօթափելու: Ժակատագիրն ի՞նչ է: Ամէն ժարդ ինք կը կերտէ ճակատագիրը: Կ'ըսէր, ինքն ալ չէր հաւատար ըսածին: Կարելի չէր ուրանալ գոյութիւնը Նախախնամութեան, որ կը տնօրինէր մարդոց ճակատագիրը: Եւ սակայն, Արեւելքը զանազանութիւն մը կ'ընէ Աստծոյ եւ Ժակատագրին միջեւ: Ժակատագիրը վճիռն է եւ վճռողը:

— Հոգ տար դուն քեզի, տղաս, պաղ չառնես... գիշերները վրադ լաւ ծածկէ... ես քովդ պիտի չըլլամ, որ հակեմ վրադ... Հոն շատ ցուրտ է կ'ըսեն... դուն վարժուած չես... Ս. Սարգիսը քեզի պահապան... Ա՛խ, տղաս, պարտաւ աշխարհ է եղեր... Կարծես մինչեւ հիմա չեմ գիտցեր... Այսքան տարի ապրեր եմ եւ... Միայն մէկ ինչորանք ունիմ, մէկ հատիկ դաւակ, նամակնիւրդ մի ուշացներ:

— Հոգ մի ընէր, մայրիկ ջան, չեմ ուշացներ...

— Բուրդը վրայէդ մի հաներ... Այո խաչն ալ միշտ չապիկիդ գընդասեղէ, վրայէդ մի հաներ... Ս. Երուսաղէմէն եկած է... Պիտի պաշտպանէ քեզ գրահի մը պէս... Վրայէդ բնաւ չհանես...

— Ձեմ հաներ, մայրիկ...

— Յետոյ, ազգականներդ գտիւր եւ դնա տես, կթէ կրնաս... Ըսէ, որ հոկեն վրադ, ինչպէս իրենց պաւակներուն... Ձեմ կարծեր, որ չմեռած մէյ մըն ալ տեսնեմ գիրենք... Իմ կողմէս համբուրէ բոլորը... Անոնք բախտաւոր եղան... ազատեցան... Եթէ դպրոցէդ հեռու են, գտիւր, փընտռէ Հայեր եւ անոնց դնա... Ազգդ, լեզուդ, հաւատդ մի մոռնար...

— Ծառ լաւ, մայրիկ:

— Աղջիկներէն, օտար աղջիկներէն, հեռու կեցիր... Ձըլլայ որ մէկուն ճանկը իշնաս... Ատկէ շատ կը վախնամ, զաւակս... Կը խենթենամ... Անոնց լեզուն մեղրի պէս քաղցր է եւ աչքերը թունաւոր նետեր ունին... Ձգոյ՛՛՛՛՛՛ կղիր... Խաչիդ ապաւինէ...

Լայն շունչ մը առաւ: Ձգալի է, որ յուզումը եւ ֆիզիքական ճիղը կը սպառէին դինք:

— Նայէ, տղա՛ս, վաղըան տէրը Աստուած է... Ան միայն գիտէ, թէ երբ պիտի հնչէ ժամը, ինչպէս Ս. Դիւրեն ալ կ'ըսէ... Մէկ պատուէք

ունիմ... Եթէ ինծի բան մը պատահի... Քու աղպէդ, արիւնէդ աղջիկ մը առ... Արիւնը չի դաւաճաներ... Եւ Հօրդ առնը, օճախը վերականգնէ... Քու աղպէդ... Ականջիդ օդ բրէ... Որպէսզի Հօրդ եւ իմ սակորներս դերեզմանին մէջ հանգիստ ննջեն...

Տղան աչքերը լեցուեցան.

- Ինչե՛ր կ'ըսես, մայր...
- Խոստացի՛ր, աղաւ, խոստացի՛ր...
- Կը խոստանամ...
- Ս. Գրքին վրայ...
- Ս. Գրքին վրայ.
- Եղիցի կամք քո...

❖

Շողենաւը սուլեց ուժգնօրէն: Լեւոն ցնցուեցաւ: Մայրը շողենաւ չէր եկած: Ուզած էր ասն շեմին բաժնուիլ: Քարափի բաժանման պիտի չդիմանար: Այսպէս, կարծես, առաւօտուն կը մեկնէր դործի, Երեկոյան վերադառնալու համար. պիտի վերադառնար, այդ ապահովութիւնը ունէր: Բայց քարափներու մեկնումները իրական են եւ սիրտ կը պոկեն:

Տան շեմին համբուրուեր էին, իրարու խելայեղօրէն փաթթուած, երկարօրէն ողջագուրուեր էին: Տղան համբուրեր էր մօր ձեռքը եւ մայրը, ալ ձեռքը որդւոյն գլխուն դրած, զայն օրհներ էր:

- Աստծոյ աչքը վրադ պահապան... Յաւ չտեսնես... Աստուած չար աչքէ եւ փորձանքներէ պահէ քեզ... Ծնորհներդ աւելցնէ... Իր իմաստութիւնը պարզեւէ քեզի... Մեծնաս, ուռճանաս, կանաչիս...

Ապա արագ իջեր էր աստիճաններէն: Դռնէն չեւած, դուռը դարձուցեր էր վերջին անգամ: Աչքին առջեւ էր դեռ, այնպէս իրական, այնքան մօտ, կարծես կրնար դաշիւ անոր:

Բայց եւ այնպէս, մայրը բարձր էր եւ հեռու, իրեն համար անհասանելի: Կանգնած էր ասնդուռին դուռը, ձախ թեւով կոթնած բազրիքին, իրանը ծռած առաջ, արցունքները առատ կ'իջնէին:

- Աստուած հետդ, դաւա՛կա...

Գլխուն շուրջ ճերմակ լոյսեր կը պտտէին:

Շողենաւը վայրագօրէն սուլեց:

Նազիկը, որմէ չէր ախորժեք եւ որուն հանդէպ համակրանք բնաւ չունէր, արտասուէն աչքերն էր թափեր հրաժեշտի պահուն եւ, խանդաղատանքի նուայի մը մէջ համբուրեր էր իր ճակատը:

Միայն Թաղուհին եկեր էր մինչեւ քարափ: Թաղուհին ցանկացեր էր եւ մայրը քաջալերեր էր, որ բնկերանայ օրդւոյն:

- Զաւակս որբի պէս չղզայ վերջին պահուն, դռնէ դուն, աղջիկս, ճամբու դիր որդիս, մեր ամէնուն կողմէ...

Թաղուհին հետ կառք մըն էին վարձեր եւ քով քովի նստած՝ եւ կեր էին քարափ: Աղջկան ներկայութիւնը մեծապէս թեթեւացուցեր էր իր խռովները: Մինակ՝ պիտի ճաթէր: Թաղուհին ընկերակցութիւնը երապ

նազին բան մըն ալ ունէր: Մօրմէն բաժանումին կսկիծը կը տիրապետէր ամէն ինչի, բայց, անոր առջեթեր, աւելի ցած, կը հծծէր, նաեւ տխրութիւնը թագուհիէն բաժանումին:

Կառքին մէջ, — կը զարմանար համարձակութեանը, — ձեռքը փնտռեր էր աղջկան ձեռքը եւ դայի առեր էր մատնելուն մէջ: Աղջիկը չէր քաշեր ձեռքը, նայեր էր աչքերուն: Լռութիւնը ըսեր էր եւ հասկցեր էին իրար: Հոգիները մերկացեր եւ ամօթի ու մեղքի զգացումը չքացեր էր:

Ամբողջ ճամբան դրեթէ չէին խօսեր: Քարափը, երբ հասեր էր պահը նաւ բարձրանալու, աղջիկը փղձկեր էր մէկէն: Ալ անկօր էր եղեր զսպելու բարձրացող ալիքը:

— Լեւոն, ջան Լեւոն...

Ոտքը մնացեր էր կիսաւարտ: Մնացածը կեանքը լրացուցած էր: Արդէն ըսուած էր ամէն ինչ: Եւ, աճապարանքին մէջ, շնորհալի շարժումով մը, որ մաքուր էր եւ ազնուական, թեւերը մեղմօրէն պլլեր էր ազուն վը՝ դին եւ չրթները հազիւ հպեր էին այտին: Այդ թաւհեայ շոյանքը դեռ կը յամենար:

Ինք շփոթած, ձախաւեր, գրկեր էր պայտասկները եւ բարձրացեր նաւուն սանդուխները:

Արդէն օրինական արգելքները բաժնած էին դիրենք:

Հիմա կը դիտէ վերէն, հաւուն կողին կոթնած: Ժամանակը շփոթած է, չդիտէր ո՛ր է եւ ե՛րբ: Այն պահն է, երբ լոյսն ու մութը կը կըրտւին, ժամանակը չէզոք է: Անտարբեր կը սպասէ, որ կողմերէն մին յաղթանակէ եւ ժամանակը մտնէ հունին մէջ:

Ցանկարծ, թեթեւ տատանում մը ոտքերուն տակ: Նաւը սկսեր է հեռանալ քարափէն: Հաստ պարանները արագ կը նետուին, ջուրին մէջ ճողփալով:

Սպան խաւերէն հրամաններ կ'արձակէ: Ուարիսին շղթաները ճնշելէն, արագօրէն կը քաշուին:

Թագուհին, ամբողջն հեռու, կեցած է արձանի մը նման անշարժ: Ազնուական, հանդիսաւոր բան մը ունի: Ամբողջն տարբեր, ինք իր մէջ աշխարհ մը: Երբեք չէ գիտակցած, որ այդքան սլացիկ հասակ մը ունի:

Ի՞նչն է, որ դինք կը կապէ անոր: Մէ՞րը: Թերեւս: Բայց կը զգայ, տարտամօրէն, որ այս արագօրէն հեռացող եւ փոքրացող աղջկան եւ իր միջեւ ուրիշ խորունկ կապ մը եւս կայ: Օր մը, աւելի ուշ, պիտի ըմբռնէ այդ կապին էութիւնը:

Թագուհին կէտի մը վերածուած է ու մէկէն կը հալի: Երկինքը կը լայննայ, կը կամարուի անհունօրէն:

— Թագուհի'...

Երթները պինդ փակած է: Բառը թռաւ ներսը: Զսպուած ճիչ մը: Հովերը առին ու տարին զայն:

Քարափի չէնքերը, երկար միջերանոցները, մաքսառան թուազերեալ կառույցները, — առաջաստներ, կայմեր, միացող շոգենաւեր արագօրէն կը նահանջեն:

Ետին, տունները իրարու վրայ դարսուած, երբեմն փայլատակող պատուհաններով, կը սեղմուին իրարու, կը կծկուին: Տեղ տեղ մղկիթի մը աշտաբակը դեռ կը ճգնի վիզը բարձր բռնել, բայց երկինքը իր հսկայա-

կան զանդուածով կը տարբարուածէ, կը ճշէ ու կը տիրապետէ ցամաքին:

Հո՞ն, հոնտեղերը, այդ շէնքերու ետին, տեղ մը, մեր տունն է, կը մտածէ: Եւ մայրս հոն է: Այլեւս չի լսեր զիս: Ի՞նչ խենթութիւն: Մայրքս թողած կը փախչեմ: Ի՞նչ յիմարութիւն:

Ձուրը կը դալարուի, յորձանքներ կը կազմէ, փրփրած իր վրայ կը դառնայ ու ճերմակ զիծ մը միայն, որ քիչ վերջ պայծառութեան մը կը փոխուի:

— Մայր, մայր...

Այո երեկոյ, սովորականին պէս, տուն պիտի չվերադառնայ: Դուռը բանալով ներս պիտի չմտնէ իրենց տունը, մօր դէմքը պիտի չտեսնէ...

Մայր, մայր...

Քաղաքը զիծ մըն է միայն հիմա: Անսահման երկինք եւ ծով: Ի՞նչ խենթութիւն: Վայրագ, բուռն փափաք մը ունի նետուելու ծով եւ դառնալու, քանի ուշ չէ: Թաւալող յորձանքները պարտափ կ'աղկեն, կը ժպտայ միամտութեանը վրայ: Այլ կամուրջները քանդուած են: Մայրը միւս ափը մնաց, մինակ, լքուած: Արդեօք պիտի միանա՞ն կրկին:

Եւ ահա, բաժանումի երկար պահէն ի վեր, առաջին անգամ ըլլալով, արցունքները կը ժայթքին:

Հիմա կը յորդի խաղաղարեւ արտասուքը: Ճնշումը կ'էնթայ, կը կաղզուրուի, աչքերը կը դառնան առաջ, դէպի տնայտէր, ուր կը սուրայ նաւը:

Օրհնուի արցունքը:

Մեկնողը շուտով կը մոռնայ ինչ որ կը լքէ, կը նայի առաջ:

Բ. Կ.

(Շար 3)

ՍԻՐԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Քո երգերի անուշահայն բառերի տակ ահեղնագուշ,
Այս օրերում՝ իմ երգերի բռնընդհատ զգում նորաբողբոջ-
Հառաչաներիդ ու վերջերիդ ծալքերի տակ հոգեհմայ՝
Թախծեմներես ծիրն եմ տեսնում նորէն նստած սրտիս վրայ...

Էն ցառով՝ որ տառապում ես ու արցունքի շիթեր քափում,
Հեռուից-հեռու թեժ կրակը հեկեց նայն ցառով մեզ է լափում...
Մեր սրտի լուռ մորմոռներին խառնել եմ հին լացը հայի,
Ու սպասել լուռ կարօտով՝ թե ե՞րբ Աստուած մեզ կը նայի...

Թե ե՞րբ Վանայ վանք ու Վարազ խնկարուժումն Կիտի ծխան,
Թե ե՞րբ Սիփան սար կը ելնի՝ քաղաքի ու հերոս տղան...
Թե ե՞րբ Մասիս լանջերն ի վեր կը կառուցուի բերդ ու ամրոց,
Թե ե՞րբ կը տան մեր երազած ու միացեալ հոգերն հայոց...

Ա՛յն, որ այսօր պահանջում ես մրմուռալար սրտիդ կանչով՝
Որ պանդուխտը վերադառնայ Արագածի կանաչ լանջով,
Որ հեռաւոր հորիզոններ չ'անեն հային մեր խեղդամահ,
Որ հայը միշտ Հայաստանում անյաղթելի ու հա՛յ մնայ...

Հեկեց նայն հայն էր, որի սիրտը բողբոջում էր հայակեզու. —
Նրա սիրտը՝ բառերի պէս, բողբոջի պէս թով. Շիրազու...
Ինչպէս դո՛ւ ես պայքարների առողջաձայն հովը լիզում,
Դեռ քառասուն տարի առաջ մեր հոգին էլ ա՛յդ էր յուզում...

Հեկեց նայն հա՛յն էր, էն եղբայրը՝ որ մինչեւ վերջ կաթիլն արեան
Պատրաստուած էր գոհել յանուն հայրենիքի ազատութեան...
Ու այսօր էլ քեզ հետ սրտանց կանգնած է նա ամբիոններում
Նո՛յն բողբոջի, նո՛յն կանչերի «կարգախօսը» երակներում...

Ինչո՞ւ, ընկե՛ր, այդքան յուզիչ գարմանում ես ու վշտանում՝
Թե՛ հայն ինչո՞ւ օտար երկրում հայոց լեզուից օտարանում...
Էն ո՞ր երկրում համասփիւռ հայը յաւէտ հա՛յ մարմնացաւ, —
Էն ո՞ր հայը հայրենասէր՝ դառանալով իր մոռացաւ...

Թե ճի՛շդ են էն խօսքերն, անգի՛ն, սրտից բխած, մարգարտաշար,
Ինչպէս ասէն երգերիդ մէջ տեսել եմք էն սիրտն անկաշառ,
Ապա լսեղբի՛մ, կանչի՛ր դու ինձ, կանչի՛ր հոգըն իմ հայրենի,
Որ օտարի հոգում այսօր իմ քաջ վերքը էլ չարիւնի...

ԱՐՇԻ

1963 թ. Յունուար 12

Թեհրան

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԱՇԼԵԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՐՄՐԵԱՆ

Գաբրիել Գաբրիելյանն կը նկարագրէ վիճաբանական դասախօսութիւն մը, իսկ ամեն յաջորդող յմընոյքը, մասնաւորապէս ծանրանալով Երուանդ Օտեանի ու Յարութիւն Մարտիանի մասին:

— Առաջին աշխարհամարտէն սանկ տարիուկէս մը ետքը, Ձինադադարի ընթացքին, երեկոյ մը, Պոլիս, Բերայի Շիրակ ձամբուն — յունարէն ձիւնօ Տրոմօ», ու թրքերէն «Տոգրու Նոյ» — վրայ կը սլքտայինք՝ բարեկամներէս Ժողէֆ Թընկըրը եւ ես: Մեր երկուքին ալ սիրտը կը նեղուէր. մեր ձանձրոյթը փառատելու համար, հանդիպիլ կ'ուզէինք համակրելի բարեկամներու, որոնք կարծէք խօսք մէկ ըրած ու աներեւութացած էին:

Օտէոն թաւրոնին առջեւէն մեր անցած ատեն, առաջարկեցի.

— Եկուր, Թընկըր, թատրոն մըտնենք. թերեւս կը գտնենք քանի մը ծանօթներ:

Մտանք: Ներկայացուած խաղը չորս հինգ անգամ արդէն տեսած էինք, ու դեղարուեռտական ոչ մէկ վայելք ունէր, որպէսզի հանդիսատես ըլլայինք անգամ մը եւս:

Պէնդեանի խուճին էր: Կը ներկայացուէր արեւելեան կատակերգութիւն մը, որուն մէջ մտցուցած էին քանի մը եւ-

րոպական եղանակներ, ու չիւած էին կեղծ օփերէթ մը:

Բազմութիւն ալ չկար: Պարապ էր սրահը՝ կէսէն շատ աւելի:

Մեր նայուածքները բեմին ուղղւած ըլլալէ հետեւ, մեր շուրջն էին: Ոչ մէկ ընկեր:

Յանկարծ, մէկը մեզի մօտեցաւ ու կարծէք դիտնալով մեր մտադրութիւնը՝ ըսաւ.

— Բեմէն կու գամ: Բեմին տակը, զարդախուցի մը մէջ նստած, Երուանդ Օտեան ու Շաթիրեան Լեւոն քոնեաք կը խմեն...

Ժողէֆին ըսի.

— Միջնարարին բեմին տակը երթանք, մեր կոնծարանները տեսնելու:

Բարեկամս այդ առաջարկս ալ ընդունելով՝ ըսաւ.

— Դասախօսութիւն մը կազմակերպենք ու սա Օտեանը խօսեցնենք:

— Ի՞նչ կ'ըսես... Ան խօսող չէ: Եթէ բեմ ելլէ՝ երկու բառ իրարու քով չի կրնար դնել:

— Կրնայ ըլլալ. բայց խնդիրը կը փոխուի, երբ նիւթը Գինին ըլլայ:

— Ձեմ կարծես որ ատանկ առաջարկ մը ընդունի:

— Պիտի տեսնես որ պիտի ընդունի: Դասախօսութիւնն ալ վիճաբանական

կ'ընենք: Ճուրճիմա...: Կը հրաւիրենք քանի մը հակալքութեան մտաւորականներ ալ: Դասախօսութենէն ետքն ալ կը սարքենք փառաւոր կերուխում: Մախսերը ինձմէ:

— Բայց այն ժամանակ, ամէն մարդ ներկայ ըլլալ պիտի ուզէ այդ վիճարանական դասախօսութեան, քանի որ կերուխում կայ ձրի:

— Ատանկ բան մը՝ նիւթադէս անկարելի է, ամէն կերպով: Բարեկամս, մուտքը պիտի ըլլայ հրաւիրատուով:

Մեր շուրջը գտնուող քանի մը հանգիստատեաները դժգոհութիւն յայտնեցին, մեր խօսակցութեան համար:

Իրաւունք ունէին լռեցիք ու սպասեցիք վարաւորի գոցուելուն, բեմին տակը խորանալու համար:

Երբ արարը վերջացաւ, մենք խոյացանք դէպի բեմ, կողմնակի դռնակէ մը: Հասարակութիւնը կարծէք մեր դէպի բեմին յատակը ուղղուելէն էր որ կը ծափահարէր:

Առանց մէկուն բան մը հարցնելու, տնեցիք մը նման իջանք սանդուխէ մը վար, որ կը տանէր բեմին ներքեւ:

Ճիշդ էր, խցիկէ մը մէջ գտանք Օտեանը, որ նստած էր, կը նմանէր Հին յոյն փիլիսոփայի մը, որ իր աւագ ու սիրելի աշակերտին, Լեւոն Շաթրեանին հետ կը խօսէր ժպտերես: Անդամիկի մը վրայ էին քոնեաքի պատկանելի շիշը ու երկու գաւաթներ:

Օտեան երբ մեզ տեսաւ՝ բացազանչեց.

— Օ՛... հրաժեցէ՛ք, հրաժեցէ՛ք...

Ու դառնալով Շաթրեանին ըսաւ.

— Լեւոնիկ, քովի խուցերէն երկու աթոռ ճարէ մեր բարեկամներուն համար:

Երբոր նստանք ու նոյն բաժակներով մէյ մէկ հատ կոնծեցինք, մեր դարմանքը յայտնեցինք, որ բեմին տակ Բագոսի արարողութիւն սարքած են:

Օտեան պատասխանեց.

— Ինչպէս դիտէք, առաջին քրիստոնեաները հալածուած էին, ու իրենց արարողութիւնները եւ հաւաքոյթիւնները կը

կատարէին դետնափոր վայրերու մէջ: Հիմակուան քրիստոնեաներն ալ հեթանոսները կը հալածեն: Մի'նք ալ, ա՛յ սինքն ճէօ քայէ՛նքերս, այդ հալածանքէն խուսափելու համար, դետնափոր վայրի մը մէջ կը կատարենք, մեր բագոսական արարողութիւնը: Վերը ներկայացում, վարը ապագայացում:

Ճիշդ առիթն էր առաջարկութեան ու բարեկամս Ժողէֆ Թընկըր ըսաւ.

— Սիրելի Օտեան, ամէնէն առաջ, մտաւորականութիւնը պէտք է լուսարանել, որպէսզի հալածանքը փոխուի համակրանքի: Գաղափար մը յղացած ենք: Կազմակերպել դասախօսութիւն մը ի պատիւ Գինիին: Եւ որպէսզի աւելի հրահանգիչ ու համողիչ դառնայ դասախօսութիւնը, զայն ընել վիճարանական: Անմիջապէս յետոյ ալ, ի փառս միշտ Գինիին, կազմակերպել խնջոյք մը:

Շաթրեան հարցուց.

— Եւ ո՞վ պիտի ըլլայ դասախօսը:

— Ամէնէն վաստակաւոր, ամէնէն հաւատարմ, ամէնէն գործունեայ խմանը:

— Այսինքն...

— Վարպետ Օտեանը:

Օտեան առարկեց.

— Ես խօսող չեմ. ես խմող ու խընդացող եմ, ինչպէս Շաթրեանն ալ խըմող ու խորհող է:

Ես խօսեցայ.

— Շաթրեանը կ'ըլլայ նախագահ ու կ'ընէ բացման խօսքը: Դուն, սիրելի Օտեան, կ'ըլլաս հեղինակաւոր դասախօսը, որ իր նիւթին տիրած է: Իսկ Յարութիւն Մըմրեանն ալ կ'ըլլայ ընդդէմ ժախսներուն գլխաւորը, իրքեւ հակալքական, բանջարակեր ու քրիստոնեայ: Օտեան կրկին առարկեց.

— Երբ խնդիրը այքովի մասին է, ես կը նախընտրեմ գործել, խօսելէ աւելի:

— Իսկ թէ՛ խօսիլ, թէ՛ խմել չե՞ս ուղեր:

— Ի՞նչպէս...

— Ձէ՞ որ բանախօսին կամ դասախօսին առջեւ գաւաթ մը ընդ կը դնեն... Մենք ալ քու առջեւ սեղանիդ վրայ,

Նուրի տեղ, խոշոր գաւաթ մը օղի կը դնենք: Մէկ կողմէ կը խօսիս, միւս կողմէ կը խմես:

— Հանճարեղ հնարք է, բացառանշէց Շաթրեան, ու մեղի ըսաւ:

— Բացման խօսքը ըրած տոննա ալ այդ օղելից ու բարձր բաժակը զտնուելու է սեղանին վրայ:

Ապա, Օտեանին դառնալով՝ աւելցուց.

— Երուանդ, կը մեղանշես՝ եթէ մերմեռ Գինիին փառաբանելու այս սրբապան հրաւէրը: Ես ալ կ'ըլլամ նախագահ ու կը կատարեմ բացումը եւ փակումը:

Օտեան, ի վերջոյ, ընդունեց: Որոշուեցաւ յառաջիկայ երկուշաբթի, Թոքաթլլիի վերնաշարին մէջ, կազմակերպել վիճարանական դասախօսութիւնը, որմէ յետոյ, ախինքն կէս պիւլերին, պիտի սկսէր խնջոյքը, տեւելով ցայգարաց:

Հետեւեալ օր, լծուեցանք պործի: Նախ խօսեցանք Թոքաթլլիի հետ: Ապա, տպել տուինք յիսուն հրաւիրատում, ընտրեցինք յիսուն հրաւիրեալ, ու պահաւաններու վրայ անոնց հասցէները դրելէ ետքը, յանձնեցինք թղթատարին: Ապա, ապահովեցինք Յարութիւն Մարմըրեանի ներկայութիւնը: Դասախօսութիւնը անուանեցինք «Գովք Գինւոյ»:

Աննախընթաց ձեռնարկ մըն էր: Վրասահ էինք որ ամէն բան պիտի անցնէր յաջող:

2

Որոշուած երեկոն, յիսուն կոչեցեալներէն քառասունըջորս հոգի պատասխանած էին մեր հրաւէրին: Վեց բացականերն ալ խոր ցաւ յայտնած էին, որ գործի կամ առողջական պատճառներով է որ չեն կրցած ներկայանալ: Այդ քառասունըջորս ներկաներուն մէջ, կային թէ՛ ալքոլականներ, թէ՛ հակալքողականներ, թէ՛ կէս ալքոլականներ: Տակաւին կային մարդիկ, ումէն հոսանքէ,

ամէն ասպարէզէ, նոյնիսկ ներկայացուցիչներ կային հովիւունքէ: Որպէսզի աւելի արտայայտիչ ըլլայ ներկաներուն պատկանելի խառնակութիւնը, անաւաստիկ անոնց ցանկը, զոր պահած եմ տարիներէ ի վեր:

— Տ. Սահակ Բհնյ. Փափաղեան, Յարութիւն Մարմեան, Տոքթ. Մասիս, Տոքթ. Զարֆհեան, Տոքթ. Ֆինճոնեան, Տոքթ. Տինանեան, Յ. ձ. Միքսեան, Եղուարդ Գոյանճեան, Յակոբ Տէր Յակոբեան, Հրաչեայ Տէր Ներսէսեան, Յովհաննէս Ասպետ, Սեպուհ Ակունի, Արմենակ Տէր Յակոբեան, Վահան Թոշիկեան, Յովսէփ Մինանեան, Տիգրան Պողոս, Փայլակ Գոյանճեան, Անմահեան, Խառմանարոյժ Գալֆալեան, Խառմանարոյժ Էքսէրճեան, Խառմալեան, Մանգրիկ Կառլաբեան, Վահրամ Թաթուլ, Լեւոն Խառմանեան, Դերենիկ Դարպասեան, Առաքել Զաքարեան, Գառնիկ Ատիլ, Պետրոս Զէքի, Յովհաննէս Պողոսեան, դերասան Պալթագար, դերասան Գարագալ, դերասան Արմէն Աժադեան, դերասան Աւետեան, դերասան Տրդատ Նանեան, դերասան Սուրբեան, պրաշարապետ Բասթալ Ճարեան, դրաշարապետ Միլլերտիլ, պարի Բրոնֆ. Միրիճեանեան, Գրիգոր Անպոթ, Սոսկոյի Գալուստ, Գրէմ Սիմոն, Կարմիր Արթաքի, Գրիթ Կիրակոս:

Մթնոլորտը չէն էր ու կը խոստանար դառնալ ոգեւորիչ:

Հաւատարիմ հայկական հնաւանդ սովորութեան, ժամը իննին յայտարարուած դասախօսութիւնը սկսաւ ժամը տասնին:

Դասախօսը դրանց իր աթոռը, սեղանին ծայրը. մինչդեռ արդէն խիւ լոյսիկ դարձած նախագահը կեցաւ սեղանին կեղբորն եւ օղերոյր բերնով սկսաւ խօսիլ եւ ըսել.

— Պատկանելի ու պատուական ներկաներ, յարգելի հակալքողականներ ու սիրելի եղբայրներ ի Բաղոս, այսօր պիտի ունենալունք աննախընթաց դասախո-

սուբյեկտ մը, «Գրողը Գրինւոյ» անունով, որ փրճարանական է: Այս ինքնատիպ դաստիարակութիւնը յղացումն է, պիտի ըսեմ դաւանէ, մեր գրինսէր ու գործօն ու դաւաթակից բարեկամներէն տիրաբ ժողովք թընկերքի ու Գարբիէլ Գարբիէլեանի ժողովին միութեան: Այս բարեգործ Բարեկամները դաստիարակութեան ետքը պիտի հիւրաւորեն մեզ յոյսով՝ եղբայրական ջերմութիւնով:

Պօսքը մեծ խմանին ու մեծ խնդարողին տալէ առաջ, թող տուէք որ ես եւս ջերմօրէն խորհի լուսաւ փրճարեմ ի փառք Գրինւոյ:

Պէտք է միանգամայն դիտել՝ թէ Գրինի բնուէրը փառք գործ է, ոչ թէ վնասակար գործ: Գրինին անշուշտ վնասակար ֆարձանական տաղանդէ գուրկ կարգ մը մարդոց համար: Նաեւ կարգ մը դժբախտներու համար, որոնք ի ծրնրնդինէ չունին կոչում կոնծելու գինի: Նաեւ պակասաւորներու համար, որոնք թրմք եւ կոկորդի թերութիւններ ունենալով, չեն ախորժիք Գրինույ դրախտային հոտէն: Ատանկ տաղանդագուրկ տըրխոզներուն, ցաւադարներուն համար, ելլել Գրինին ամբաստանել իրեն վնասակար, կը նմանի հացը ամբաստանելուն, նկատելով որ հացը վնասակար է շաքարախտաւորներուն ու գիրնալու հակամէտ տակաւախտաւորներուն, որոնց մէջը դատարկ է: Ամբաստանեցէք ջուրն ալ, քանի որ ան ալ ջրգողներուն վնասակար է: Ուստի կ'ըսեն.— «Գրինին գլխուն կը զարնէ»: Սիրելի եղբայրներս ի Գրինի, մեր գլխուն զարնողը թող ուրիշը չըլլայ, Գրինին թո՛ղ ըլլայ: Ես կը խոնարհեմ գլուխս. ուզածին չափ թո՛ղ պարնէ Գրինին: Անոր զարնելը գիտէ՞ք ինչի կը նմանի. Բոսնիայի երկաթուղիին փրճակահանութեան զարնելուն: Ո՞վ յուզիք զարնուիլ այդպէս: Զարնել կայ, զարնել ալ կայ: Զարնուիլ կայ, զարնուիլ ալ կայ: Ո՞վ սիրելի եղբայրներ, կը հարցնեմ. միթէ կարելի՞ է ամբաստանել բարձր, բարեգործ եւ աստուածափառ Արեւը, ըսելով որ մերթ մարդոց գրը-

խուն կը դարնէ: Գրինին՝ արեւին ամէնէն աղետական դաւանէ է: Հեղուկ աւազակ է: Արդէն «արփի» եւ «արբենայ» բառերը նոյն բնուածիքին կը պատկանին: Գրինին ոչ ոք է ու սնունդ, Պէտք է ուսանիլ անոր ըմպումը, որ ըլլայ մարմնոյն, մտքին ու հոգւոյն համար օգտաւոր: Պէտք է հիմնել հոմայաբան մը, բազմաբանութիւն ուսուցանելու համար: Ըմպեցէ՛ք Գրինին հանգարտ հանդիսաւորութեամբ, յամբար, մինչեւ յատակը, փառքին վերաբարձ, ձեր հոգին յստիկոյս, դուք մարմնապէս ըլլալը նստած կամ ոտքի: Սա ալ ըսեմ որ գրինսէրները զո՛ւ չեն երթար քոլէրայի կամ ժանտախտի, չեն ունենար կուրաղեալ եւ կոկի: Գրինեմովը չի վախնար համաճարակէ: Երբ ջուր խոզները կը հնձուն համաճարակի ատեն, Մահը իր մանգաղով յարգալից կը խոնարհի գրնետանց իմաստուն ժողովականներուն առջեւ, ու կ'անցնի կ'երթայ: Ալքովը մարդու բարեկամն է ու մանրէին թըլնամին: Գրինսէրները շատ բարեւ չեն տար թիւկներուն. ահա թէ ինչո՞ւ բըթիւկները գէշ կը խօսին գրինսէրներուն մասին: Կր յարգենք բացառիկ թիւկները, ինչպէս տաղանդաւոր կոնծարան ու մեր պատուական բաժակակից տղքթ. Մասիսը:

Ես որ միշտ բաց խօսող ու խորհող եմ, բացման խօսքս կը վերջանան, խօսքը տալու համար՝ ողբից հեղուկին հեղինակաւոր քրմապետին, Երուսանդ Օտեանին, որ փրիստփայ է ամէն բանէ առաջ, ու ամէն բանէ ետքը՝ կրկին կը մնայ փրիստփայ: Ան է որ հանգամանօրէն պիտի խօսի Գրինույ մասին, պիտի խօսի պատրաստուած, սակայն առանց սպառնալու նիւթը, քանզի Գրինին ոգի ու նիւթ է անսպառնի: Մասիս հարեցէք Գրինին գովարան փրիստփային:

Որոտընդոտ ծափեր, երկարատեւ ծափեր, սրտապին ծափեր:

Շաթըրեան իր խօսքը աւարտելով՝ ձեռքը երկարեց սեղանին վրայ գտնուող օղկից բաժակին ու միակ ումպով մը

պարպեց պարունակութիւնը: Ներկաները կարծեցին՝ թէ ջուր խմեց: Մէկը պոռաց.

— Այդ գոգիստէն յետոյ, անկում է ջուր խմելը:

Ետքը ետեւ պատասխանեց.

— Ըս ջուրը օղիի փոխեցի: Եթէ չհաւատացող կայ, թո՛ղ դայ ու բաժակը հոտոտէ:

Առջեւը պոռաւ շնորհիւ մին՝ հոտոտեց բոժակը ու յայտարարեց.

— Յմածը օղի էր. 45 աստիճան:

Ծափահարութիւն:

Թընկերքի մէկ նշանին հնազանդութիւնը՝ ներկայ պատահակը ջուրի շիշ մը ձեռքը, փութաց լեցնել գաւաթը: Ջուրի շիշին մէջինը անշուշտ օղի էր:

Ապա, Օտեան գրաւեց սեղանին մէջ տեղի աթոռը ու քանի մը թուղթեր գրաւ իր առջեւ: Նոթեր էին:

Հակառակ հագուած ըլլալուն (վարդենին), Օտեան լուրջ էր, նման ծանրախոհ իմաստասէրի:

Սրահը լուսթեան մէջ էր:

Պահը խորհրդաւոր էր:

Օտեան քնական ու ցած ձայնով ըսկրաւ իր դասախօսութիւնը.

Ահաւասիկ իր խօսածին ամփոփումը, որ իմ խնդրանքիս վրայ սղաղբեց Սեպուհ Ակունի, ինչպէս սղաղբեց նախազանչին խօսքը և թեր ու դէմ եղած բոլոր արտայայտութիւնները, որոնք կարգալով պիտի ներկայացնեմ իրենց կարգին.

— Սիրելիներ, հին է Գինիին պատմութիւնը, որով երկար ու բազմաճիւղ: Մէկ բան քաջ գիտնալու է՝ որ հացին զիւտէն աւելի հին է Գինիին պիտու: Ինչպէս անպիւր գրականութեան մէջ, ուստիստոր աւելի հին է արձակէն: Գինին թեւաւոր ուսանաւորն է, հացը՝ արձաւոր: Թէեւ կ'ըսուի գուտել ու խմելը կամ «կերութիւն», բայց այդ ուտելը անպատճառ հացակերութիւնը չէ: Նախսմարդը գտածը կերաւ և ուտելէն ետք, մտածեց ընտիր ըմպելիի մասին: Ուտել

ու խմել, մէկը միւսով կ'ամբողջանայ ու վտելքով մըն ալ կ'ըլլայ կատարեալ: Ահա թէ ինչո՞ւ Սողոմոն իմաստունը ստեղծեց «Կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լի՛ր»: Մեր այսօրուան դասախօսութեան նիւթը «արք»ն է, ու մենք «Գինի» բառը պիտի գործածենք ամէն տեսակի ոգելից ըմպելիներուն իրրեւ խորհրդանշական բառը: Հիները երկիր մը զովելու համար, կ'ըսէին. «Երկիր ցորենոյ ու դինուոյ, երկիր հացաւէտ եւ դինաւէտ»: Երբ հողամասը կնաւէտ ալ էր, կ'ըլլար երկրային արքայութիւն: Իմաստուն իւրայեղացիները շատ կը կոնծէին, եւ իրենց պատմութիւնները կը լուսին պիտի լինէր, ինչպէս մենք, այսօր, մեր ներքին պատմութիւնները կը լուսնայ պիտի լինէր: Առանց Գինիի սուգի մէջ կ'ըլլար Պաղեստինը. սուգի մէջ ալ չէ, քանի որ Գինիով կը բռնուի սուգը, այլ սովի մէջ: Բարեկացիներն ալ նշանաւոր էին իրրեւ կոնծարան: Իրենց մայրաքաղաքին մէջ, փողոցներ կային, միայն գինետուններով լի: Գինետուններն ալ յանապաղաներով լի: Կառավարութիւնը ծանր տուրք գրաւ գարեջուրին վրայ. անօգուտ. աւելի սաստկացաւ ըմպումը: Բարեկացիները խմեցին ու խոկացին եւ այդ ճամբով բարձրացան ասողերու գիտութեան: Գինիով ու գարեջուրով վերելք ունեցան եւ հասան քաղաքակրթութեան մը պագաթը: Հին Հայք, Քսենոֆոնի միայ, ունէին առատ գարեջուր ու գինի: Ամէն մէկ տունի մէջ կային կարասներ, հեղուկ օրհնութիւնով լի: Հին Հայք կը խմէին ու կը խմեցնէին: Ե՛էն էին եւ շնորհալի: Գինին անմահ է ու անմահութիւն կը պարգեւէ զինքը սիրող ու ըմպող ժողովուրդներուն: Գինիին բուն հայրենիքն ալ Հայաստանն է: Հրապարակաւ որ չէր Հայ եւ Հայաստանցի: Գինին անպակաս ըլլայ Հայաստանէն ու համը պիտոյ Հայուն բերնէն: Սիրելիներ, Տէրունական Աղօթքին «զհաց մեր հանապաղորդ տո՛ւր մեզ այսօր» խօսքին մէջ՝ լաւ կ'ըլլայ բառ մը փոխել եւ բռնել. «Զգինի մեր հանապաղորդ տո՛ւր մեզ այսօր»: Որովհետեւ բարին

Աստուած ինչպէս որ ալ ըլլայ կու տայ մեր ամէնօրեայ հասցը, որ խնդրուելիք բան մը չէ: Խնդրուելիքը Գիւնին է: Եւ կամ երկուքը միասին ուղեւոր է, ինչպէս Աստուածորդին երկուքը միասին տուաւ: Հասցը իբրեւ իր մարմինը ու գիւնին իբրեւ իր արիւնը: Ուրեմն ըմպենք Գիւնին ճակատաբաց, մեր զլխարկները հանած, խմենք ու խորհինք որ եթէ մեզի «Գիւնեմոյ» անուանեն, պէտք չէ կարելութիւն տանք, որովհետեւ այդպէս խօսողները չեն գիտեր՝ թէ ի՞նչ կ'ընեն: Խմենք ու հետեւինք Յիսուսի, որ ամէն հազկերոյթի կ'ըմպէր Գիւնի, ու Փարիսեցիներն էին որոնք զինքը կ'անուանէին «այդ արեցողը», այսինքն խման: Ծառահասն մը առանց Գիւնի, կը նմանի տան մը առանց կնոջ: Գիւնին սեղանին համեմատ հոտն է եւ ուրախութիւնը, ինչպէս կ'ընք սենեակին համեմատ հոտն է եւ ուրախութիւնը: Եւ եթէ երբեմն Գիւնին պատճառով կոխներ կը ծագին, պատճառը դարձեալ Գիւնին կնոջ նմանին է: Պէտք է սիրով վարուել երկուքին հետ ալ: Սիրով ու շփով: Առաքելայնեան ամէնէն գիտունն ու դործունեան, Հեթանոսաց առաքեալն էր, Պողոսը, որ իր աշակերտ Տիմոթէոսին խորհուրդ տուած է խմել քիչ մը գիւնի: Անշուշտ դժուար է հաստատել քիչին քանակութիւնը, ինչպէս շատինը: Ձափերը կը փոխուին անձէ անձ, ինչպէս նաեւ երկրէ երկիր: Ինծի համար մէկ լիշը քիչն է, մինչդեռ ուրիշին համար երեք գաւաթը շատն է:

Նոր Կտակարանէն սնցնինք Հին Կտակարանին, ուր կ'ըսուի՝ թէ Նախամարդիկ կը մեղանչէին, անդուլ ըմպելով ու կրնէր սիրելով: Եւ Աստուած պատուհասեց մարդիկը ջրհեղեղով: Մարդոց ըմպելիներուն ջուր խառնուեցաւ, ու ապա, մարդիկ ու իրենց ըմպելիները կորան խեղդամահ: Ջրհեղեղէն վերադարձնելու Նաշապետին առաջին գործը եղաւ ոտկայն, որ թ տնկել, հասցնել խաղող ու պատրաստել Գիւնի: Եւ արեւնայ ու դուարթանայ: Յայնժամ, Աստուած տեսաւ որ մարդկային կազմու-

թեան կորեզն է ալքոլը, մարդկային հոգիին ոգին է ալքոլը ու մարդը չի կրնար ապրիլ առանց Գիւնու, եւ ըմպումը արտօնեց: Ու մեր պատուական Նախահայր ու Գիւնի վերահիմնադիր Նոյ Նահապետ, ընտանեօք, իրեն զբաղում եւ զբօսանք ընտրեց այդեղործութիւնը, հանդերձ արեւգործութեամբ: Աստուած ընդունելով որ կեանքը իր գոյնեղուն մէջ սեւ շատ ունի, զայն վարդապոյն դարձնելու համար արտօնեց ալքոլը: Գիւնովնալ ուրեմն, կեանքը ժամանակաւոր կերպով դունափոխութեամբ սրբապրելու կերպ մըն է: Հոգին չպարելու միակ միջոցն է գիւնովնալը: Երեւմի կորուստէն յետոյ, մարդուն ձգտումն եղաւ հասնել Նոր դարձի մը: Գիւնին գեղն եղաւ դարձիս, դեղ ու սնունդ սիրելի: Գիւնին խարոյկն է խաղողին: Սըրբապղծութիւն է այդ նուիրական հուրին վրայ ջուր լեցնելը: Ջուրը կը մարէ կըրակը ու վերածէ մոխրի: Ջրոս Գիւնի ըմպելը հուսաար է ջուր ու մոխրի խումբուն: Գիւնին խեղդելու չէ ջուրի մէջ, Գիւնին իր մէջ՝ ի՞ր ջուրը ունի: Գիւնին մկրտուելիք չէ, Գիւնին ինքը մկրտիչ է, ըլլալով մկրտութիւն՝ նուիրական ջուրի ու սրբապան կրակի: Այն գիւնեմահառները, նորովեալները, որոնք կը ժըպրահին Գիւնին մկրտել հասարակ ջուրով՝ դժոխքի կրակներուն մէջ գլխի վրայ պիտի կախուին ու պիտի չարչարուին ծարաւէ: Մարդկային հոգին գիւնեպաշտ է ու հոգին չի սիրեր խարդախը, այլ անխարդախը, որ է ոգի: Եւ ոգին է որ ողբերգութիւն կը պարգեւէ հոգիին: Ողբից ըմպելով կը բարձրանան հոգիին որամարտութիւնը եւ խանդն ու եռանդը: Հոգին կ'արթննայ, կ'ողջնայ, կ'առողջանայ, կը հագուի իր տօնական հագուստը, իր հրեղէն հանդերձանքը, կը պնտուի, կ'ունենայ վերելք ու կը տիրէ մարմինին: Գիւնով է որ հոգին կ'արթայանայ: Հոգին Գիւնով է որ կը բարձրանայ գահ: Կ'ունենայ դաշխոն ու Գեղուհի: Ինչո՞ւ տիրէ խաղաղակ մարմինը: Թո՛ղ թաղաւորէ հոգին. միտքն ալ թո՛ղ կառավարէ, իսկ մարմինը թո՛ղ

սպասարկէ, թո՛ղ մատրուակէ Գինի, թո՛ղ աշխատի իբրեւ գերի: Ի՞նչ է մարմինը.— պտտեան: Ի՞նչ է միտքը.— մատնան: Երկուքն ալ ժամանակաւոր: Հոյին է յաւիտենական: Պտտնառնք հրճուանք հոյինն: Աշխարհի բովանդակ բարիքը կը բնակի Գինիին մէջ: Բերքն ու բարիքը Գինիով կը մանեն մեր մէջ: Ըստ հին Հելլեններուն, Գինիին մէջ կը բնակին բարեկարգ ուղիները, որոնք մեր մէջ մտնելով՝ սարդոստայնները կը ուրբեն մեր հոգիէն, ու դուքս կը վռնտեն վիշտեր, վախեր, ցաւեր, տառապանքներ ու տաղանակներ: Այդ բարի ուղիները՝ զինեւէրները կ'առաջնորդեն այն հիւրընկալ ապարանքը, որ կը կոչուի Ծրանութիւն:

Քիչ մըն ալ խօսինք գիտականօրէն, այսինքն բոլորովին փաստացի: Եւ տեսէ՛ք՝ թէ ինչէ՛ր, ինչէ՛ր կան Գինիին մէջ: Ըստ տարբարանութեան, Գինիին բաղադրութեան մէջ գտնուած են հետեւեալ ուժականութիւն ունեցող գանձերը.— Առատ քալարի եւ Լսանք, այսինքն ոգի: Տակաւին եքերներ, օրկանիք թթուներ, աղեր, գունաւոր նիւթեր, շաքար, կլիստերին, ալտէրտներ, փրօքիտ, կլիստիտ, լիփիտ, ցիւլիէոփրագիտ, կլիստօֆոսփաքիտ, ֆոսֆորային թթու, քլորփիլի, հանքային տարրեր, ազոթայիններ, քոյին, աքիտ ամփնէ, աքիտ քարքրիք, ալտ մալիք, աքիտ սալիսիլիք, աքիտ սուտիլ, դաճ, ծծմբային թթու, խալիտ, ռաւդրոն, բնակիր, մագնէսիտ, քլորի, ոսկերորի, զաւիկ, ղէնկ, փլաքի, երկաթ, պղինձ, ռաւիւս, եւ կենսաւերակեր:

Կը տեսնուի որ աշխարհ մը, տիեզերք մը կայ, իր արեւով, մոլորակներով եւ արբանեակներով, շիշ մը գինիին մէջ: Ահա թէ ի՞նչու խմանը միայն երկրի վրայ չէ, այլ երկնքի մէջ, այլ աստղերուն մէջ, այլ արեւայութեան մէջ, աստուաղն լուսինն մէջ:

Եւ քանի որ դասախօսութեանս երկու կազմակերպիչ կնքաւայրերը դայն մկրտած են «Գովք Գինույ» անունով,

պարտինք յիշել Գինիին գովքը հիւսած հանճարեղ հեղինակներէ մէյ մէկ նըմոյշ:

Եթէ Գինիին Գովքին նուիրուած բոլոր կտորները հաւաքուին՝ կը լեցուն մատենադարաններ, իսկ անոնց ընթերցումը կը տեսէ տարի մը:

Մենք պիտի յիշենք քանի մը պոփուսներ միայն.

Հոմերոս՝ Գինիին կ'անուանէ «Աստուածային ըմպելի»: Փալլատոս կ'ըսէ.— «Յմենք, ու թո՛ղ ցրուէ Բազուս վիշտերս, եւ տաքցնէ ռառած սիրտս»: Պլատոն գրած է.— «Աստուծո՛ւ մարդոց տրուած ընտրելագոյն ընծան է Գինին»: Խայեամ կ'ըսէ սրամտօրէն ու այնքան իրաւամբ.— «Գինի ծախողները կը զարմացնեն դիւ. անոնք ի՞նչ կրնան առնել, որ լաւագոյն ըլլայ իրենց տուածէն»: Ահաւասիկ քառակ մը Հաֆթըզն.

— «Գինույ ըմպելի առ աւ քամէ,
անցաւոր,
Վիշտե՞ր ունիս, գինի խմէ,
անցաւոր,
Ամբողջ աշխարհն է սկիզբէն
քայքայուած,
Ինչ ալ ըմպէ աւ քայքայուէ՛,
անցաւոր»:

Պուարո խօսքը փիլիսոփաներուն կ'ուզէ.— «Ո՛վ Բագոսի թշնամիներ, զուք որ կը կարծէք՝ թէ ամէն ինչ գիտէք, ձեր պարտականութենէն դուրս մի՛ հլլէք...: Օ՛ն, ծերուկ յիմարներ, գացէք խմել սորվեցէք»: Ահաւասիկ արդ մը բանաստեղծէ մը, որուն անունը չեմ յիշեր.— «Գինի սիրողին սիրտը բաց կ'ըլլայ, նաեւ բախտը՝ բաց»: Ուրիշ բանաստեղծ մյն ալ կ'ըսէ.— «Գինին զուրկը կը զարմնէ, ու ես ինքզինքս կը զուրկեմ սիրունիկս հետ դէմ դէմի, ու շուրթ առ շուրթ կը սահինք զբախտէն ներս»:

Եղբարեկենց, սիրելիներ, որպէսզի խօսքէն անցնինք գործի:

Մարդու ուրախ ընկերն է Գինին, որ կը զարմանէ, կը խնամէ, կը գուր-

դուրայ, կը կաղզուրէ, կը մարմնադի-
նէ, կը մտադիւնէ, կը հոգեդիւնէ ու կ'ո-
ղևորէ: Այսօր, հանդիսաւորապէս կը
յայտնարենք՝ Գինին մեծագործ բարե-
րար, մեծագոյն բարերար, աստուածա-
սուր բարերար: Օրհնեալ ու անսպառ
ըլլայ Գինին յաւիտեանս յաւիտենից, ա-
մէն: Աս վերջացուցի...

Մէկ Ծովու փոթորիկը յիշեցնող ծա-
փեր, Ջրհեղեղը յիշեցնող ծափեր, Վեր-
ջին Դատաստանը յիշեցնող ծափեր:

Ստեան քաշուեցաւ սեղանին ծայրը,
սակայն իր նստիկին տեղը երթալէ տուա՞յ,
պարզեց բաժակին պոյթուցիկ պարու-
նակութիւնը:

Սպասեալը անգամ մը հաս լեցուց,
դաւտթը:

Նախապահ Շաթրիեան դարձեալ
դաւով սեղանին կեդրոնը, աչքը օդի
բաժակին, յայտարարեց՝

— Երեքովի պարիսպներէն շատ աւե-
լի ամուր, կուս կերտուածք ունեցող
այս դասախօսութեան դէմ՝ նիւսակ պի-
տի ճոճէ նախ պաշտօնական ընդդիմա-
դիր, յարգամեծաբ Յարութիւն Մրմըր-
եան, որ հանրածանօթ է թէ՛ իրրեւ կրօ-
նաշունչ հեղինակ, թէ՛ իրրեւ տկուժիս
կենսագիր, թէ՛ իրրեւ բանջարակեր, ո-

րով հակալքողական: Եթէ ծերունադարդ
մեր բարեկամը, վարպետ խման Օտեա-
նին տնէկըւլի փառաբանութիւնը լսե-
լով՝ չէ փոխած իր համոզումները, ու-
րեմն կը հրաւիրեմ զինքը, որ ընդդիմա-
խօսէ: Կառոտն, պաւթ մը ջուր, մե-
ծայարդ ընդդիմախօսին:

Մէկը ցցուեցաւ ներկաներուն մէջ:
Մէկը՝ որ կարծէք կը պատկանէր առա-
ջին դարերուն: Պարիեւհասակ մէկը,
պիիսով ու մօրուքով եւ շատոնց չկարբ-
ւած մայերով, որոնք ճաղատ դանկին
դմրէթաւոր դազաթը կը շրջանակէին:
Այլ մարդը կը նմանէր Բարայէլացի ի-
մաստասէրի, կը նմանէր այդ մարդը
մարգարէի, այդ մարդը մանաւանդ կը
նմանէր Յովհաննէս Մկրտիչի: Մերա-
ցած եռքսան մը: Այդ մարդը մաղաղա-
թաշէն մատեան մըն էր, հին պատկա-
սելի պատրիարք մը: Այդ մարդը Մրմ-
արեանն էր:

Խսածանեանն ալ անոր քով՝ կը նը-
մանէր փոքրաւորի:

Իսկ Ստեան կը նմանէր հին յոյն ի-
մաստասէր Պիւտոնի, հիմնադիր սկեպ-
տիկութեան:

(Շար.)

Ն. Պ.

ՍԻՐՈՅ ԲԱԳԻՆ



Ներաշխարհիս մէջ հերձեցի ես ճանա՜ր
Եւ ձօնեցի զայն Աստղիկին ռափածոց,
Խոյակին վրայ փանդակեցի ոսկեճառ՝
Գեղեցկութիւնն է Սրբութիւնը Սրբոց:

Հո՛ն, խորանի աւազանին մէջ մարմար,
Ապողոնն իր ձեռքին բռնած ոսկէ ֆնար
Կը մկրտէ Անահիտը լուսաստինք,—
Մեռոնի տեղ ան նեկտարո՞վ կ'օծէ զինք:

Իջման սեղան մ'ունի նոյնպէս ճանաւն իմ,
Որուն վրայ որպէս բազին՝ Աստղիկին
Սթինֆները կը բուրժառին զերթ խորհուրդ.—
Գեղեցկութեան փառաբանանք անյազուրդ:

.

Ահա կուգամ քեզի որպէս ուխտաւոր,
Եւ կը զօհեմ ես բազինիդ սրբազան,
Յարդ իմ պաշտած սրբութիւններս բոլոր
Մունկերուդ դէմ, Աստղիկ՝ սիրո՛յ առուեան:

ՄԻՔԱՅԷԼ ԹԱԽԻԶԵԱՆ

ԳՈՒՏՑԻ Պ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՈՍԿՈՐՆԵՐԴ ՀԱՆԴԱՐՏ ԵՆ...

Վայրադօրէն դարկաւ գլուխը ձողերուն: Աչքերը փայլատակեցին ու պահ մը ետք, ստուգան կէտի մը վրայ: Մատը կամաց կամաց տարաւ այն ուղղութեամբ, ուր աչքերուն բոցերը կը մոխրանային:

— Հո՛ն է դաւակո, — բացազանչեց խոստով մը. տուէ՛ք, տնգութեանը, ինչո՞ւ կը խլէք ինձմէ:

Պատին վրայ, մաղբրուն թնճուկը նորածին նապաստակի մը պատկերը կը ստուերագծէր, իսկ շրջագծեսը որուն մէջէն կ'երկարէր ալ ձեռքը, յատկօրէն կ'արտայայտէր կղերականի մը քարոզչական դիրքը:

Շուշանիկին էր սակայն:

Ակնարկս քալեց ստուերին դէմ կանգնող քառասնամեայ կինը գէպի:

— Ի՞նչ կ'ուզես ինձմէ, — գոռաց Շուշանիկ. — տո՛ւր զաւակս. դո՞ւն ալ անոր պէս վայրագ ես, անգո՛ւթ ես, սրիկայ ես. դո՞ւն ալ անոր պէս կը յափըշտակես ինձմէ ինչ որ իմս է. հա՛, հա՛, հա՛, — քրքջաց, ապա բարձրաձայն սկսաւ հեկեկալ:

Ձայնը արձագանգեց յիմարանոցի խցիկին պատերուն ներքեւ, ապա փախու փոքր պատուհանէն դուրս, արթնացրելով ուրիշ հիւանդներ: Նայուածքներ, որոնց մէջ էութիւններ անշարժացած էին ու դատապարտուած մահուան, ուղղուեցան ինծի: Հանդարտօրէն դիտեցի նայուածքներուն խորը ննջող հոգիները, ապա դարձուցի ուղադրութիւնս

Շուշանիկին: Զննողական ակնարկս չըբնցաւ աչքերէն դէպի ձեռքերը եւ ուսերը հաղիւ ծածկող շրջագծեսը: Ինչպէ՞ս դժէի մտապահեցի մէջ, յատկօրէն, այն հազուադիւս պատկերը, որուն վրայ տարիները վայրադարձաւ ծածկած էին փոթորկոյից ծովու մը ալիքներուն աւաղը. անոնք կարծրացած էին ապառաժի մը նման:

— Խե՛նթ, գոռաց Շուշանիկ, ի՞նչ կը դիտես զիս. չե՞ս հասկնար, ո՞ւր է այդ ոճրագործը որ բղբտիմ սա եղունգներովս... հայրի՛կ, ո՞ւր են ոսկորներդ...

Մտքիս մէջ հետզհետէ պայծառացաւ դէմք մը, հակապատկերը դէմս կանգնած շնչող էակին: Հակասութիւնը կը ստեղծէր ատելութիւն մը կեանքին դէմ, եւ ակոսողա՞նք մը՝ իրականութեան մէջ սպրդած պատրանքի մը...

Ճ

Մութ սենեակ, պտտուհան մը եւ գուռ, ոչորապտոյտ ստիճաններ, զետնալարկը տանող:

— Սիրա՛ն, ո՞ւր ես:

Շուշանիկին հայրն էր, խիստ, հըրամայական շեշտով մը:

Նս եւ Սիրան կը վազէինք մուկերուն բնակավայրէն վեր:

— Քեզի կ'ըսեմ որ հոս գտնուիս երբ զործէս վերադառնամ, — կը պոռար դասնկերուհիս վիթխարի հայրը, աչքերուն ատելութիւնը թափելով կրտսեր

աղջկան վրայ: Շուշանիկ՝ հանդարտությամբ հետևեց նրան: Կ'ունենալու էր հոր խոսքերը, աչքերը կարի մեքենային վրայ: Այն նուրբ, երկար եւ սպիտակ մատները՝ որոնք պար կը խաղային մեքենային ասեղին շուրջ... Իսկ նշածեւ սեւ աչքերը որոնք մերթ ընդ մերթ կը ցատկէին ինձմէ գէպի Սիրանը:

— Կօշիկա հանէ, — կը՝ հրամայէր հայրը, նստած խորէ աթոռին վրայ, Սիրան կը քաշէր հօր տրեխները:

Հսկառակ մանկութեան փորձառութիւններու եւ րմոնումներու, այս դորոտութիւնը հասարակ երեւոյթ մը դարձած էր: Սիրանը մտերիմ դասընկերուհի էր. հօր վարուելակերպը մէջն կը պահէր զսպուած անհանդուրժողութիւն մը:

— Շուշան, որքա՛ն զործ ըրիր այսօր, — կը դառնար երէց աղջկան:

Շուշանիկ չէր խօսեր. կը պարզէր ձեռքերը հօր առջեւ, ապա զլուր կը ծռէր:

— Այսքա՛ն միայն, — կը շարունակէր խոսիտ եւ չոր ձայնը:

Պահ մը լռութիւնէ հաջ, դողդոջուն եւ նուրբ ձայնի մը մէջ, պատասխան մը հետզհետէ կը մեռնէր:

— Հայրի՛կ, այսօր վրաս շատ ուժ չկայ:

— Խելքդ նշանածիդ վրան է, այնպէս չէ՞. ի՞մ յանցանքս է. աղջիկ ըսուած արարածը նշանելո՞ւ է:

Արցունքի կաթիլ մը, ապա երկրորդ մը կ'իյնար ձեռքերէն վրայ, մինչ մեքենային միօրինակ ճոխչը կը շարունակէր վրդովել համբերութիւնս:

Սիրանին հօր ասելութեամբ լեցուն նայուածքը ինծի դէմ, ոչ մէկ սարսաղողակի տպաւորութիւն կը ձգէր: Նոյն կանքս կը չէղճայնէր իւրաքանչիւր արձակուած արտայայտութիւն ինծի դէմ: Սիրանին անհանդարտ մարմինը կը դառնար սենեակին շրջա կողմը, հօր ներկայութեան, փաստելու կարծես՝ արժանի գաւկի մը արարքները: Անդա-

մալոյժ մայրը, լուռ՝ պառկած անկիւն մը, մտքով կ'արծիս կը թափառէր զաւակներուն վրայ: Տասներեք տարեկանի հոգեբանութիւնս կը կարդար այդ անմեղ դիմոնկարով կնկան հոգին: Երեւակայութիւնս կը տանէր զիս անցեալի մը, որուն ոճրածին իրականութեան կրկնապատկուիլը կը տեսնէի վերթխարի մարդուն արարքներուն մէջ:

— Քեզի կ'ըսեմ որ ամէն օր մեզի չլսաւ, — կը դառնայ ինծի:

Ինչո՞ւ չէի վախնար այդ մարդէն. կը մոտահէի կամքի ղորութեանս: Նայուածքս կը դառնար սեւ շալվարին շուրջ, ապա կը բարձրանար սիկարէթի ծուխէն դեղնած պեխերուն:

— Վաղը քեզ հոս չտեսնեմ, — կը շարունակէր:

Շուշանիկ կը նայէր ինծի, հապճեպով ժպիտ մը կը փախցնէր շրթներուն ծայրէն, ապա նայուածքը կը պտտցնէր ասեղին անհանդարտ խաղերուն:

Կը յիշեմ յստակօրէն Հալէպի սառնօրերը:

Մութ սենեակէն ներս, փոքր թոնիւր մը երբեմն կը ծածկէր երկու քոյրերուն ոտքերը: Վերթխարի մարդը ներս մտաւ, կծկուած՝ սեւ փաթեթի մը մէջ:

— Ի՞նչ նստեր ես ծոյլ-ծոյլ, դուռաց Շուշանիկին:

Եւր մայրը դողդոջաց, հառաչեց, ապա դարձաւ աղջկան:

— Խելքդ նշանածիդ վրան է, այնպէս չէ՞, — շարունակեց, եւ քաշեց աղջկան ծունկերուն վրայէն թոնիւրին ծածկոցը:

Շուշանիկ ցատկեց տեղէն. իջաւ մատանր, բերաւ դրաւ հօր առջեւ ընթրիքը եւ անցաւ մեքենային դէմ:

— Քեզի սորվեցնելու եմ թէ ի՞նչպէս կ'աշխատին, — շարունակեց հայրը, կուշտաւ արգանակը, որուն հոտը սկըսած էր շրջիլ սենեակին մէջ:

— Ասիկա ամսականս է, — ըսաւ Շուշանիկ եւ երկարեց տասը ոտերեական:

Հայրը դրպանեց դրամը: Սենեակին

Հանգարտութիւնը խռովեցնող ձայնը մարեցաւ։

— Հայրի՛կ, համարձակեցաւ խօսիլ Սիրան. — Հինգ զբուշ տուր, մատիտ պիտի դնեմ։

— Երկու ամիս առաջ դնեցիր. ի՞նչ կ'ընես, մատի՞տ կ'ուտես. բնկերու-հիէ՞ղ փոխ առ, — ըսաւ ակնարկը շեղե-լով վրաս։

Սիրանին փոքր մատիտ մը տուած էր շարաթ մը առաջ. իսկ մատիտս հե-տըզհետէ կը մաշէր դասարանին մէջ, թուաբանութեան քննութիւններուն պա-հուն...։

Իրիկնամուտ մը։ Գորշ ամպեր կը սպառնային մեր տան դէմ դտնուող ա-մայի դաշտին։ Քիչ հտք, Սիրանենց տան դէմ ջուրը կը լճանար, մինչ վա-րազ, սառն հովը կը յիշեցնէր ամուսնի պակասը իրենց տունէն ներս։ Մայրս կը լեցնէր Հանքածուխը հապճեպով՝ եր-կաթեայ վառարանին մէջ։ Որոտումնե-րուն սարսաղողեցիկ ծխորը, ապաստան մը դտնելու գաղափարը կը յղացնէր մանկական ուղեգիր մէջ, եւ նայուածքս կը շեղեցնէր դէպի սենեակին լայն պա-հարանը։

Դուռը յանկարծ բացուեցաւ։

Շուշանիկ հեկեկալով փաթթուեցաւ մօրս։

— Ի՞նչ ունիս, խօսէ՛, ըսաւ մայրս արբելով ուռած աչքերը։

Հեկեկանքը շարունակուեցաւ։

Մայրս՝ փաթթուած Շուշանիկին, նայուածքը անորոշին՝ կը խորհրդածէր։

Հայրն էր նորէն. բայց ի՞նչ այս անգամ։

— Հայրս կը սպաննէ զիս, — խօսե-ցաւ — ա՛խ, կը սիրեմ վարդգէսս, ին-չո՞ւ կ'սպաննէ ինձմէ միակ ունեցած եր-ջանկութիւնս, ինչո՞ւ ետ կ'ընէ նշանա-ծէս... Կը խորհի թէ շարունակ խելքս նշանածիս վրան է... Կը կարծէ թէ այդ պէտքով նուազ դրամ կը շահիմ... Տի-կին Սիրվարդ, ճար մը գտէք։

Մայրս, լուռ մտիկ կ'ընէր խօսքե-րը։

— Այո տունէն պիտի փախչի՛մ, հե-ռանա՛մ, կորուսի՛մ. ուրիշ ելք չկայ. մատնեքս կը ցաւին ալ. օրական տաս-նըութը ժամ կ'աշխատիմ։ Տասը ոսկին թղթախաղի կը դնէ, իսկ մենք, քունէն առաջ հաց եւ արգանակ կ'ուտենք։ Տի-կին Սիրվարդ, ո՞ւր երթամ, ի՞նչ ընեմ, ի՞նչ ըսեմ վարդգէսին. ո՞ւր ես, մարդ-կային արժանապատուութիւն։

Երկինքը կը շարունակէր դուռալ վիթխարի հօրը նման, մինչ Շուշանիկի հոգիէն դուրս կը խուժէին տարիներու լուսթեան տակ պտհուած փոթորիկնե-րը։

— Տիկին Սիրվարդ, — շարունակեց Շուշանիկ, հայրս կը ծախէ զիս իր քը-րոջ ախեղծ տղուն, պարտքերը գոցելու համար. լսեցի ամէ՛ն ինչ... Կը սպան-նեն զիս... Տասը կարծիք ոսկի խոստա-ցաւ քրոջը... Կը սիրե՛մ նշանածս... մեռնի՛մ, կորսուի՛մ սա աշխուհէն. բայց ո՞ւր... Կը սիրեմ վարդգէսս... փախ-չի՛մ, հայրս կը սպաննէ զիս...

Ոչ մէկ բառ լսեցի մօրս բերնէն։ Շոյեց մազերը եւ նստեցուց հեկեկանքի տակ ընկճուած Շուշանը։ Դրաւ դէմը սեւ շամիչն ու ընկոյզը, սակայն աղքատ աղջկան հպարտութիւնը չրջեցաւ ուտե-լիքին շուրջը, ապա փախուստ տուաւ։

Հեկեկանքը դադրած էր։ Խմեց սուր-ճը դոր պատրաստած էի սննեակին տաք փառարանին վրայ։ Երջեց դաւաթը։ Քիչ հտք, ոտքս սարսափահար, ոտքի կանգնեցաւ։

— Տիկին Սիրվարդ, կարդա՛ դա-ւաթս. տե՛ս, ինչե՛ր կը տեսնեմ։

Մայրս նայեցաւ դաւաթին, գուարթ խօսքեր խօսեցաւ։

— Կը ստե՛ս, — լացաւ Շուշանիկ, — կենքս շա՛տ տխուր պիտի ըլլայ. լաւ չէ՞ մեռնիլը. ինչո՞ւ Թուրքերը չսպան-նեցին հայրս... Ըսէ՛։

Վերջին խօսքերն էին։

Սիրանենց տան դուռը փակուեցաւ մեղի համար։ Դպրոցէն ներս սակայն, մեր մտերմութիւնը կրկնապատկուեցաւ։

— Շուշանիկ ամուսնացաւ հօրաքրո-ջս տղուն հետ, — հաղորդեց լուրը՝ Սի-

բան՝ քանի մը ամիս հտք։ Տիեզծ, հա-
ղիւ մէկ մեթը հասակ ունեցող տղան,
չէի կրնար Շուշանիկին ամուսինը երե-
ւակայել։ Ամուսնութեան հետապատկեր
մը պատանի մտքին մէջ, ժխտական ըզ-
գացում եւ դիմադրութիւն կը խորացնէր մէջը։
Կեանքը սկսած էի տեսնել երբեմն մութ
ու դաժան, իր հղանակներու հակասա-
կան պատկերներով։

Կիանքը կը նեղէր իր թանձր խաւը
տարուէ տարի մարդոց մորթերուն վը-
րայ։ Այն զեղեցիկ, նուրբ աղջիկը դէ-
մք էր հիմա, յիմարանոցի խցիկին մէջ,
անճանաչելի։ Այն նուրբ սպիտակ մատ-
ները, յաճախ ասեղին շուրջ, դարձած
էին ճեղքուած, դորշ, ծառէն տապա-
լած, կտցինահար ճիւղի մը նման։ Աչ-
քերուն մէջ մերթ փոթորիկ եւ մերթ
հանգարտութիւն կ'արտացոլար։ Անգոյ
երջանկութիւն մը, ծպտուած քրքիլով
մը, կը յաջորդէր հոգիին դուրս ժայթ-
քող փոթորիկներուն։

Քանի մը տարի անցած էր ամուս-
նութենէն։ Սիրան յաճախ կը խօսէր քը-
րով մասին։ Շուշանը կորսնցուցած էր
երեք դաւակ։ Ամուսնոյն ապականած
կիանքը եւ վարակիչ հիւանդութիւնը կը
ուպանային դայիք զաւակներուն։

Շուշանը տեսած էի հօր մահուան
օրը։ Տապը կարմիր ոսկին դտնուած էր
հօր աթիին մէջ։ Լուռ էր Շուշան. ոչ մէկ
արտայայտութիւն դաւուկ դէմքին վը-
րայ։ Մեր մօր նայուածքը կը շրջէր ա-
նիմաստ՝ պատերուն վրայ, մինչ Սիրան

կծկուած անկիւն մը՝ յաճախ կը սեղմէր
թիւս։

Շուշանիկին անարտայայտ նայ-
ուածքը հետեւեցաւ հօր զագաղին մին-
չեւ դերեղման։

— Հայրի՛կ, ոսկորներդ, — շշնջաց,
— տապը ոսկին հետդ...

Ի՞նչ ըսել կ'ուզէր Շուշանիկ այդ
պահուն։

»

— Հայրի՛կ, ոսկորներդ հանդա՛րտ
են, — ճշաց դէմս կանգնած կիւնը, — ինչ-
պէ՛ս կրցար ծախել դիւս։

Կը հասկնայի հիմա անցեալին չար-
տասանուած բառերը։

— Բերէ՛ք, տուէ՛ք զաւակներս. մեռ-
ցուցէ՛ք այդ մարդը, — պոռաց դղրդա-
ցընելով խռպոտ ձայնը, որուն ետեւ կը
ննջէր անցեալի մեղմ, քնքուշ ձայնը։

Շուշանիկին ողն ու ծուծէն մինչեւ
ուղեղը կրծող հիւանդութիւնը, ամու-
սինէն մնացած ժառանգն էր՝ որուն ախ-
տը սպաննած էր ծնած իւրաքանչիւր
զաւակը, հաղիւ քանի մը օր դրկած թե-
ւերուն մէջ։

Յիմարանոցի խցիկին մէջ արգելա-
փակուած, կը վազէր զաւակներուն ուր-
ուականներուն ետեւէն։ Անոնք կը փախ-
չէին իրմէ։ Կը մնար հո՛ն, պատի՛ն միւ-
րայ, նորածին նապաստակի մը պատկե-
րը, եւ մթութիւնը ճեղքող խռպոտ ձայն
մը, — հայրի՛կ, ոսկորներդ հանդա՛րտ
են...

Գ. Պ. Մ.



Ղ. ԺԻՐԱՅՐ

Մ Ե Ծ Պ Ա Ր Ա Ս Ր Ա Հ Ը ...

Ընդամենը քառասուն մըն է Մեծ Պարասրահը:

Գոյնզգոյն լոյսերու արդեցութեան տակ կը թուի շատ բոմանթիք:

Նուազախումբը կը նուազէ անընդ-
Հատ նոր-նոր պարանուագներ: Կը նուա-
զէ՝ ձայնալիմի, դանդաղ վալս. կը նուա-
զէ՝ Թուխտ, Ձա, չա, չա, եւ նուազ-
ները կը հրահրեն բազմաթիւ զոյգերու
հոգիները, եւ Մեծ Պարասրահը մերթ
ընդ մերթ կը փոթորկի, կը հանդարտի.
Կը նմանի ծովու մը ալիքներուն, կը նը-
մանի պարող զոյգերու ելեւէջող հոգի-
ներուն:

Առաջին, երկրորդ կամ երրորդ պա-
րերու ընթացքին, Մեծ Պարասրահը ան-
ծանօթի մը կը նմանի: Որովհետեւ,
ներկայ հոգիներու մեծ մասը նոր կը
հանդիպին իրարու, եւ անծանօթներու
այս հանդիպման ժամանակամիջոցը՝ ա-
ռաջին, երկրորդ կամ երրորդ պարերու
ընթացքին, կը հանդիսանայ կենսունակ
եւ կը թուի ճակատագրական:

Բազմաթիւ հոգիներու անորոշու-
թիւնը կը ստեղծէ մղիչ ուժ մը երկու
սեռերուն միջեւ, պտնկու սրտմիտ մի-
ջոցը, աւելի արագ փարատելու տիրա-
պետող անորոշութիւնը, եւ արագօրէն
կնքելու դաշինք մը, զոր պիտի առաջ-
նորդէ զիրենք հեշտանքի եւ յագեցման
պագաթին:

Զգտումը մէկ է:

Հանրային մեծ պարասրահներուն
մէջ, շատ սակաւաթիւ են յարդելի բա-
ցառութիւնները...

Մեծ Պարասրահը կը նմանի մար-
տադաշտի:

Իգական սեռը՝ նպատակակէտն է:

Նուազը՝ մարտակուշն է:

Արական սեռը՝ մարտիկներն են, ի-
րարու բախող բաղձաթիւ ուժերն են:

Շատ է թիւը դեղեցիկներուն: Շատ
է թիւը դեղեցիկներ որոնողներուն: Գե-
ղեցիկ թիթեռները կը զրպեն, կը մալ-
նիսեն: Որոնող հոգիները՝ տղաքը, կը
զրպուռին, կը մազնիսուին:

Նոյնն է հեքիաթը թիթեռներուն
բով: Նոյնն է իրենց մօտեցումը, մտա-
ծելակերպը, ընթացքը: Թիթեռ՝ ըսել է
նւայ: Իսկ նւան ինքնին՝ Մեղքն է: Բո-
լոր ժամանակներուն մեղքը...

Վայելուէ տղոց թիւն ալ շատ է.
մանաւանդ զրգող եւ վարպետօրէն մազ-
նիսող մարդկային վազրերուն թիւը՝
շատ, շատ է:

Փոխադարձ այնկոծումը հոգիներ-
րուն, պահ մը շրջան կ'ընէ:

Դժուար է ընտրութիւն ընելը:

Աչքերու տեսողութեան սահմանը
շատ նեղ է:

Հերոսին դերը տղու ուսերուն կը

բարձուի։ Իսկ ճարպիկութիւնը՝ կը բաժնուի երկու տեսերուն միջեւ։

Իոյր գեղեցիկներու վրայէն աչք մը անցնելը անհնարին է։ Գողտնիքը կը կայանայ արագ շարժելու մէջ։ Արագ փնտնելու, տեսնելու, ապա մօտենալու, խլելու եւ, ինչո՞ւ չէ, յափշտակելուն մէջ։

Գոհացում տալ, հեշտացնել, ճարպիկ գրուցել, ժպտիլ, քիչիկ մը սիրել, շոյել, քնքշանալ եւ ներութիւնը որդեղրել։

Ետքը, խմբիչը հրամայել, ո՛չ զովայացել ըմպելիներ, այլ՝ «Պէյպի Ծամ» մը, «Փինք Լէյաի» մը, կամ ամէնչէն օրհնուածը, ազդեցիկը՝ «Ծին եւ Օրէնջ» մը։ Որքան շատ, այնքան լաւ։ Եւ լաւութիւնը ի բնականէ կ'արդիւնաբերէ... Գիշիկ մը մեղք գործել, ճորսին» տիրանալ, «իմս է ըսել», եւ յաղթանակի փողը հնչեցնել։

Առաջին, երկրորդ կամ երրորդ պարերու ընթացքին, մրցակցութիւնը իր ծայրայնագուծեան կը հասնի։ Ետքը, առտիճանաբար կը մեղմանայ։ Իսկ մըլըցակցութեան մեղմացումին, կը փոխարինէ կիրքերու աստիճանական զարգացումը։ Ընդհանրապէս, պարտութիւնը կը կայանայ ո՛չ թէ թիթեռի մը չհասնելուն, այլ, զեղեցիկ թիթեռի մը շտիբանալուն մէջ։ Սակայն, ժամերու թաւալման հետ, խմբիչի եւ պահերու ըսքանչացման հետ, ոմանց պարտութիւնը կ'անհետի, եւ ընդհանուր յաղթութեան, ընդհանուր գոհացումի ժպտը՝ կ'ըլլայ շերտանցելի եւ տիրապետող։

Մեծ Պարասրահը կը սկսի յորդիլ հեշտանքներով։

Ժամերու ուրախութեան ազմուկին ներքեւ, բազմաթիւ զոյգերը կը ներկայացնեն կեանքը՝ դիտուած մէկ անկիւնէ։ Կը ներկայացնեն զայն որպէս քաղաքակրթուած «Փիքատելի» մը։

Ի՞նչ փոթի որ հոգիները կը կոխկրտուին։ Գիշերային արարներու քմահաճոյքին կ'ըլլան գերի...։

Ժամերը արագ-արագ կը սահեն։

Անծանօթ զոյգերը, դարձած սերտ բարկկամներ, նոր-նոր դաշինքներ՝ կը կնքեն։ Նոր-նոր ժամագրութիւններ կը ստորագրեն, կ'որոշեն, ապա կը քրքրեն։

Ժամը կը հասնի վերջին պարին։

Կը յաջորդէ, կրկին իրար տեսելու Համբոյրը։

Ուստումներ, եւ շատ երազներ...

Շատերու համար ալ երազանքը կ'իրականանայ եւ կը բնորոշուի Մեծ Պարասրահը ձգելէ յետոյ։ Շատերու համար, քիչ առաջուան հանրային մեծ պար, քիչ առաջուան հանրային մեծ պարասրահը կը փոխարինուի փոքր սենեակներով, փոքրիկ պարասրահներով։ Մէկ տարբերութեամբ միայն. այստեղ ո՛չ մենամարտ, ո՛չ մարտակոչ, եւ ո՛չ մրցակցութիւն զոյգութիւն կ'ունենայ։ Ո՛չ պարտութեան եւ ո՛չ ալ յաղթութեան կարիք կ'ըլլայ։ Այստեղ թաքուն նուազ մը, նոր սէմֆոնի մը, սենեակներուն մէջ, զոյգերուն ականջներուն մէջ կը սկսի թաւալիլ։ Այստեղ, Մեծ Պարասրահին պտուղը կ'իւրացուի, եւ այստեղիցէն նոր-նոր հեքիաթներու համար, նոր-նոր էջեր կը կերտուին։ Կեանքին համար, հին վարազոյրները կը զոյգուին, եւ նոր-նոր վարազոյրներ կը բացուին։

Կեանքը կը մնայ նոյն բարձունքին վրայ։

Ան որ կը յաղթէ, ան որ կ'ըլլայ դրօշակակիրը ամէնէն առաջ, ան կը համտեսէ եւ կը վայելէ հասունցած պտուղը կեանքին։

Մեծ Պարասրահը՝ յորդ կեանքն է։ Ամէն օրուան կեանքը։ Ամէն օրուան կեանքին մէկ էջը։

Եւ բազմաթիւ զոյգերը, սերունդ-սերունդ, եւ դարէ-դար, կը յաջորդեն իրարու, եւ յար կը մնան Մեծ Պարասրահին նոյն ալեկոծուած սիրահարները։

Լսնում

Ղ. Ժ.

ԿՈՆԿՐԵՏՈՒԱԾ ԾԱՂԻԿԸ

Գրեց՝ ԶՕՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ

Ընդհանուր խորանույն կը բուխ քե-
ծայր տառած եւ Արտասահման խայտը
Գրգռած Անուիւնի մէջ: Հինգիս ան մի-
ջին սերունդը իրենց քմերութիւնը քո-
թափելու մնացեալ ցայց ինչ տառ ար-
դեն, եւ հարբերա ճով գրգռվել հետա-
բըմբաւորսիւնը առաջած եւ վերջերս ըզ-
գայթործել: Չառանք ենք, ան գրական
այս խորանույն տիկի տարածափն եւ
ընդհանրածայ բոլոր գաղտնիքներու
մէջ, գտածալու հոստար կենդանութեամբ
կի գրական կտաւ աշխարհ մէջ:

Հրատարակութեամբ համար մեկի հետաքննութեան արդիւնները հարկաւորութեան զեմ կը գտանե՞նք անաւոր շարքերով մեր անուն մը, հօգործակցութեան, որ ըստ արդարացիութեան չհարկաւորուած մշտնջենական խառնուրդով գտարկեմք մը, զբաղման ֆունկցիոնը շեշտուած աստիճանաբար մեր բիւրոյս, ինչպէս անկողնի շունն, ինչպէս կը կարգադրուի մեր արտադրատեսակներէ հետեւի մէկ յստակ եզրանակ: Այս երկու աստիճանները մեր միակ արագորէն երկուսն ալ շարքերով մը մեր բնակարաններէ իմաստաւորութեամբ չեն ընկնուիր: Հարկաւորութեան զեմը իր արտադրութեան շարքերով շարքերէն հարկաւորութեամբ չեն ընկնուիր:

նորնքան չարաճճի էին: Անոնց հերթին յայնժա երեւոյթը, անընդհատ հետեւանէ էր անչուշտ: Երբեքեւր միշտ կըրըտ էին ու կանանք մարաւ: Ծակովն վրայ կնճիռի նման բան էր նմարեց: Ու էինէ կը նշանակէր: Լոյսին մէջ տնախորտ խողը ըլլալու էր: Բնծանդոշով կարելի էր ծածմէկ: Միշտ սեւեռնով չայլլին՝ հոս ետ եկաւ, մինչոս որ ամբողջ Հասակը տնոնուեցաւ: Հապուտաբը կը ժուլէր մարմինը: Պահած էր գծերը: Այլ Հաստատութիւն իրեն ոտոցնէլ տտաւ: կնճիռն պատնասաւ մասաւոգութիւնը:

Առաջին արարել էր տապալակներ :

Տասամսեցաւ ժազերուն յարդարու-
մին մէջ: Կողմնակի՝ մպէր: Գլխո՞ւն վը-
րայ Հաւաքէր, թէ ոչ թո՞ղ տար որ
թափուէին ուսերուն վրայ: Գրեթէ ա-
մէն օր այս երկնայտանքը եւ ժառհողէր
ղինք: Նախընտրէց վերջին ձեւը: Գէմ-
քին աւելի կը յարմարէ: Մաղբուր ա՜ն-
Հընազանք խուրձ մը Հէր ենթարկուեր
սանտրի օրէնքին: Վաղը սափրիչին ա՜ն-
նարկելու էր: Երկրորդ արարը կը վեր-
ջանար մասնեցու թեթեւ Հպումներով՝
մազերուն: և

Կը սկսէր հրորդ արարը, — չպարը: Ներշնչումի իր աղբիւրը: Ամփոփումի պահը: Երթներու, այստեղու ներկերուն ալլապանութիւնը կը չփոթեցնէր զինք: Գոյները պէտք է որ ներզաշնակուէին: Չէր մոռնար անշուշտ այլերը ձեւաւ:

Մտնեցաւ Հայկիին: Հաստատի,
կ'ուզէր թէ տակաւին զեղեցիկ աղջիկ
մըն էր: Համոզուիլ՝ թէ տարիները ու-
շինչով խաթարած էին իր գրաւուծիւ-
նը: Դէմքը աւելի մոտեցուց Հայկիին:
Մորթը պահած էր իր փայլը: Աչքերը

բելու կոչումով մատնաները: Ամբողջ հաւաքածոյ մը ունէր: Կոպերուն շուքերը մանաւանդ: Ամէն թերացում աններելի յանցանք մը պիտի ըլլար:

Վերջապահ կը կատարուէր պտոյաքննումը, կեցուածքներով հայելիին առջնէ: Ինչպէ՞ս պիտի ժպտէր: Ինչպէ՞ս հարկ էր քալել: Ծեղծեքուիլ: Վերջին կեցուածք մը եւս: Ոտքին մէկը կը յառաջացնէր որքան որ նեղ փէշը կը ներէր: Գլուխը կը թեքէր քիչ մը վեր: Ու աղբիւրքին մէջ ձգանշացած, կը կորսնցնէր ժամանակին պիտակները:

Նայեցաւ ժամացոյցին: Դեռ երկու ժամ ունէր մինչև որ Բոթէն պար ու դինք պարահանդէսի տանէր: Ձէր դիտեր թէ ի՞նչ կը պատահէր իրեն վերջերս: Ժամանակէն առաջ կը պատրաստուէր: Ձանձրոյթ մատնող հառաչանքով մը մօտեցաւ եղբորը գրադարանին: Պտտցուց աչքերը: Բամիւ, Տօթոյեալքի, Նար-Դոս: Կը զարմանար թէ կորսուի ի՞նչպէս կը հանդուրժէր այս հեղինակներուն: Հազիւ էջ մը կարգացած էր այս զրբերէն: Միտ ալ ձանձրացած մէկդի նետած էր: Ձէր ընդունէր թէ այդ գրադարաններուն խոռոչը կը վրիպէր իր հասկացողութենէն: Համոզուած էր թէ փորձառու աղբիւր մըն էր: Կը ճանչնար կեանքը: Ձէ՞ որ ամէն դիշեր դուրս կ'ելլէր: Վերցուց պատկերազարդ թերթ մը: Ոչ միայն յօդուած մը կարգադրու համբերութիւն չունէր, այլ նկարներն իսկ կը վրիպէին տեսողութենէն: Կը դարձրնէր էջերը առանց ոչինչ տեսնելու: Յոգնած՝ մէկդի դուրս: Անբացատրելի դժգոհանք մը, վերջերս, ջիղերը լարուած կը պահէր: Անհամբերութիւն մը կը տանջէր զինք:

Պատրիարք ելաւ: Մութը իջած էր: Քաղաքապետարանի լամպերը տարտամօրէն կը լուսաւորէր մայթը: Օդը հեղձուցիչ թուեցաւ իրեն: Հայրը նստած էր անկիւն մը:

— Նորէն ո՞ւր, հարցուց հայրը թաթուն սաստով մը:

— Բոթէն հետ պարահանդէսի պիտի երթամ, — ըսաւ կտրուկ:

Անզգալաբար մատնները կը սեղմէին պատշգամին բազրիքը: Եթէ հայրը առարկէր սովորականին նման, դուցէ իր ամբողջ պաշտօնը անոր վրայ թափէր: Իմաստալից լռութիւն մը պահեց հայրը:

Վերստին սենեակ անցաւ: Առանձին չէր կրնար մնալ: Կը սիրէր աղմուկը, շարժումը, ապրիլը մանաւանդ: Ամբողջ կեանքը ընթացած էր պարահանդէսներու կշռոյթով: Այդ մթնոլորտին մէջ միայն կը ճանչնար ինքզինք, կը դրսեւորէր իր հարազատ ինքնութիւնը: Փորձեց երեւակայել պարասրահը: Ժամանակ անցընելու ձեւ մըն էր: Պիտի պարէր Բոթէն, Հանրիին, Դեւէ տղու հետ: Ժամանակ չէր այս կէտը: Անշուշտ պիտի չմոռնար իր ժպիտը, որուն դաղտնիքը միայն ինք դիտէր: Ապա պիտի դառնար, պիտի դառնար, մինչեւ որ ուրախութենէն դինովնար: Երեւակայութեան թոյլը յանկարծ կանգ առաւ: Անզգալաբար թէ այս հեռանկարը նախկին օրերու նման հաճոյք չէր պատճառէր: Վարժութեան մը վերածուած էր: Ձգորձեց հասկնալ թէ ի՞նչ բան կրնար այլեւս իրեն հաճոյք պատճառել: Արդէն ամէն ինչ վաղանցուկ եղած էր իր մէջ: Դուցէ այս էր պատճառը որ ոչ յուսախաբութիւն ճանչցած էր եւ ոչ ալ լուս տառապանքին վեհութիւնը: Իր ցաւերը արցունքներու սահմանը անցած չէին: Հանրիին յաջորդած էր Գուրգէնը: Գուրգէնին՝ Բոթէն: Ապա վերստին Հանրիին: Կրկին Բոթէն: Այսպէս կը սիրէր դառնալ...

Դրան զանգը կը հնչէր: Հայելիին առջեւէն անցած միջոցին մազերը յարդարեց: Վարժութիւն մըն էր: Տիկին Անունն էր, իրենց դրացուհին: Եկած էր լուսաքի օճախը ուղիւ: Ներս հրաւիրեց եւ ստիպեց որ սուրճ մը առնէ: Գէթ ժամանակի մը համար, պիտի ձերբադատուէր առանձնութեան անդոհանքէն:

— Բոթէն հետ «Բարեկործաններ» պարահանդէսին պիտի երթամ, — ըսաւ սուրճը հրամցնելով: Բոթէն կը խենթանայ վրաս, կը խենթանայ, սակայն ես չեմ սիրեր:

Տիկին Անուշ Հասուն ու փորձառու կին մըն էր։ Տարիներ այդ աղջկան դրացին եղած էր։ Հետեւած էր անոր քայլերուն։ Ձէր թոյլատրած իր աղջկաներուն որ անոր հետ բարեկամութիւն մշակեն։ Ամէն անգամ որ ան տարբեր տղու մը անունը տալով կը կրկնէր թէ «կը խնայեմ» վրաս, սակայն ես չեմ սիրեր», կ'անդադարեալ թէ ան քիչ մը եւս կը խրէր տիկին ու կեղծիքի մէջ։

Այս յանկերգը կրկնէին վերջնականապէս Համոյեան կ'երեւէր, թէ ամէն տղայ որ կը մօտենար իրեն, կը սիրահարուէր ու քուսը կը կորսնցնէր։ Կը հպարտանար չկարենալ սիրելուն։ Զբոս կրած ըլլալուն մարդկային այդ զգացումէն։ Աստուծոյ էր սէր մը սնուցանելու։ Համոյեան իր ըմբռնումը դինք վերածած չէ՞ր արդէն հաճոյքի խամածիկի մը։ Մարդ միթէ իր համոգումներուն սպասարկուն չէ՞ եւ միշտ չի՞ յոխորտար ան բաներուն համար որոնցմէ զրկուած է։

Տիկին Անուշ թոյլ կու տար որ ան պատմէ իր նուաճումները տղոց հոգիներէն ներս։ Ձեռ զիտեր ինչո՞ւ աղջկան հաճելի չթուեցաւ այդ կնոջ լուծութիւնը։ Անոր աչքերը չափազանց խուլարկուէին։ Անոր ներկայութիւնը կը նեղէր դինք։ Երբ մեկնեցաւ, ապա շունչ մը քաշեց։ Վերջերս դրացիները տեսակ մը կ'երեւէին աչքին։ Կը լրտեսէին կարծես դինք։ Թշնամութեամբ կը վարուէին հետը։ Նախանձի վերադրեց անոնց այդ վարմունքը։ Ինք՝ կեանքը վայելք գիտէր։ Անցաւ հայելիին առջեւ։ Այս անգամ քննութիւնը անյաջող դուրս եկաւ։ Այդ կապոյտ հագուստը զուսպ գտաւ։ Հանած միջոցին, ջղայնութենէն կոճակները փրցուց։ Թխակարմիր տարազը զոր անցուց վրան, աւելի կը ձուլէր մարմինը։ Մազկամանէն վերցուց ծաղիկ մը։ Կարծիր վարդ մըն էր, յորդուն գեղեցկութեամբ։ Միայն քիչ մը խոշորակեկ էր։ Փետտեց տերեւ մը։ Ապա մնաց։ Ժամանակին ծաղիկի մը տեսքը կը յուզէր դինք, երազներու դուռ կը բանար։

Սքանչացած՝ ժամերով կը դիտէր անոր փթթումը։ Օրերով կը խնամէր, կը դուրգուար։ Այժմ կորսնցուցած էր այդ վայելքը։ Երկար շատածեց այս կէտին շուրջ։ Դպրոցական աղջիկներու դրամ դուրս մըն էր։ Սկսաւ փետտել ծաղիկը մինչեւ որ յարմարեցաւ իր ճաշակին։ Ի՞նչ պիտի չզոհէր իր գրաւչութիւնը չեղտելու համար։ Ծաղիկը մաղերուն մէջ տեղաւորելու ժամանակ ինքնաշարժի մը դարձանք լսեց։ Բո՛ժէն ըլլալու էր։ Արդէն կէս ժամ ուշացած էր։ Յաղթական ժպիտ մը դժգոհեցաւ դէմքին վրայ։ Տեղէն չարժեցաւ։ Նախընտրելի էր որ Բո՛ժէն դինք հայելիին առջեւ դնէր։

Ինքնաշարժը մօտեցաւ։ Սակայն առանց կանգ առնելու հեռացաւ։ Աչքերը չարաշուք երեւոյթ մը ստացան։ Ծաղիկնաւիկի այդ ժպիտը, ժպիտի մը կեանքը ունեցած էր միայն։ Երբեք պիտի չներէր Բո՛ժէն այս վայրկեանը։ Անգիւշող էր իր ատելութիւններուն մէջ։ Միշտ նոյն միջոցին կը դիտէր։ Նախանձ կ'արթնցնէր տղոց մէջ։ Կը սիրէր մարդկային ստորնաքարչ զգացումները գրգռել։ Զարմանալի յամառութիւն մը ունէր անկումներու մէջ՝ յաղթանակներ փնտռելու։ Անհաղաղութիւն էր այս սպասումը։ Անտանելի մանաւանդ այն կտակածը որ սպրդած էր ներսիդին։ Կը կրծէր դինք։ Հանգիստ չէր տար։ Զըլլայ թէ Բո՛ժէ Միջինին հետ զացած ըլլայ։ Այդ ընթացքով կը կարծէր ինքզինք։ Ինք մը փոքր էր։ Միայն այսքան։ Ինք աւելի գրաւիչ էր։ Տղաքը միշտ կը հաստատէին այս իրողութիւնը։ Բո՛ժէն կորուստը գինք չէր տանջեր։ Ոչինչ գինք կը կապէր այդ տղուն։ Նոյնիսկ կրնար ատել, ինչպէս այս վայրկեանին։ Սակայն տղու մը կողմէ անտեսուելու դադարաբին հետ չէր կրնար հաշտուիլ։ Ուղղակի վախճան մը պիտի ըլլար։ Եթէ Բո՛ժէն իրապէ՞ս չգայ։ Միշտ կը կ'երթար։ Ծուռով հրաժարեցաւ այս գաղափարէն։ Մարդիկ պիտի հեզնէին գինք։ Վարկ մը ունէր։ Վարկ մը որ հիմուած է...։ Զյանգիւնեցաւ շարունակել։ Զփոքմեց հասկնալ թէ ի՞նչ գին վճարած էր

հասնելու համար այս վիճակին: Ձէ՞ որ ամէն վճարում պահանջի մը գոհացումը կ'ենթադրէր: Նկատի չէր առնէր սակայն թէ անհաշիւ վճարումները ո՛ւր կ'առաջնորդէին դիմք: Միթէ կարելի՞ էր գոհացնել իր հաճոյստէր հոգին: Իր միակ մասնագութիւնը ներկայիս, Բոսթէին ուշացումին պատճառն էր: Փորձեց ինքզինք խորհել: Երբեմն կը դիմէր այս միջոցին: Գուցէ անհանդիստ էր: Արեւմտի մը հանգիպած կրնար ըլլալ: Կը նախընտրէր վերջին հաւանականութիւնը, անտեսումի մը: Եթէ հեռաձայնէր Հանրիին պարահանդէս երթալու...: Եթէ ան ալ մերժէր եւ երթար իր բարեկամներուն պատմէր: Ապա ի՞նչ պիտի ընէր այսպէս մինակը:


Ձղաղբաբէր կ'երթեւեկէր օնեակին մէջ: Մտածութիւնը կը մրճահարէին քունքերը: Լորձուէքը ցամաք էր կարծես: Կոկորզը կը չորնար: Կիսաւարտ ծիւիկներու կոյտ մը ճղմուած էր մոխրամանին մէջ: Յանկարծ սրեց ականջները: Ինքնաշարժի մը աղմուկն էր: Պատշաճ մղղկոյն: Ձէր սխալած: Փողոցին անկիւնը ինքնաշարժի երկու լոյսեր նշմարեց: Մուրճը ճեղքելով կը յառաջանային: Որքան խոշորնային լոյսերը նորին օւժգին կը արոփէր սիրտը: Համակ սպասումի վերածուած էր: Կը մօտենային լոյսերը գետինը աւելնով: Ահլընթարթ մը կասկածէ աւերուած իր դէմքը լուսաւորեցին անոնք: Իրեն այնպէս թուեցաւ թէ կանգ կ'առնէին: Սակայն ոչ: Երեւակայութեան խաղ մըն էր: Կը հեռանային լոյսերը: Կը պղտիկնային: Կը մարէին յոյսի վերջին նշոյլը: Այլեւս պիտի չգար:

Թոյնի մը նման կուլ տուաւ այդ անարդարութիւնը: Չայրոյթը վարակեց դիմք: Հաղիւ կրցաւ ինքզինք թիկնաթոռին վըրայ նետել: Աչքերը, ճակատը կ'ալարէին: Շնչահեղձ պիտի ըլլար կարծես: Երեւակայութիւնը սովորականէն արագ կ'աշխատէր: Դէպքեր կը յիշէր: Դէպքեր՝ որոնց թաքուն իմաստը կ'ըմբռնէր այլեւս: Կը հասկնար թէ ինչո՞ւ Գուրգէն լքած էր պինք: Օր մը հարցուցած

էր անոր, թէ իրենց յարաբերութիւնը ո՞ւր պիտի յանգէր: Գուրգէն հեռացած էր եւ չէր տեսնուած: Բո՞ժ վերջին պարահանդէսին կարմրած էր իր ներկայութենէն: Փորձած էր խուսափիլ իրմէ ծանօթիներու առջեւ: Ահագին ճամբայ կըտրած էր այն օրէն, երբ աղու մը նայուածքէն կը շփոթէր: Ձկնացաւ դիմադրել կասկածին: Կը վախնար թէ շիղերը տեղի պիտի տային: Փոյթը չէր թէ ի՞նչ կրնային մտածել: Հեռաձայնեց Բոսթէին: Ան տուն չէր: Գոյրն էր խօսողը: Ըսաւ թէ Բոսթէն պարահանդէսի դացած է Միւրէին հետ: Հեղինաք մը զգաց այդ աղջկան շէշտին մէջ: Հագիւ կրցաւ գոցել հեռաձայնը:

Ամբողջ աշխարհ մը փուլ կու գար իր մէջ: Յետին ճիւղով մը կը յամառէր էտմոն, Հանրի, Բօպէր...: Սակայն պայթարը միշտ անմատչելի մնացած էր իրեն: Անորոշ ուժեր զինք կը քաշէին վար, դիտնաբարձ կիրքերու լարմուն գետին մը: Ձէր դիտեր թէ որքան մնաց այդպէս խորտակուած, հեռաձայնին առջեւ: Չայրոյթի ու նախանձի արցունքները կը սահէին այտերն ի վար: Արցունքներ՝ որոնք աւերիչ ծարաւ մը կու տային իր հոգիին:

Ինքնաբերաբար ինքզինք դտաւ հայելիին առջեւ: Այդ ապակիի կտորէն քաղած էր իր ուժերը: Ան ալ այլեւս կը գաւաճանէր: Շպարը վնասուած էր արցունքներէն: Ներկերը այլանդակօրէն կ'ազդեցին դէմքը: Չարութեամբ կը սեւեռէր մազերուն ծայրը օրօրուող ծաղիկը: Անոր յորդուն զեղեցկութիւնը աւելի կը հրահրէր տանջանքը: Չափազանց կոպտօրէն իրեն կը յիշեցնէր անցեալ մը: Ձէր կրնար հանդուրժիլ այլեւս գեղեցիկին, անմեղին: Գետին նետեց ծաղիկը ու կոխկոտեց: Վայրկեան մը աչքերը դաժնուած մնացին այդ տորոտած ծաղիկին, որ արիւնոտ վէրքի մը երեւոյթը ունէր: Ապա մտրեց լոյսը: Մուրճը կաղզուրիչ թուեցաւ իրեն: Կը ծածկէր մարդկային տեղգութիւնները:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Գրեց՝ Ն. ԱՂԱՍԻԱՆ

Հինգերորդ դարից սկսած Հայաստանը դադարում է ունենալ քաղաքական միութիւն: Արաբական արշաւանքները կտարում են հայի ուղղական ուժը, թէեւ չեն ոչնչացնում նրան: Դարաւոր աղէտները ընկնում են հայի խիղախ ոգին: Հայութիւնը դիմադրում է բախտի չարաղէտ հարուածներին՝ բայց ոչ իբր քաղաքական մի մեծ միութիւն, այլ իբր մի ընդարձակ, բայց հատուածների բաժանուած աշխարհ: Թ.Պ. դարում արած փորձերը ստեղծել մի ընդհանուր հայկական պետութիւն՝ անցնում են անարդիւն: Հայաստանը միշտ մնում է մի քանի հայ իշխանութեանց հարեւանութիւն, որոնց մէջ չկայ ընդհանուր կապ:

Այս անջատ իշխանութիւնները, որ բաւականաչափ զօրեղ են իրար դէմ կանգնելու եւ իրար չէզոքացնելու համար՝ անզօր են արտաքին թշնամիների դէմ: Դրա հետեւանքը լինում է երկրի ընդհանուր թուլութիւնը եւ հայութեան աղէտալի վիճակը: Զկայ քաղաքական ըմբռնում վերահաս չարիքների եւ մտաւորական դասը բացատրութեան համար դիմում է կրօնին: Մեղքի հատուցման վարդապետութիւնը, որով հինգերորդ

դարում փորձում էին անհատների բախտը բացատրել, դառնում է մեկնութիւն համապային աղէտների, եւ պատմագիրները ողբասացներ դարձած՝ կշտամբում են Հայերին նրանց բարոյական յանցանքների համար եւ քարոզում են աղաշխարհութիւն ու դարձ: Քաղաքական իմաստութեան վերջին նշույլները չքանում են հայ գրականութեան միջից. պատմագիրները վրեժականներ ու կրօնաւորներ են բառի միջնագրեան առումով: Կրօնաւորի հոգեկան կղզիացման միջից նրանք նայում են քաղաքական դէպքերի թաւալումին եւ ամէն ինչի մէջ պատուհասող նշովայի մասն են տեսնում: Փառատոսի զուարթ տրամադրութեան, Փարպեցու լրջմտութեան, Խորենացու զայրոյթին յաջորդում են Դրասխանակերտցու եւ Լաստիվկերտցու ողբերն ու հառաչանքները:

Եւ նարեկացին երկնում է իր հանձարեղ դործը, միակ հանձարեղը մեր գրականութեան մէջ, որովհետեւ նա լուծում է հայութեան հոգու մեծագոյն կեճիւղը: Եթէ մեղքն է, որ բերում է այնքան աղէտներ, ապա ուրեմն պէտք է պղջալ ու քաւել մեղքերը: Եւ նա հանձարում է վեհագոյն քանաձեւերը ան-

կեղծ զղջումի, կոծում է կուրծքը ոչ միայն այնպիսի մեղքերի համար, որ կատարուած են իբրեւ իրողութիւն, այլ եւ այն մեղքերի համար, որ իբր միտք, իբր ծագում անցել են նրա գլխով: Պէտք էր սպասել ԺԸ դարի վերջերին (Շահա-միրեան) մի նոր ձևով ըմբռնելու հա-մար հայութեան անօրինակ աղէտների պատճառները եւ այնուհետեւ պէտք է անցնէր աւելի քան մի դար, որ Հայերն իրենց նոր ըմբռնումի համեմատ ազգա-յին դործունէութեան նոր եղանակների դիմէին... Զարմանալի է, որ Նարեկը զարմաւ Հայի երկրորդ զերջը Աւետա-րանից յետոյ, նա հանձարեղ արտայայ-տութիւնն էր այն հոգեբանութեան, որ մշակուել էր մեր պատմական տառա-պանքների ճամբին. տառապանքներ, որ պնդում սասակացան եւ ամբարշտին Նա-րեկի պատուանդանը:

ԺԱ դարի սկիզբներից Հայն արդէն նեղում է իր հայրենիքում. կիսափայ-րենի վաշկատուն ժողովուրդներ հրում են նրան Արեւելքից: Բարբարոս գրոհի դէմ լուծւում է Հայաստան աշխարհի միութիւնը: Հայ աւագանին քաշում է լեռների ծերպերն իր ազատութիւնը պա-հելու համար եւ խոր ու մթին ձորերում ապաստանում է ժողովուրդի ապահո-ւթիւթիւնը: Մաղկած դաշտերն ու մեծ քաղաքները դառնում են օտարների ա-ւարին ենթակայ, կամաց-կամաց օ-տար ցեղեր հաստատւում են մեր երկ-րում: Շատերն իշխաններից անկարող տոկալու ծանր պայմաններին՝ հեռա-նում են դէպի Արեւմուտք, նրանց յե-տեւից գնում է ժողովուրդը: Եւ ճաւրո-սի դադաթներին ստեղծւում է մի նոր Հայաստան եւ նոր հայկական իշխանու-թիւն, որի հովանու տակ Հայ միտքը մի անգամ եւս զրդում ստանալով յոյն դըպ-րութիւնից՝ ստեղծում է մի հարուստ գրականութիւն: Յունականին աւելանում է մի նոր ազդեցութիւն՝ արաբականը, որի հետեւանքով վերակազմւում է Հա-յոց տաղաչափութիւնը: Մատենադրու-թեան Հին ճիւղերը շարունակում են գե-րելիս: մեկնութիւններ, սրբոց վարքեր,

կրօնական բանաստեղծութիւն, ճառեր: Սրանց աւելանում է բժշկական գրակա-նութիւն՝ արաբականի հետեւողութեամբ եւ աշխարհիկ լեզուով. «Վիպական» դը-րականութիւն՝ մեծ մասամբ առականեր եւ արեւելեան զրոյցներ. վերջապէս ի-րաւագիտական գրականութիւն, որ հը-նումն զոյութիւն չունէր, եթէ չհաշուենք այն հաւաքածունքը, որ բովանդակում են եկեղեցական ժողովների սահմանած կանոնները:

Այս շրջանում է դարձեալ, որ ռամ-կօրէնը դառնում է գրական լեզու. նա յաւակնութիւն չունի գրարարին փոխա-րինելու, բայց ապրում է նրա մօտ զը-րական այնպիսի ճիւղերում, որոնք սահ-մանուած են լայն խաւերի համար: Սա մի կէտ է մեր լեզուի ճամբին, ուր աշ-խարհաբարն ու դրարաբը հանդիպում են իրար երբեմն նոյն գրչի տակ (Շնոր-հայի): Երեսնորդ մէկը իջնում է վար, միւսը յաճում է Թափառական՝ մինչեւ ԺԹ դարի կէսերին դառնում է միակ զը-րական լեզուն:

Կենդանական իշխանութեան անկու-մով եւ երկրի հատուածումով՝ խոն-դարւում է նաեւ Հայոց գրականութեան միութիւնը. ծաղկում է որեւէ վանք Հա-յաստանի այս կամ այն կողմում, մեծ մասամբ այնպիսի վայրերում, որ դը-ռուարկոյն են թշնամու համար: Այդպէս է մօնառանդ այն ժամանակ, երբ Մեծ Հայքում քայքայւում է Հայոց քաղաքա-կան իշխանութիւնը սեղանակների արշա-ւանքների հետեւանքով: Դարոցն ու գի-տունը քաշւում են երկրի կեդրոնից դէ-պի Հայաստանի եզերական դաւառները եւ առանձնութեան մէջ գրում ու ստեղ-ծագործում են երկեր, որոնք ապրում են նեղ շրջաններում: Այլեւս չկայ Հա-յոց ընդհանուր գրականութիւն, ինչպէս չկայ Հայոց մի եւ ընդհանուր իշխանու-թիւն: Պատմագիրներն անգամ գրում են ոչ թէ ընդհանուր Հայոց պատմութիւն, այլ այս կամ այն դաւառի, շրջանի եւ նախարարութեան պատմութիւն: Այդ-պէս է Յովհ. Մամիկոնեանը, Թ. Արծ-րունին, Կաղանկատուացին, Սա. Օրբէլ-

եանը, Հեղինակների հորիզոնը նեղացել է. նրանք տեսնում են իրենց գաւառը կամ նահանգը, իրենց նախարարական տան ճակատադիրը: Չկայ այլեւս հայու-թիւն ոչ քաղաքական եւ ոչ ազգային իմաստով. կան անջատ իշխանութիւններ եւ ազգի անջատ հատուածները նրանց երկրի սահմաններում: Զօրեղ ազգային դիտակցութիւնը, որ մենք նկատում ենք Փաստաւոր եւ խորհրդացու մէջ, չքացել է բոլորովին: Կամաց-կամաց Հայն իրան հակադրում է չըջապատին ոչ իր ուրոյն ուղղ ու ուղիւս, այլ իր ուրոյն գաւառ-նութիւն ու ժողովուրդ: Հեթանոս սել-ջուկը եւ մասնեղական արարը չեղտում են հայի ինքնագիտակցութեան մէջ կրօնական կողմը. ազգային-քաղաքականը նսեմանում եւ չքանում է:

ԺԳ. դարից սկսած մինչեւ ԺԷ դարի կէսերը հայոց դրականութեան կերպարները փոխում է՝ հայ կեանքի կըրած փոփոխութիւններին զուգահեռ: Թաթար ցեղերի արշաւանքները յեղաշրջում են մեր երկրի ազդեցական-կան, քաղաքական եւ վարչական կերպարները: Այդ փոփոխութեան համար Մեծ Հայաստանում հողը պատրաստուած էր դեռ նախորդ դարից՝ սելճուկ-ների արշաւանքով:

Ռախտում է հայ ազգաբնակչութեան միապաղաղ հոծութիւնը: Վաչկատուն ցեղեր հեղեղի նման թափուելով մեր երկիրը՝ տեղատուութեան ժամանակ լճակ-ներ են թողնում նրա ընդարձակ տարածու-թեան վրայ:

Բնական աճումով նորեկները բազմանում են, նեղում են հարեւան հային եւ բռնում են նրա բնիկ երկիրը, այնպէս որ նոր դարերի սկզբին մենք տեսնում ենք Հայութիւնը փոքրիկ կղզիներ դարձած՝ այլատարր եւ օտար ցեղերի անծայրածիր ծովի մէջ: Հայաստանը այլեւս հայաբնակ երկիր չէ միայն. այն-տեղ վրան են դարկում վաչկատուն ժողովուրդներ, որոնք գտել են մի նոր հայրենիք, ուր ընդարձակ արօտներ կան նրան հօտերի համար եւ մի աշխատանքի ժողովուրդ, որ հնազանդութեամբ հարկ

ու տուրք է վճարում: Ընդունելով մահ-մեղական կրօն, այս նոր բաղմութիւնը հակադրում է իրան հայերին ոչ միայն որպէս մի ուրոյն ժողովուրդ եւ տիրող տարր, այլեւ իրրեւ ուրոյն կրօնական միութիւնը, որով դառնում է հայու-թեան լիւրին մի տեւական պատուհաս: Այս հանդամանքը աղէտաւոր հետեւանքներ է ունենում հայութեան հա-մար:

Հայը դադարում է քաղաքական պատմութիւն ունենալ: Կայ ընդհանրա-պէս Առաջաւոր Ասիայի քաղաքական պատմութիւն միայն, որ լիքն է այլա-տարր ժողովուրդների ընդհարումներով: Հայ ժողովուրդը օտար ազգերի ռաբից կոխան է այլեւս: Նրա աւագանին չքա-նում է շուտով. բերդ ու դէնք ընկնում են հայութեան ձեռքից՝ օտարի ձեռքն անցնելու համար: Երկրի երէկուան տէ-րերը այսօր հպատակ են եւ նախարարա-կան տների յետնորդները դառնում են վաճառական կամ կրօնաւոր: Հայն ու Հայաստանը գոյութիւն չունին իրրեւ քաղաքական միութիւն: Երկրին եւ ժողովուրդներին տիրելու համար դէնք են առնում եւ իրար դէմ են դուրս դալիս օտարները. Հայերը հայտնել են իրենց երկրի կորուստի հետ: Ազատութեան ուղին մեռնում է երկրի բովանդակ տարածութեան վրայ. մի երկու անառիկ վայ-րում դեռ մնում է մի փոքրաթիւ ժողո-վուրդ, որ փորձում է չափ դնել հարըս-տահարութեան, առանց վերացնել փոր-ձելու կամ կարողանալու:

Երկրի վարչութիւնն ամբողջովին անցած է օտարների ձեռքը, որոնք ան-խընայ կեղեքում են ժողովուրդին, առանց նրան պաշտպանելու. թշնամիներ-ից: Մեծ արշաւանքներն ու պատե-րադմները մի քանի անգամ հիմնովին ու-ւերում են ժողովուրդի անտեսութիւնը, որ նա ամէն անգամ փորձում է վերա-կանդնել, առանց վաղեմի դրութեան հաս-նիլ կարողանալու: «Ճաղաղ» տարիներում ժողովուրդը հեծում է սոսկալի հարկերի եւ կեղեքումների ծանրութեան տակ: Անկարող լինելով սոսկալու նոր պայման-

ներին՝ Հայութիւնը թողնում է իր բնիկ երկիրն ու մեծաքանակ խումբերով դադարում օտար աշխարհներ՝ Հանդիստ որոնեւ. պակասը լրացնում է Շահ Արքանը իր բռնի գաղթով:

Բոլորանգակ Հայութիւնն աշակիսով դառնում է մի անպաշտպան բազմութիւն, որ պոռթ է պահում կա՛մ փախուստով կա՛մ համակերպելով բարբարոս տէրերի անիրաւ կարգերին: Խաթարում է Հայի նկարագիրը եւ փարթա՛մօրէն զարգանում են նրա բնաւորութեան արատուոր կողմերը: Նա այլեւս չունի ոչ թաղաւոր, ոչ դօրական, ոչ գինուոր, ոչ իշխան, ոչ աւագանի եւ իր երգչի բերանով հարցնում է դառնագին.

...Ո՛ւր եմ մեր իշխանքն ամենայն,
Հօր մեծ Տրդատ արքայն, պարմայքն եւ իւր
գովակոյն.
Ջարքիք եւ տեսէ՛ք զմեզ, խեղճ եւ ոգորմն
կոկծակամ.
Ամէն ազգ իւրեանց վիճակն, եւ եղեալ եմք մե՛ք
ցիրաւցամ.
Գերի եմք ոգորմնիկ եւ ումէն ազգաց եմք
կոխամ.
Ոչ ունիմք մե՛ք քաղաւոր ոչ հօր զինուոր
զօրակամ...
Տառիկի՛ք տանցիմ երդման, իշուցիմ ի վայր
զամենայն.
Եւ սրոյ մարակ տուիմ, գերեցիմ զկամայն եւ
զուզամ...
Փառք քեզ, թագաւոր փառաց, որ բնոյ կս
զաղամեաց մարդկան
Փրկեալ եւ ազատեալ զմեզ ի յազգէն այս
խմայելեան(*):

Աղլային պատմութեան ազօտ յիշողութիւնը, որ երեւում է երգի առաջին տողերում, ժամանակի ընթացքում մըթազնում է եւ ժողովուրդի բաժին է մըթում երգչի յիշած կոտորածը, գերութիւնը եւ յոյսը ամենագէտ Աստուծոյ վրայ: Հայրենի գէնքն ընկած էր փշուր. հարիւրաւոր Փարսագների վրայ գոյութիւն չունէր ոչ մի քրիստոնէայ դօրութիւն. միակ յոյսը Աստուած էր մնացել. եւ ժողովուրդը բռնում է նրա փէշը՝ իր

միտքարութիւնը գտնելով անշուք եկեղեցիներում եւ աւեր ու կիսաւեր վանքերում:

Եկեղեցին ստանում է շտեմնուած կարեւորութիւն, հոգեւորականը դառնում է ժողովրդապետ եւ ներկայացնում է իր հօտը աշխարհն իշխանների առաջ: Աշխարհական տարրի քաղաքական նշանակութեան մնացորդը փոխանցւում է հոգեւոր հովիւներին: Այս տեղէն եւ անդինուոր իշխանները դառնում են բերան Հայի տղաշանքին ու խնդրին: Կաթողիկոսն ու էջմիածինը դառնում են ազգային միութեան մարմնացումը եւ պահպանում են աղլութեան գաղափարը, որը վտանգուած էր քաղաքական կազմակերպութեան չբացումով: Աղլութիւնը նորինում է եկեղեցու հետ եւ հնայ քրիստոնէայ շտեմնութիւնը ստանում է իր ներքին խոր իմաստը:

Աղլային միութեան այս նոր օղակն եւս՝ եկեղեցին՝ ենթարկւում է դարաւոր փորձութեան: Առանց զինեալ պաշտպանի, յենուած միայն իր վարդապետների բարոյական եւ մտաւոր ուժին եւ հարուստների դրամական օժանդակութեան՝ նա անհաւասար կռիւ է մղում միարարների (ունիթոն) եւ եղբայրների դէմ, որոնք մտնելով մեր անպաշտպան ժողովուրդի մէջ՝ պառակտում են առաջ բերում եւ ստեղծում մի երկարատեւ ներքին պայքար, որ ջլատում է Հայութեան ուժերը: Թաթարական հորդանքը ոչնչացրել էին Հայի քաղաքական մանր միութիւնները. պապի ծառաները պալիս էին Հայի բարոյական մեծ միութիւնը խարխելու, որ եւ մասամբ յաշնդունց նրանց:

Նախորդ չրջանի իշխանների փոխարէն, որոնք գէնքը ձեռին պաշտպանում էին Հայրենի ստացուածքն ու ժողովուրդը թշնամիներից, երեւում են մեծ վարդապետներ, որոնք պաշտպանում են Հայութեան վերին ստացուածքը՝ նրա եկեղեցին ընդդէմ նոր ոսոխների: Մահմադական ու կաթոլիկ հետամուտ են ոչխարներ որսալու հայ եկեղեցու փարա-

(*) Ա. Զօպանեան, Հայ էջեք, էջ 18:

խից՝ օտարացնելով եւ ապագայիացը՝ նեւով նրանց։

Թաթար ցեղերի եւ կաթոլիկ կրօնաւորների արշաւանքը Հայաստան ծանրապէս անգրադատում է հայ լեզուի վերայ որ համկի բերանում դառնում է թաթարաբան, իսկ մտաւորականի գրչի տակ՝ լատինարան։ Կաթոլիկ քարոզչի հետ մեր երկերը մուտք է գործում լատին լեզուն եւ միջնադարեան սքալտատիկ գիտութիւնը։ Գրարարի ուսումն ընկում է, թուլանում եւ դրա հետ եւ նախորդ գրական սերունդները ողջեցութիւնը նորերի վրայ։ Այսպիսով յայն մաքի փոխարէն, որով կրթում էր համարակը՝ (նախնեաց թարգմանութեան ու ինքնագիր վաստակների շնորհիւ), հրահանգէլ է հանդիսանում լատին միտքը։ Գրարար լեզուն, որ քչերին էր մատչելի արդէն՝ լատինարան դառնալով՝ աւելի եւս խորթանում է։

Ժողովուրդի անապահովութեան եւ աղքատութեան հետեւանքով՝ իրար եւս տեւից հանգչում են ուսումնական հաստատութիւնները բուն երկրում՝ հեռաւոր դպրութիւններում ժամանակաւոր ապաստան դառնելու համար։ Մտաւոր վայրենացումը մինչեւ այնտեղ է հասնում, որ վանականներն այլեւս չեն հասկանում նախնեաց գրութիւնները և գերմարդկային ճիգեր են թափում բմբունելու որեւէ իմաստասիրական կամ քերականական վաստակ։ Վանականը քայլում է իր խուցը եւ աւելի ուղօթում է ու ճրվում, քան ընթերցասիրտի եւ հեղինակում։

Հայութեան ընկերական կազմը ռամկացել է գլխովին։ Նա հողագործ է, արհեստաւոր կամ վաճառական։ Ձեռացած աղետական դասի տեղն անցնում է վաճառականը, երբ ասում են «խլիան»՝ հասկանում են հարուստ վաճառական՝ «խոջան»։ Նա է զեկավարում հանրութեան կեանքը, նա է տնօրէնում ազգային-հեղեցական գործերն իր ապրած շրջանում։ Հոգեւոր հովիւները նրա խորհուրդին են դիմում եւ նրա հետ

միասին են գործ տեսնում՝ երբեմն իրեւ համազօր, յաճախ իրրեւ օտորադաս իշխանութիւն։ Նրանք են դարձեալ, որ խառնում են համազգային գործերին, նրանց աղեցութեամբ են դահ բարձրանում պատրիարքներն ու հայրապետները։

Հային մնացել է երկու ասպարէզ. իր ընտանիքը եւ իր եկեղեցին։ Մէկն իր մասնաւոր շահերի կենդրոնն է, միւսն՝ իր ընդհանուր շահերի։ Գրականութիւնը յարմարում է Հայութեան ընկերական նոր կազմին եւ նրա երկնքի շահերին։ Բարձր գրականութիւնը, սր նախնեաց գրական գործունէութեան ժառանգորդն ու շարունակողն է՝ պահում է աւանդական գրարար լեզուն եւ պաշտպանում է Հայութեան ընդհանուր շահերը, որ նրա եկեղեցու մէջ են պարփակուած։ Մտեղծւում է մի բազմահատոր գրականութիւն՝ վիճաբանական բովանդակութեամբ, ուր նորագարծ Հայերն ու Կաթոլիկ օտարականները յարձակում են հայ եկեղեցու վրայ, իսկ հաւատարիմ վարդապետները պաշտպանում են նրան։ Այս գրականութիւնը աւելի հոշակ ունի, քան ընթերցող. գերիցա երանեալ վարդապետները գրում են աւելի հոգեւոր դասի համար. աշխարհիկ դասը չի զլանում իր նիւթական նպաստը. բայց նա իր յատուկ գրականութիւնն ունի արդէն։

Ընկերական նոր կազմի աղեցութեան տակ ռամկօրէնը դառնում է գրական լեզու. այս լեզուով հեղինակում ու թարգմանում են երկեր, որ մատչելի են աշխարհիկ դասի սրտին ու մտքին եւ դոհացում են տալիս նրա բարոյական եւ մտաւոր կարիքներին։ Հանդէս են դալիս միջնադարեան երգիչներն իրենց երգով ու տաղով, որոնց նիւթն առնում են ընտանեկան կեանքից կամ եկեղեցական աւանդութիւններից։ Պատմութեան տեղը բռնում է ազգային աւանդութիւնը, շարականի տեղը՝ դանձն ու տաղը, աստուածաբանութեան տեղը՝ խրատներն ու առակները։ Հազար բերանով երգւում է աշխարհի ունայնութիւնը,

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԻՆՁ ԿԸ ՊԱՀԱՆՋՈՒԻ ԳՐԱԳԵՏԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Եւ ատում եմ անա – ձեզ, որ պիտի երգե՛մ՝
Կարգալով մանկամն այս խորախորհուրդ, –
Քորհուրդ չի ընդունում ապագայի երգը, –
Եւ այս է իմ խորհուրդը եօթերորդ...

Ե. ԶԱՐԵՆՑ

«Եթե խորհուրդը զաւրի է երգաստեղծին»

1033, Փետրուար 16

Գրականութիւն ու արուեստ, սէրը
գրականութեան, ծարաւը արուեստին
մարդը կը յատկանշեն. առանց լեզուա-
կան կամ մշակութային տարբերութեանց
մարդը. մարդը՝ դեղեցիկի, ճշմարիտի
իր փնտրութեամբ. մարդը՝ առօրեայ, դի-
տակցական, ընթացիկ կեանքէն անդին,
վեր, խորքը գտնուող կեանքի մը հետա-
խուզութեան պայպակով. մարդը՝ մա-
ղլըցումի իր յաւիտենական ճիւղին մէջ:

Արուեստի ու գրականութեան ըմ-
բռնումները, սահմանումները տեւա-
բար քննութեան ենթակայ, փոփոխու-
թեանց հոլովոյթ մը կրած են մարդու
դարաւոր պատմութեան ընթացքին. ե-
ղած են նաեւ տարբեր՝ ըստ երկիրնե-
րու, ըստ քաղաքակրթութեանց: Անբնա-
կան չէ, որ վարչաձեւ մը, սովետակա-
նը, որ կը յաւակնի ներթափառական

վարդապետութեամբ մը ժողովուրդնե-
րուն, մանաւանդ զրկուած դասակարգե-
րուն, բարօրութիւնը բերել, իրաւունք-
ները ապահովել՝ զբանուորական դիկ-
տատուրայի մը շնորհիւ, փորձէ օգ-
տագործել գիրն ու գրականութիւնը,
վրձինն ու արուեստը, իրականացնելու
համար իր նպատակները, «առաջնորդե-
լու» համար իր հետեւորդները, իրեն
ենթակայ ժողովուրդներուն միտքն ու
հոգին, ոչպի իրեն համար գծած նպա-
տակակէտը:

Անբնական պիտի ըլլար սակայն, ե-
թէ սովետականէն տարբեր վարչաձեւի
տակ ապրողներ, ազատութեան մէջ
գտնուողներ, շնկատէին մարդկային հո-
գինն ու մտքին սպառնացող կաշկան-
դումները, արուեստին ու գրականու-
թեան վրէժն կախուող այս կամ այն ձեւի

չղթաները, ու չմտածանշէին զանոնք, ատիկա պիտի նշանակէր Հրաժարումը ազատութենէն, Հրաժարումը մտքի ու հոգիի անկաշկանդ թռիչքի իրաւունքէն՝ նախապոյժանքը ամէն իրաւ գրականութեան ու արուեստի:

Իսկ երբ երկիրը ու անոր վրայ ապրող ժողովուրդը, հոն ստողծապորժող դրողէան ու արուեստապէսը ենթակայ են կաշկանդումներով առաջնորդող վարչաձեւին, կրկնակի է պարտաւորութիւնը՝ քննելու թէ ի՞նչ կը պահանջուի իրենցմէ, եւ թէ ի՞նչ չափով, ի՞նչ ձեւով է որ կը չղթայուի անոնց միտքն ու հոգին, թէկուզ եւ բարձրադասակ պոռան անոնք թէ «իրենց ազատ կամքով է որ կը հետեւին պարտիայի պահանջներուն, գտնելով զանոնք ուղիղ եւ տեղին»:



Սովետական պայմաններու տակ ապրող, ստեղծագործել փորձող գրագէտներն ու արուեստագէտները վերջին տասնամեակին, Սթալինի մահէն այս կողմ, կ'ապրին նոր պայմաններու յատկացման, վերջնական ձեւաւորման շրջան մը, ուր երբեմն ազատութիւններ կը տրուին իրենց, երբեմն կը սանձրուին: Հակառակն ուժերու եւ մղումներու լուռ, կամ Հրապարակային պայքար մը տեղի կ'ունենայ ներկայիս, գրականութեան ու արուեստի ռահմանումներու, պահանջներու մարզին մէջ:

Ամենավերջին հանգրուանը այս պայքարին մէջ, Լ. Ֆ. Իլյիչովի արտահանած ուղեգիծ ճառն է, 1962 Դեկտեմբեր 17-ին խօսուած, գրագէտներու եւ արուեստագէտներու հետ իր ունեցած հանդիպումի ընթացքին: Հանդիպումը կազմակերպուած էր մասնաւորաբար երեսասարկ գրագէտներուն եւ արուեստագէտներուն գործերու քննութեան համար: Ներկայ էին կուսակցութեան եւ պետութեան ղեկավար ղեմքերը, հին ու նոր արուեստագէտներ, երաժիշտներ,

գրադէտներ, բանաստեղծներ, նկարիչներ, սովետական աշխարհին մաս կադմող բոլոր երկիրներէն եկած:

Սովետ Միութեան Համայնալար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի քարտուղար Լ. Ֆ. Իլյիչովի ճառը հայերէնով լոյս տեսած է Երեւան Հրատարակող «Գրական Թերթ»-ի 1963-ի թիւ 3-ի եւ թիւ 4-ին մէջ (Յունուար 18 եւ Յունուար 25) որոնցմէ միայն երկրորդը, թիւ 4-ի մէջ լոյս տեսածը մեր տրամադրութեան տակ կը զտնուի: Ի զուր փնտռեցինք թիւ երեքը, կարելի չեղաւ ձեռք ձգել: Որով, միայն այդ երկրորդ մասին մէջ արտայայտուած մտքերը, առաջադրանքներն ու պահանջներն են որ քննութեան առարկայ պիտի ըլլան մեր կողմէ: Ամենահիմնական մասն է ան, անկասկած, քանի որ կը պարունակէ եզրափակումը եւ գրագէտներուն առջեւ դրուած պահանջները:

Իլյիչովի ճառը վերնագրուած է «Ստեղծագործ երիտասարդութեան Ուժերը ի սպաս զնեւ Վեհ Իդէալներին»: Ճառին այս երկրորդ եւ վերջին մասին մէջ, պարտիայի Կեդ. Կոմ.ի քարտուղարը հետեւեալ նիւթերու շուրջ կ'արտայայտի, գրականութեան մասին, կենսարուեստի մասին (չարժանկարի արուեստ), թատերական գրականութեան եւ արուեստի մասին, եւ ընդհանրապէս գրականութեան ու արուեստի զարգացման դիտարկ գծերուն մասին: Քննենք հատուած առ հատուած:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՍԻՆ

Լ. Ֆ. Իլյիչով կ'ըսէ՝ «Կեանքում տեղի են ունենում մեծ փոփոխութիւններ ու վերափոխումներ, մօրի ու հնի պայքար է մղում, ճորը, երիտասարդը, կոմունիստականը ամրամուծում ու յաղթում է: Վերջին տասը տարիների ընթացքում մեր ժողովուրդը բազմաթիւ իրանալի գրքեր է ստացել, որոնք գրտ-

ներում են սոցիալիստական մեծ մշակույթի մակարդակի վրայ: Բայց եթե նայենք մշակութային աչքի, ապա ինչո՞ւ անհիշող, սխալ բան կը գտնենք մանկ հեղափոխական գրականության մէջ: Այստեղ յաճախ առաջին բանն են անցնում ոչ թէ մարտիկները, այլ ազգայնականներ, երիտասարդներ ու աղջիկներ, որոնք ոչ մէկ կերպ չեն կարողանում իրենց տեղը գտնել կեանքում, մազ ու տուգ են անում, զժգոհող, քրքմեցացող երիտասարդներ:

Կա՞նք այսպիսի մարդիկ մեր կեանքում: Հաւանօրէն կան: Բայց մի՞թէ ճշմարտ է նման տանում մեր պանծալի երիտասարդութեանը:

Իլլիւշով կը շարունակէ, մատնանք չելով թէ «[ո]ւ տեսած գրական երկերից շատերն պակասում է քաղաքացիական բարքը: Մարտական բռնկւայի եւ արձակի փոխարէն, սովետական ընթերցողների աչքի առաջ երբեմն երեւում են խաղաղիքային գործեր, միօրեայ կեանք մեկնող գրութիւններ, այսպէս կոչուած «չաւերժական թեմաներով» լիրիկական ճառագիւղն ու ցլվոյց»:

Ապա քիչ անդին՝ «Որոշ, մոյնիակ շնորհալի գրողների համար յարգի չէ սովետական գեղարուեստական գրականութեան գլխաւոր թեման՝ մեր ժամանակակիցը: Կեանքը հրատապ կելլով զնում է երիտասարդ գրողների գաղափարական գեղարուեստական դիրքերի յստակութեան, արտասահմանեան մտային համակերպելու անթայլատելիութեան փորձաքննական լարախաղացութիւնները շնորհիմանկալու հարցը: Զե՞ որ յաճախ ձեռք մաշուրտիւնն ու միտումնաւոր քարոզութիւնը սփռում են գաղափարների ազատութիւնն ու մտքի լիակատարութիւնը»:

Կանգ առնենք նախ հոս, գլխու պատու տուող այս յայտարարութեանց դիմաց. լռելեայն, կամ ծածուկ կերպով դրուած արուեստի ու գրականութեան հետ ոչ մէկ կապ չունեցող պահանջներ

բուն դիմաց. ճնշենք զանոնք գրականութեան տեսանկիւնէն:

Պարտիայի Կեդ. կոմ.ի քարտուղարը, ստեղծագործ երիտասարդութեան ուժերը վեհ իտէայններու ի սպաս դնելու իր մարմնովն մէջ, կարգ մը նախադրեալներ կը գործածէ, որպէս ընդունում, որպէս անվիճելի ճշմարտութիւններ, անոնց վրայ կառուցելու համար արուեստի ու գրականութեան պարտադիր ձեւը. Իլլիւշով նախ կը յայտարարէ, թէ նորի ու հինի պայքարը պայքարն է ի նպատակով կոմունիստականին, որը ճամբանում ու յաղթում է: Ասիկա բնական կէտն է, եւ ոչ թէ անբնական իրողութիւնը, բացարձակ ճշմարտութիւնը: Որպէս տնվիճելի ներկայացուածը դեռ բուն վիճելին է, ոչ միայն մեղի համար, ոչ միայն արտաքին, ազատ աշխարհին համար, այլ նախ ինքն սովորական կարգերուն տակ ապրող ժողովուրդներուն, անոնց ապրումներուն ու ձգտումներուն արտայայտիչը ըլլալ փորձող երիտասարդ գրականներուն համար: Սակայն չենք ուզեր վիճել այդ մասին, քանի որ ատիկա պիտի առաջնորդէր մեզ հետո՛ւ գրականութեանն ու արուեստին: Անցնինք այս որպէս ճշմարտութիւն հրամցուած նախադրեալին վրայէն:

Իլլիւշովի յաջորդ յայտարարութիւնը նոյնպէս կը պարունակէ վէճի չենթարկուած նախադրեալ մը, այս անգամ գրականութեան ու արուեստի մասին, ուղղակի:

Իլլիւշով ճանճիչ ու սխալ բան կը գտնէ նաեւ գեղարուեստական գրականութեան մէջ, ուր յաճախ առաջին դիրք վրայ կ'անցնին եղբւր ոչ թէ մարտիկները, այլ ողորմելիները, երիտասարդներ ու աղջիկներ, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում իրենց տեղը գտնել կեանքում, նազ ու սուղ են անում, դժգոհ ու քրքմեցող երիտասարդներ» (ընդգրծումը մեզմէն):

Ո՞վ ըսաւ, ինչո՞ւ նախապայման է, որ գեղարուեստական գրականութեան մէջ առաջին դիրք վրայ պէտք է գտն

«մարտիկները». ուսում. գրականութեան գլուխ գործոցներէն Տոսթոյեւսի Ապուշը մարտիկ մըն է, մարտիկներ են արդեօք Չեխովի հերոսները, մի՞թէ կեանքը սուսածը միմիայն մարտիկներով կազմուած է եւ նոյնքան իրաւունք չունին դրադէտին ու արուեստագէտին ուշադրութեան, (եթէ ոչ աւելի) նաեւ. «ոգորմէիները», «որոնք ոչ մի կերպ չեն կարողանում տեղ գտնել կեանքում»...: «Ոճեր և պատկեր» գրքին հերոսը, Ռազմոյիբով, իր տեղը գտած է կեանքին մէջ, իր տեղը գտած մարդը դուրս չենք նետեր անշուշտ գրականութենէն, գրականութեան քրպէս նիւթի կարեւորութենէն, սակայն մի՞թէ անհամեմատ աւելի հետաքրքրական ու գրական որոնումներու կարեւորութիւններ ընծայող նիւթ չէ «իր տեղը չգտած մարդը», իր սոսալայտանքներով, փնտռողներով, անկումներով ու վերելքի փորձերով...

Չենք գիտեր ուղեք'ն են որ «գրողն» կը տանին պանծալի երիտասարդութիւն մը», սակայն իրողութիւնը այն է, որ քառասուն տարուայ ընկերվարութեան եւ կոմունիստի կառուցումի աշխատանքներէն ետք, քառասուն տարի շարունակ «մարտիկները» գովարանելէ, նկարագրելէ, հերոսացնելէ ետք, այսօր դեռ կան, դեռ երեւան կու գան մարդիկ, որոնք «իրենց տեղը կը փնտռեն կեանքին մէջ» ու «ողորմելի» կը կոչուին պետական կամ կուսակցական ղեկավարներու կողմէ, եւ «մարդ» կը կոչուին գրադէտներու կողմէ, մարդ՝ որուն զգացական ու հոգեկան աշխարհը հարուստ նիւթ է գրականութեան ու արուեստին համար:

Պաշտօնական արհամարհանքով կարելի չէ մարդուն մէջի մարդը թաղել, զգացականը չորցնել, հոգեկանը ջնջել: Արուեստի ու գրականութեան սահմանում մը, նման նախադրեայներու վրայ կառուցուած, ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱՅ Է ԸԼԱՒԱՆՈՒ ԱՆԲՆԱԿԱՆ, ԵՒ ԱԲԱՋՆՈՐԴԵՂՈՒ ԳՐԱԳԵՏԸ ԽՕՍԵԼՈՒ ԽԱՒԱՔԱՐՏԷ ՄԱՐԴՈՑ ՄԱՍԻՆ, ԱՅՍԻՆՔՆ ԿԵՂՄԵՂՈՒ, ՍՏԵԼՈՒ:

Ըսել չենք ուզեր որ կարելի չէ գրել, եւ արժէքաւոր դործեր գրել, «գրական հերոսներու» մասին, իրական մարտիկներու մասին. ինչո՞ւ չէ, անոնք ալ կան, կ'ապրին, մարդ են. ՍԱԿԱՅՆ ՆՈՅՆՔԱՆ, ՈՐՔԱՆ ՄՆԱՑԵԱԼՆԵՐԸ, Հերոսն ու մարտիկը կարելի է աւելի հաւելի, աւելի վարձատրել, փառաւորել աւելի քան ուրիշ մը, եթէ կ'ուզէք, սակայն ՄԱՐԴՈՒ ՄԻԱԿ ՏԵՍԱԿԸ ՉԵՆ ԱՆՈՐՔ, եւ երբ կեանքը ունինք որպէս նիւթ գրականութեան ու արուեստի, ՄԻԻՍՆԵՐՆ ԱԼ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՆ ԿԵԱՆՔԻՆ, ՀԱՒԱՍԱՐԱՊԷՍ ԿԵՆԴՈՒՆԻ, ՀԱՒԱՍԱՐԱՊԷՍ ԱՐԺԱՆԻ ԳԵՂԱՐՈՒՆՍՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԻԻԹ ԴԱՌՆԱԼՈՒ:

Եթէ իրօք պանծալի երիտասարդութիւն մը «գրողի կ'երթայ» առաջնորդուելով ոչ թէ այդ «ողորմելի»ներով, այլ «մարտիկներու», «հերոսներու» խումբակի մը կողմէ, ալ ի՞նչ պէտք կար մը տահադուելու, յիշեցնելու այդ քանի մը «ողորմելիներու» գոյութիւնը: Բայց այդպէ՞ս է, քանի մը համ եւ միայն... Ոչ: Ու ատոր խոստովանութիւնը կը կառարէ ինքը, Լ. Ֆ. Իլիչով, երբ կը գրէ՝ «Լոյս տեսած գրական երկերից ԵԱՏԵՐԻՆ (ընդգծումը մերն է) պակասում է քաղաքացիական բաթոսը»:

Դարձեալ հարց կը ծագի, ինչպէ՞ս կրնայ «քաղաքացիական բաթոսը» ըլլալ չափանիշ գրական արժէքի, արուեստի կշիռումի ժամանակ: Ինչո՞ւ անպայման «մարտական բռնցիկ» եւ «մարտական արձակ» պիտի ըլլայ սովետական ընթերցողներու աչքին առաջ, որպէսզի գրագէտին դրածը չկոչուի «այսպէս ասած «յաւերժական» թեմաներով լիբրեական ճոռուղին ու ճլվլոց»... Մի՞թէ Պոլէրի մը, Վէրլէնի մը ստեղծագործութիւնները ճլվլոցներ են, ճոռուղիներ են. մի՞թէ յաւերժական չեն Շէյքսպիրի մը ընտրած թեմաները... Եթէ չեն, ինչպէ՞ս է որ մինչեւ այսօր կ'ապրին, կը կարդացուին, կը տպաւորեն, հիացմունք ու ապրում կ'առաջացնեն իրենցմէ հա-

բիւրաւոր տարիներ հաջորդելու, հիմնովին պարբեր տնտեսական ու քաղաքական պայմաններու տակ ապրող, ամէն գոյնի հաւանք վարդապետութեան տէր մարդոց մօտ:

Երբ գրականութեան ու արուեստի մասին խօսած ու գրած ժամանակ նման սահմանափակումներ կը կատարեն, նրման կանխորոշումը ու վարդապետական պայմանաւորումներ կը դնեն արժէքաւորելու համար կտոր մը, երբ մանաւանդ հակառակ քառասուն տարինուրէն ցոյց տուած փորձառութեան կը շարունակեն դրապէտէն պահանջել ՄիտոՏ ՈՒ ՄԻԱՅՆ ՆՈՅՆ ԹԵՄԱՅԻՆ ՇՈՒՐՁ ԳՐԻՆԷՆ, չնն աւարդաւոր մարդիկ, թէ ԱՅԻ ԹԱՄԱՅԻՆ ԿՐԿՆՈՒՄԸ ՊԱՀԱՆՔԻ ԻՍԿ Է, ՈՐ ՏԵՐՈՂ, նոյնիսկ չընորհալի գրողներէ համար (մենք պիտի ըսէինք՝ «մանաւանդ շնորհալի, արուեստագէտ գրողներուն համար») անյարգի կը դարձնէ սովետական գեղարուեստական գրականութեան գլխաւոր թեման՝ «ժամանակակիցը»... Վերջի վերջոյ, ԼԹԷ մինչեւ անգամ իրօք շատ զգուշացիլ ըլլար սովետական ժամանակակիցը, (բան մը, որուն մասին առնուադն կասկածիլ կարելի է, տեսնելով Սթալինեան շրջանի դոպտասաններէն ետք, նոյն այդ Սթալինեան շրջանին ահաւոր գեներալ մը ըլլալու խոստովանութիւնները, այսօր) ու խանգարող, ներշնչող գրապէտին համար, բանաստեղծին, նկարիչին, երաժիշտին, արձանագործին համար, ՎԵՐՁ Ի ՎԵՐՁՈՅ ԿԸ ԶԱՆՁՐԱՆԱՆ ՄԱՐԴԻԿ ՇՈՒՐՁԻՆ ԵՆ ՆՈՅՆ ԵՐԵՐԸ ԿՐԿՆԷՆ, կը ձանձրանան մանաւանդ, ՈՒՐԻՇԻՆ ԼՐԱՀԱՆԳՈՎ ԳՐՈՒԵՆԻՐ ԵՆԻՐԸ ԸՆՏՐԵԼԷՆ ԵՆ ՈՒՐԻՇԻՆ ՈՒԶԱՐԸ ԶԵՆԻՐՈՎԸ ԶԱՅՆ ՄՇԱԿԵԼԷՆ:

Եթէ սովետական ժամանակակիցը ներշնչող է, (եւ անկասկած որ կար ժամանակ մը, սկզբնական թափի, գաղափարական մեծ ուսումի շրջանը, երբ յեղափոխական ալիքը կրնար ներշնչող ըլլալ, ու եղաւ՝ կարգ մը արժէքաւոր

բանաստեղծներու համար) այն ժամանակ կարելի է չկայ ՄԷՋ ԸՆԴ ՄԷՋ ԹԵՆՇԵՆԵԼԻՈՒ արուեստագէտներուն, թէ պէտք է իրենց ժամանակակիցէն ներշնչուին. այդ ներշնչումը ինքնաբերաբար կու գայ, եւ կը ծնի, ծնունդ կու տայ արուեստի կնիքը կրող, արժէքաւոր գործերու: Ռուսական յեղափոխութեան սքանչելի երգիչը եղաւ նոյն ինքն Ջարենցը. սակայն առանց հրահանգի, երբ դաջ թափը յեղափոխութեան, գաղափարական անոր: Նոյն Ջարենցը, տասնըհինգ տարի ետք տարբեր ներշնչումներ ունէր, առանց նուազ արժէքաւոր գրադէտ ըլլալու, իսկ իր յեղափոխական շրջանի գրութիւններէն անոնք որոնք թիւածոյ են, անոնք որոնք «օրերի համար էր գրած» եւ ոչ գրերուն, անկենդան են, անարժէք են. եւ ինչ որ ահաւոր է՝ ի՛նքն իսկ զիտակցած է անոնց անարժէք ըլլալուն, ամեն վնասուած տուրք ըլլալուն:

Եւ յետոյ, սա միւս ճիշդ պնդումը, հաստատումը՝ առանց հաստատուն հիմերու, թէ «Կեանքը կը պահանջէ երկատեսակ գրողներէն իրենց գաղափարական դիրքերուն յատկութիւնը» այսինքն ըսելու կանգնած ըլլալը, որո՞ւ հետ ըլլալը կամ չըլլալը ճշդ էր. թէ՛ «Կեանքը հրատապ կերպով կը դնէ անթոյլատրելիութիւնը արտասահմանեան մօտային համակերպելու», թէ՛ «Կեանքը կ'արդիւնէ ընդօրինակել Ֆրիտայիտական (Լեոնել կ'ուզէ դրելու ձեւի) լարախաղացութիւնները»:

Կեանքը կ'արդիւնէ «արտասահմանեան մօտային համակերպելը»... Ինչպէ՞ս, ի՞նչ միջոցներով կ'արդիւնէ կեանքը ատիկա, շատ հետաքրքրական պիտի ըլլար իմանալ դրական այս նոր տեսութեան մանրամասն պատճառաբանութիւնը: Ի՞նչ ճամբաներով է որ ԿԵՆԵԼԸ կը դառնայ ոստիկան, պետական մարմին, կամ կուսակցական հրահանգող զեկաւաք, արդիւնէլու համար գրադէտին այս կամ այն նորոյթին հետեւելը, արտասահմանեան գրական նոր ձեւերը որդե-

դրելը. ոճի, գրելու ձևի, իւրայատուկ, գրագէտին յատուկ ձևի որդեգրումը... Կեանքը, թողուած ինքն իրեն, ՄԻԱՅՆ ԿԸ ՆՊԱՍՏԷ ՆՈՐ ՏԱՐԲԵՐՈՒ ՆԵՐՄՈՒ-ԾՈՒՄԻՆ, շփման մէջ դնելով մարդիկ իրար հետ, քաղաքակրթութիւնները քաղաքակրթութեանց հետ, մշակոյթները մշակոյթներուն հետ, կը մղէ ամէն մէկը, հաւնելու այս կամ այն երեւոյթը, այս կամ այն նորոյթը, եւ իւրացնելու դայն, քիչ ետք, իր ներքին բովէն անցնելէ ետք, վերարտադրելու համար դայն, որպէս նո՛ր գեղեցկութիւն, նո՛ր ճշմարտութիւն, բացուած նոր անկիւն մը իր էութենէն:

Արդիւոյը այս շփումներն ու նորարարութիւնները, կրնայ ըլլալ միմիայն պետական մեքենայ մը, կամ պետութեան ղեկը ձեռք ունեցող պարտիանալ մեքենան. ԵՐԲԵՔ ԿԵԱՆՔԸ:

Իսկ եթէ սովետական աշխարհին մէջ կեանքն ու պարտիան հոմանիշներ են, եթէ չկայ շուէշ ու ոգի պարտիայի կամքէն դուրս, այդ ուրիշ խնդիր է արդէն՝ դուրս մեր յօդուածի սահմաններէն: Մեզ հետաքրքրող է՛, ու կը մընայ, գրականութիւնը, արուեստը: Իսկ արուեստի մարդին մէջ, կեանքը նման արդիւններ չունի:

Ճիշդ է, Լերմոն ձեւի նախնութիւնն ու բարդութիւնները Վեր սքոլեն գաղափարներու աղբատութիւնն ու մտքի խեղճութիւնը, ինչպէս կը շեշտէ Բլոկիով: Սակայն նոյնքան ճիշդ է, որ ձեւի միօրինակութիւնը, դիտումնաւոր պարզացումը, ԱՐԳԵԼՔ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԱՐՈՒԵՄ-ՏԱԳԷՏԻ ՄԸ ՀՈԳԻԻՆ ԵՐԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՄԱՆ, կ'առաջնորդէ ամենահասարակ յայտարարին, որը կրնայ ըլլալ շատ դիւրաւ հասկընալի, բոլորէն ըմբռնելի, սակայն պարտադրուած ձեւ մը ըլլալուն իսկ, չի կրնար ըլլալ հեղինակին հարազատ ձեւը, անոր արտայայտութեան լաւագոյն զործիքը: Մինչեւ անգամ արդիւք կրնանայ դառնալ անոր «Հերոսական»-ի, «Մարտիկայինի, «Գրական»-ի, «Ժա-

մանականից»-ի մասին գրելիք գործին արժէքաւորման. ինչ որ պիտի չուզէր անշուշտ գրագէտին «կեանքը եղող, կեանքը սահմանող» պարտիան...

Քաղաքական կամ տնտեսական նըւաճումները, ընկերային պայմաններու փոփոխութիւնները, վերէն եկող պարտադրանքով չէ որ կրնան նիւթ դառնալ գրականութեան ու արուեստի: Անշուշտ, կրնան նիւթ դառնալ, փաստօրէն ահա քառասուն տարի է պարտադիր կերպով այդ է նիւթը սովետական տարածքին վրայ, եւ այս վերջին տասնամեակի ընթացքին տեղի ունեցող փոփոխութեան ընթացքին ահա կը ծառանայ պարտիան, ու «կեանքին» վերագրելով, կը պահանջէ երիտասարդ գրողներէն որ «Ժամանակակիցը» երգեն, «կոմունիզմը» երգեն, եւ երգեն առանց արտասահմանեան գրական հոսանքները ընդօրինակելու, կամ առանց ազդուելու անոնցմէ. առանց փնտրելու ոճի ու լեզուի իւրայատկութիւն. սակայն այս բոլոր պահանջներով հանդերձ, այդ բոլորը գրականութեան ու արուեստի նիւթ չէ որ կը դառնան, այլ անարուեստ գործերու, գրականօրէն արժէք չներկայացնող եւ միմիայն պետութեան, կամ պարտիայի ներկայացուցիչներուն կողմէ պնդատուող ու վարձատրուող գրքերու, դրուածքներու նիւթ:

Քաղաքական կամ տնտեսական նըւաճումները, ընկերային պայմաններու փոփոխութիւնները մարդուն համար է որ տեղի կ'ունենան. մարդն է անոնց նիւթը, եւ մարդն է նիւթը նաեւ արուեստին, գրականութեան: Մինչեւ անգամ նաքիւր մօրք մը, ուր քանի մը պտուղ, կամ աման կ'երեւան, մինչեւ անգամ մայրամուտի տեսարան մը, գրծուած նկարիչին կողմէ, երաժշտութեան վերածուած երգահանին կողմէ, կամ նկարազրական գեղեցիկ էջի մը վերածուած գրագէտին կողմէ, այդ տեսարանին առջեւ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԶԳԱՅԱՄ ԱՊ-ՐՈՒՄՆԵՐԸ, ԳՈՅՆԵՐՈՒ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆԵՐԸ, ՅՈՒԶԱԿԱՆ ԶԳԱՅՈՐՈՒ-

ԹԻՒՆՆԵՐՆ Է ՈՐ ԿՄՐՁԱՆԱԳՐԵՆ ՈՒ ԿԸ ՓՈՌԱՆՑԵՆ ԱՅԼ ՄԱՐԴՈՑ:

Իսկ մարդը... մարդուն միտքը, հոգին, ներաշխարհը... ոչ մէկ պետութիւն, ոչ մէկ բռնակալութիւն անգամ չէ կրցած կապտել զանոնք, արգելքի տակ առնել անոնց ներքին մղումները: Մարմինը գերել կարելի է, ներքին մղումներուն, երգներուն արտայայտումը արգելել կարելի է. սակայն ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԱՆՈՐՑ ՎԵՐԱՅՆԵԼ ԿԱՐԵԼԻ ՁԷ, ՀՐԱՀԱՆՂՈՎ անոնց նիւթ հայթայթել կարելի չէ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Երիտասարդ գրադէտներուն որպէս սուղութիւն տրուած է. Ծ. Բլիշնովի ճառին շարունակութենէն զանց կ'ընենք սինեմայի արուեստին կապակցութեամբ իր կատարած ցուցմունքները, շարունակելու համար թատերական գրականութեան մասին կատարուած մասնանշումներով:

Այս բաժնի կապակցութեամբ եւս երևան կու գայ նոյն մեղադրանքը՝ արտասահմանեան նորութիւններ կապակցելու, ամէն զնով իւրաքանչիւր ոճ, դրելով ձեռք բերելու մեղադրանքը:

Կը գրէ Բլիշնով. «Ինչ գնով էլ լինի իմ ֆանտազիան անելը յոյս չէ թիւարկելու ու տրամադարկելնրի գլխաւոր «ըստեղծագործական» խնդիրն է դարձել»... «Մենք քոյոյս կողմնակից ենք նորարարութեան եւ ստեղծագործութեան: Նոյնիսկ մի տեսակ տարօրինակ է խօսել այդպիսի ինքնին հասկանալի բաների մասին: Բայց այստեղ պէտք է շեշտել, որ մենք կողմնակից ենք այնպիսի նորարարութեան, որտեղ նոր ձեւեր ծնուած են թէ «ինչ գնով էլ լինի» օրիկնալութիւն անելու, այլ հանդիսատեսների գաղափարներ վեհութեամբ գրադելու, կեանքի նոր կողմերը, նրա անսպասելի զեղեկութեամբ բացայայտելու, իրենց հերոսներին սիրել տալու ցանկութեամբ հետեւանալով»:

«Մեր ֆանտատներից մի ֆանտազիան չսիրեցին «Մանր քեմա» բառը: Ասում են մանր քեմայով բիսներ չկան», այլ կամ մանր մտքեր: Բայց ճիշդ է արդեօք քեման ու միտքը իրար հակադրելը: Կեանքում, իրար կանգն, այնպէս է լինում, որ մանր քեմա ունեցող նրկերն էլ հենց մտքով աղքատ են լինում»:

Երկու հիմնական կէտեր կը ցցուին այս պարբերութենէն: Առաջինը՝ արդիւն է նորարարութեան, ինքնատուութեան, պահանջը՝ (դարձեալ ու միշտ) միաձուլութեան, միաձուլ գրականութեան, ամենապարզ ձեւի տակ գրականութեան: Նոր տարբերութեամբ կ'արտօնուի, պայմանով որ այդ նոր տարբերութիւնը նպատակին ծառայեն, մէկ նոր պատուիր ծառայեն. ոչ թէ հեղինակին համար ըլլան ինքնատուութեան նոր միջոց, նոր ճամբայ. այլ ըլլան նոր ձեւեր՝ հանդիսատեսին պատմելու համար, սիրցնելու համար միշտ հերոսականը, ահաբալեցողը, մարտկալինը, կառուցողը ընկերային կարգերը:

Երկրորդը՝ պահանջն է «մեծ նիւթեր»ու ընտրութեան, որպէս թատերական նիւթ. իսկ մեծ նիւթեր ըսելով, պարզ է, կը հասկցուին ընկերային նիւթերը, կոմունիզմի կառուցումը, նկարագրող, բացատրող, գովող նիւթերը:

Ինչպէս կը թուի, կարգ մը ընդհանրաներ, արուեստի, մանաւանդ թատերական արուեստի ըմբռնում ունեցողներ, առարկած են, իրաւացիօրէն, թէ գրականութեան մէջ չկայ մեծ նիւթ, մանր նիւթ. կայ միայն արուեստագէտը, ու իր մտքերը, կարծիքները նիւթին կապակցութեամբ: Առնենք Համբարձումը, որ կը տեղեկանայ թէ իր խորթ հայրը, իր հօրեգրայրը որ ամուսնացած է իր մօր հետ, սպաննած է իր հայրը, տիրացած է թագաւորութեան ու ամուսնացած իր մօր հետ: Այս յայտնութեան տեղեկանալով է որ կ'առաջանայ իր մէջ ներքին փոթորկումը, բախումը, լինել թէ չլինելու հարցը կը ցցուի իր դիմաց: Ուրիշ գրադէտի մը գրչին տակ, Համ-

լեղը կրնար դառնալ շատ վճռական անձնաւորութիւն մը, որ չունի եւ ոչ մէկ լինել լինելու հարց, առանց բոլորէ մը իսկ վարանելու, գիտէ թէ պէտք է լինել, ու ասոր համար պէտք է մէջտեղէն վերցնել իր հօրեղբայրը: Ուրիշ Համլետ մը կրնար ըլլալ այնքան վարանաւոր, այնքան թոյլ, որ վերջին հաշուով, հարցը կրնար փակուիլ իր համակերպումովը նոր պայմաններուն, երբեք երբեք միայն կոյտարներ ունենալով քնացած տեղը: Կամ կրնար իր երկրորդական թիւ մէջ ընտրել միայն իր անձին հետ կապ ունեցող գործողութիւն մը, և առանց ոչ ոքի մագին ձեռք տալու, կըրնար վերջ տալ իր կեանքին, ու այդքան միայն: Եթէ Համլետը Համլետ է՝ Եւրօքսիթի մը մտքերուն, մտածումներուն, հոգեբանական պնդումներուն, արժէքաւորումներուն պատճառով է: Ըսել չենք ուզեր անուշտ թէ մանր նիւթ մըն է Համլետի նիւթը՝ այլ միայն՝ թէ կարելի է զայն մանրացնել, ինչպէս կարելի է, երեւութապէս մանր թուացող նիւթի մը մէջ տեսնել մեծութիւնը, ցուցահանել զայն: Ի՞նչ է նիւթը Ձեխովի «Մոփու ջաշ»ին. կարելի է Զիծաղելի դարձնել զայն ըսելով թէ նիւթը Կիւրեյի, չսիրուեցայ, ան ուրիշ մը սիրեց, որ զինքը չսիրեց, տառապեցաւ, տառապեցայ, մէկը անձնասպան եղաւ այդ պատճառով եւ այլն»է: ու նիւթը կը պոկուի նոյ, հասարակ բան մը կը դառնայ: Սակայն երբ Ձեխովի բառերով, Ձեխովի մտածումներով կ'արտայայտուի նիւթը, կը մեծնայ, մարդկային հոգիին թաւըն ծալքերը բացող նիւթ մը կը դառնայ:

Ո՛չ, արուեստի տեսանկիւնէն ուղիղ չէ Իլլիովի յայտարարութիւնը թէ «Մանր թեմա ունեցող երկերն էլ հենց մտքով աղքատ են լինում»: Հակառակն է անվիճելիօրէն ճիշդը՝ «Մտքով աղքատ» մարդուն համար, հոգին անապառ մը եղող գրողէն զամար, Ո՞չ Մէկ Նիւթ Մեծ Ձէ, ոչ մէկ նիւթ բաւարար է, զայն տանելու համար արուեստի նուաճումներու: Որովհետեւ արուեստի նը-

ւաճում բոլորովն նախ եւ առաջ ներքին նուաճում մըն է, ներքը գոտնուող, մարդուն էութեան մաս կազմող, ու զեռ մը թին մնացած, դեռ անձանցիկ եղող դեղեցկութիւններուն, մեծութեանց, խորքին նուաճումն է:

Իլլիովի մատնանշած երկու կէտերն ալ չեն վերառներ զաղտնիքը սոսկ վետական թատերական գրականութեան տկարութեան, արժէքազուրկ ըլլալուն: Բուն պատճառը այդ սեռին մէջ արուեստի դերը շատեղծուելուն, տարիներէ ի վեր պարտադրուած «անկոփիկոտայնութեան» տեսութիւնն է, որը կը բխի դարձեալ եւ միշտ, պարտիայի քաղաքական եւ բնկերային վարդապետութեանէն, տեսակէտներէն:

Անկոփիկոտայնութիւն կը նշանակէ, թէ սովորական կարգերու տակ ապրող մարդիկ, հասած են ընկերային ապահովութեան, բարօր կեանքի, այնպիսի մակարդակի մը, այնպիսի բարձրութեան մը վրայ, զիւրեք չըջապատող, կոմունիզմի կառուցած նոր մարդիկը այնքան լաւն են, այնքան միմիայն շուրջիններուն, ընկերութեան օգուտը ուղղակի, լաւը ցանկացողներ, որ այլեւս ՈՐԵԻԻ ԲԱՆՈՒՄ ԿԱՐԵԼԻ ՁԷ ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱՅ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ, ԿՈՒՄՄՈՒՆԻՅԱՄԻ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ ԱՊՐՈՂ ՄԱՐԴՈՑ ԱՌՁԵԻ: Այս էր պարտադրուածը թատերագրին, մօտ երեսուն տարի:

Թատերագրի չէր կրնար դարձիլ անձնական տառամներով, հոգեկան փրկաւորաւորներով, զգացական այլաբանով՝ քանի որ պահանջը այն էր, որ այդ բոլորը պէտք է անտեսուէին ի խնդիր բնկերվարութեան ու կոմունիզմի կառուցումին. պնդումը այն էր, որ բանուորը, գիւղացին, պաշտօնեան, սովետական տարածքին վրայ, ուրախ են ու տրոխուր համեմատած ՄԻՄԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՎԱՅ ԹԻՆ ՅԱՒԱՋԴԻՄ ՈՒԹԵՆԱՅ կամ ՁԱՌՈՂԱՆՔԻՆ ՀԵՏ: Եւ որովհետեւ կարելի չէր ընդունիլ որ մախողանք կարենար դալ կոմունիզմի ճամբուն վրայ գոտնուող մարդոցմէ, կամ կուսակցութեանէն, պե-

տուժեան սխալներէն, ապա ուրեմն, կը մնար միմիայն ահեղ բնութեան մարդուն դիմաց հանած անակնկալ զոռւարութիւնները՝ հեղեղ, կարկուտ, միանաժրբիկ, ողորում, որոնք կրնային ձախողանքի պատճառ ըլլալ, եւ արտօնեցրնել մարդոց: Որոնց դէմ ալ ան պայքարի կ'ելլէր: Բախումը, թատերականներուն մէջ, տեղի կ'ունենար ոչ թէ մարդուն ներքեւ, կամ մարդուն եւ իր շուրջիններուն միջեւ, այլ միմիայն մարդուն եւ բնութեան միջեւ. եւ կամ բախում դուրսէն չէր ունենար, այլ միայն մըրցակցութիւն մը լաւի, եւ աւելի լաւի միջեւ, դերկատարման համար վաղք մը: Ընկերային պարտաւորութեանց գերկատարումը...

Այսպիսի սահմանափակումներով, այսպիսի զբախումներով թատերական գործ կարելի չէ ստեղծել, արուեստի գործ ըսել կ'ուզենք անշուշտ: Թատերակի մը կառուցողաժող, տեսարաններու կազմաւորումը, յաջորդականութեան գաղափարումը, գործողութեան մը դարգացումը դէպի գազաթը, ՄԻՋՈՏՆԵՐՆԵՆ, որոնք կը ծառայեն գրագէտին, իմ ՄՏԱՊԱՏԿԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՀԱՆԴԻՄԱՏՆԵՐԸ: Թէ՛քիքը թատերական գրականութեան՝ անկասկած որ անհրաժեշտ, բաւարար չէ, չի կրնար ըլլալ. արուեստի յաջող գործ մը արտադրած ըլլալու համար:

«Ամէն պօտ՝ գալիս՝ իր հետ՝
Մի ամտես մետ է բերում,
Եւ մետն առած, խոհակալած —
Որս է ամուսնի գրգռում.
Բայց դառնում է պօտն մա մեծ
Ոչ թէ մետի՝ մեծութեամբ,
Այլ մշտնի՝ անազնութեամբ,
Որ համարներ է սերում»:

Զարեհի այս սահմանումը իրաւրանաստեղծին, նոյնութեամբ կը յարմարի գրագէտներուն, արուեստագէտներուն. անոնց կարգին՝ թատերագիրներուն: Արտայայտուած մտածումներու «սահմանութիւնն» է որ յատուկ է տառազանդին, հանճարին, մեծութեան:

Արդ, արգիլելով բախումը, լաւի ու վատի, հինի ու նորի, եղածին ու եղածին տարբեր բաներու, սգեղին ու գեղեցիկին. կամ՝ շարգիլելու պարագային ալ, առնուազն սկիզբէն սահմանելով թատերագիրին համար թէ ի՞նչ բան լաւ պէտք է համարէ, ինչ բան՝ վատ, ոչ ոք, ո՛չ մէկ ատեն նպաստած կ'ըլլայ թատերական գրականութեան արժէքաւոր գործերու ծնունդին:

Պետական շրջանակները, կուսակցական ղեկավարները իրաւունքը ունին անկասկած քաղաքական իրենց տեսանկէտները ունենալու, եւ անոնց իրականացման համար ամէն ճիշդ թափելու. սակայն երբ կը փորձեն ԳՐԱԳԷՏԸ ՎԵՐԱԾԵԼ ԱՐՈՒՆԵՍԻ ԱՇԽԱՏԱՌՈՐՆԵՐՈՒ, ինչպէս ն. Խրուշչով կը յայտարարէր 1962 Դեկտեմբեր 17-ի դրուէտներու հետ իր ունեցած հանգիստման ընթացքին, պահանջելով անոնցմէ այսպէս բոսած տեսակ մը գրական հնգամեայ ըրլանի մը աստիճանական իրականացումը, կը շփոթեն գրքը գրականութեան հետ, գրագիրը՝ գրագէտին, եւ քարտուղարներու կը վերածեն արուեստագէտները:

Գրականութիւնը արդէն իսկ զօռուար ճանապարհ մըն է, նոյնիսկ տաղանդաւորին համար, առանց որ պետական հրահանգներ, «փափաքներ» գան անկարելի դարձնելու գայն: Թատերական գրականութիւնը աւելի եւս խոցելի է երբ ամէն կողմէ «աշխատանքային հրահանգներ» կ'ուղղուին իրեն:

Կը թուի թէ մինչեւ անգամ իրենք, օրուայ ղեկավարները կը գիտակցին տուր, քանի որ Իլյիչովի ճառին մէջ նշուողագոյնի իջած է քննադատութիւնը թատերագիրներու հասցէին:

Կամ թերեւս ատիկա ուղղակի է, որովհետեւ ճառին յաջորդող մտախ մէջ, գրականութեան եւ արուեստի զարգացման գլխաւոր գծերուն մասին խօսած ժամանակ, ամէն ինչ նկատի ունի, թատերական գրականութիւնն ու թատերագիրներն ալ միատեղ առած:

Բ. Փ.

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՀԵՏ

Մարդ բնական ռճի էրք նանդիպի՝ անակնկալի կու գայ եւ կը գմայլի, որովհետեւ հեղինակ մը կը սպասէր տեսնել եւ մարդու մը ցիւտը կ'ըմէ:

ՓԱՍՏԱՆ

Սովորական ճամբաներէ քալել չեմ սիրեր: «Հող էր ու դարձաւ ի հող» ըսկիցը եղած այս հաստատումը հաւասարապէս կը բնորոշէ արուեստագէտն ու մարդը Արամ Հայկազի մէջ: Իր դժբաղանթները իւրապատուէ է, որովհետեւ իւրապատուէ ապրումներու եւ դատումներու ցոլացումն է:

Խորապէս մարդկային՝ Արամ Հայկազ կը նմանի բոլոր այն գրողներուն, որոնց ստեղծագործութեան նիւթը մարդն է եւ մթնոլորտը՝ մարդկայինը: Կը տարբերի անոնցմէ իր ոճով, ո՛չ միայն զրելու, այլ նաեւ ապրելու ոճով: Տարբերութիւնը տարբերուն մէջ չէ, որոնք հասարակաց իրոքը կը կադմեն մարդկային վերաբերումին. անոնց համագործակցութիւնն ալ է: Այսպէս է որ կրնանք մասեր գտնել մեր էութենէն Հայկազի գրականութեան մէջ, առանց ամբողջովին մեր անձը զտնելու հոն:

Եւ եթէ արուեստի կալուածէն ներս երբեմն ձեւապաշտ չափազանցութեան կը հասնի այս ինքնութիւնութեան ձրգտումը՝ ապրումի եւ մտածումի կալուածէն ներս կը պահէ հարազատութեան բնորոշ կնիք մը, որ անկեղծութենէն կու գայ:

Անկեղծութիւնը գլխաւոր արժանիքն է հեղինակին ու գրականութեան,

միաժամանակ հիմնական տարրը, որ հրկուքը ամբօրէն կը միացնէ իրարու, կը զօղէ անբակտիւօրէն:

Յարաբերութիւններու, կարծիքներու ու մշակած գրականութեան մէջ անկեղծ եմ, կ'ըսէ Հայկազ: Բայց այս անկեղծութիւնը մարդկային ուղղամբութեան եւ մտաւորական պարկէշտութեան սոսկական արտայայտութիւնը չէ. նախնական անմեղդութեան մը, անբռնաբարեյի անաղարտութեան մը կնիքը կը կրէ: Բնական, այսինքն բնութեան կապուած եւ անոր անարատ ակունքնէն իր հոգեկան սնունդը ստացող մարդու մը անբռնադատ արտայայտութիւնն է, փրկութիւն հոգիի մը դրսեւորումի հարազատ կերպը:

«Իմաստունը կ'ապրի ապակիէ տան մը մէջ», կ'ըսէ Փրանսական առածը: Արամ Հայկազի գրականութիւնը կիրարկումն է այսպէս արտայայտուած ժողովրդական մտածումին: Իմաստունը պահելիք չունի, պէտք չէ ունենայ. իր մտածումներն ու ապրելակերպը մատչելի են բոլորին՝ հանրային սեփականութեան պէս: Ապակին, այս պարագային, անխոցելիութեան վկայական մըն է պարզապէս:

Յատկանշական է նկատել որ Արամ Հայկազ, անշուշտ առանց իսկ մտածե-

լու Ֆրանսական առածի մասին *), նըման միտք մը արտայայտած է նամակի մը մէջ, իր սովորական սրամտութեամբ համեմելով զայն:

Մեր տունը, զը գրէ, առաջին յարկի վրայ է եւ փողոցի մը վրայ կը նայ: Երբ մեր վարագոյրները գոցուած չեն, ամէն փողոցէ անցնող, մինչեւ մեր տունին առջեւէն հեռանալը, վիզը ոլորած կ'աշխատի մեր պատուհանէն ներս նայի՝ տեսնելու համար թէ ի՞նչ կ'ընենք: Կը կուռի՞նք, ապա՞ր կ'ուտենք թէ ոչ մեր գրամները կը համբեմք...

Իր հոգիի տունն ալ առաջին յարկի վրայ է եւ ամէն մարդ կրնայ ներս նայել, մասնա՞ որ ո՛չ կոնի մտածում կայ հոն: Ոչ առօրեայ տափակութիւններու արձագանգ, ոչ ալ նիւթապաշտ ձգտում: Իսկ իր հոգիի տունը իր ըստեղծագործութիւնն է: Այս պատճառով ալ կրնայ արդարօրէն աւելցնել. Ահա թէ ինչո՞ւ. իմ գրականութիւնը գրաւիչ է շատերում համար:

Գրաւիչ թաղը ճշդումի մը կը կարծախ: Ընթերցողի առաջին հակադէմքութիւնը կը յատկանշէ միայն: Սկիզբը ան կը զբաւուի եւ կը տարուի, հաճոյք կը զգայ. բայց անմիջական այս հաճոյքին աւելի խոր մայելք մը կը յաջորդէ. մաքուր հոգիի մը մտերմութեան մէջ ապրելու, կեանքի զեղեցկութիւնները միասին ըմբռնելու դիտակցութիւնը:

Արամ Հայկազ մեզ հաղորդակից կ'ընէ իր ապրումներուն, որոնք մարդերէն ու բնութենէն կու գան: Կը շնչենք այն միջուկը, որ իրն է, իր միջոցով կը հաղորդուինք իր շրջապատին: Կը զգանք, կը մերանանք իրեն հետ, կամ կը տատաղինք ու ցաւալին խորհրդածութիւններու կը տարուինք: Մասնակցութեան, համատեղ ապրումի, հաղորդութեան դրականութիւն մըն է մշակածը, բնութեան զեղեցկութիւնը:

Բոլոր ու խորհուրդով լիացած, մարդերու բարութեամբ ու սէրով ծանրացած:

Բարութիւնը, Արամ Հայկազի համար, ստացական առաքինութիւն մը չէ, կրթութեամբ, օրինակով կամ ճիշդով պայմանաւորուած: Մարդու ամէնէն խոր կապն է իր նմաններուն ու աշխարհին հետ, տեսակ մը հիմնական, մարդկային էութեան խորքը կազմող յատկանիւ: Գութի, բարեգործութեան ինթուցիկ արտայայտութիւններով չէ սովորականացած, աղարտուած: Վայրի ծաղիկի մը պէս է. պարզ, բայց զեղեցիկ: Համտկող:

Իր դրականութեան մէջ, բացի Քիւրտիստանի վերաբերող էջերէն, չար մարդեր չկան: Քիւրտիստանի Լեւոնի-Բոնի, Մէջի պատմութիւնն իսկ կը պահանջէ որ մարդիկը ներկայացնէ վաւերացողի հարազատութեամբ: Անգամ մը որդելէ հաք իր անձին ու փորձառութեան մէջէն ներկայացնել ամբողջ ազգի մը ողբերգութիւնը՝ չի կրնար այլ ողբերգութիւնը կազմող տարրերուն մէջ մասը տալ եւ խուսափել միւսէն՝ լուռ անցնելով ահաւոր ոճիւրներու վերայ: Բայց երբ պատմութեան և իրականութեան պարտադրանքին ենթակայ չէ եւ ընտրութեամբ կու տայ ուզած նիւթն ու մանրամասնութիւնները՝ կը ներկայացնէ բացառապէս բարի տիպարներ:

Իր մարդերը կապուած են բնական ու կենդանական աշխարհին: Ուզե՛ն իսկ՝ չեն կրնար չար ըլլալ: Բարութիւնը, իրենց համար, ճիշդ խորտային պայմաններու կապուած, անոնցմէ կախուած ըլլալու կերպ մըն է, ապրելու ոճ մը:

Կը պատահի, օակայն, որ այս բարի մարդերու եւ իր՝ հեղինակի՝ իսկ հագին փոթորկի բարութիւնը ժխտող ապրումներով, հասնի վրէժի, մինչեւ իսկ սպանութեան:

Վրէժի քանի մը պատմութիւն կայ Քիւրտիստանի լեռներու շարքին մէջ, բայց ամէնէն սարսաղագիւցիկ երկու զէպերը Վէլի անուն քիւրտի մը եւ

*) Եւ անշուշտ առանց միտքէն անցնելու որ Յովսէփ Վիլյուքսան մը պիտի կանչուին իր լսօքները...

զաղթական թուրքի մը սպանութեան կը վերաբերին: Առաջինը Արամ Հայկազի զբարտառութեան զոհ կ'երթայ եւ կերած ծեծին հետեւանքով կը մեռնի, երկրորդը իր հայ բարեկամին ու իր կողմէ ջըրամոյն կ'ըլլայ:

Յնցիչ են երկու դէպքերն ալ: Եւ որքան որ բացատրուին եւ արդարացունին ժամանակի հոգեբանութիւնով՝ ըզզալի է թէ ծանր ազդեցութիւն զործած են իր հոգիին վրայ: Տարիներ վերջ, երբ կը սկստմէ դէպքերը, որգարացուցիչ խօսքեր կը դնէ իր եւ ընկերով բերնին մէջ, մինչեւ իսկ անտուածային պատիժի մասին կը խօսի: Բայց նոյնիսկ նման պայմաններու մէջ եւ արդարացումի արդար փորձերէ անկախ՝ բարի մարդու իր խիղճը կ'ըմբոստանայ, կը ծառանայ:

Մեղքաց: Շատոնց մեղքնալ սկսեի էի, կը պատմէ «Աստուծոյ մատոյն մէջ: Բայց առաջին անգամ ըլլալով՝ խոստովանեցայ իմեզիմքիս, քէ կը մեղքնալ իրեմ: Ի գուր քանցի տարիամոզել իմեզիմքիս, հագար ձորէ ջուր բերելով: Ի գուր փորձեցի սիրտս ամրացնել, սեւ օրերու յիշատակներ աւ Քիւրտերու ձեռնով ցեղակիցներու վրայ գործադրուած անմարդկային արարքները յիշելով: Անոգում: Նայնիսկ Ասիայի գերեզմանիմ վրայ տուած խոստումիս ոգեկոչումը օգուտ չըլլաւ: Լալու, բարձրագագակ, անգուսայ, հեկեկալով լալու անստեղծ պահանջ մը գգացի:

Որո՞ւ համար, ի՞նչ բանի համար, չէի գիտեր:

Դէպքէն աւելի քան քառորդ դար վերջ գրուած այս տողերուն մէջ անշուշտ հետապայի մտածումը եւ ա'լ հանդարտած հոգիի մը խղճահարութիւնը կայ: Բայց նոյնիսկ եթէ այս խօսքերը չբուռնէին՝ պիտի անդրադառնայինք դարձեալ որ չորս տարուան աքորի եւ եղիւնի տարիները, որքան ալ ծանր նըստած ըլլան հեղինակի հոգիին վրայ, չեն աղարտած զայն եւ չեն պղտորած անկէ բխած զրականութիւնը:

Անաղարտ մնացած այս զրականու-

թեան մէջ կը գտնենք կեանքի պարզ եւ առողջ հանգիստը. դիւրեքու, նուազի, հողի եւ ծաղիկներու սէրը: Հետաքրքրական մէկտեղում մը կայ՝ նախնական, հողին կապուած մարդը եւ քաղաքակրթութեան բարիքներով նըստած հողին բնորոշող: Արամ Հայկազի մէջ միշտ ներկայ է Քիւրտիստանի լեռներու պատանի բնութեան պաշտը, բայց հոլովոյթի ենթարկուած: Նախնական իր ողբերուն վրայ աւելցած են դարձեալ բնութենէն ծնող, բայց մշակոյթով խորացած վայելքներ:

Իր ամբողջ զրականութիւնը լեցուն է ծովու շառաւով, անտառներու եւ դաշտերու ձայներով ու բոյրերով: Սքանչելի համերգ մըն է բնութեան՝ վարակիչ յուզումով, սարսաղազին ապրումով տրուած: Մեր զրականութեան մէջ բնութեան սէրն ու վայելքը երգող նըման քիչ էջեր կարելի է գտնել:

Շատ բաներու կապուած է կեանքի մէջ. մարդերու, կենդանիներու, անառկաներու: Բայց ամէն բանէ աւելի կապուած է բնութեան տարբերուն: Բնութիւնը, իրեն համար, ապրելու վայելքին ամէնէն խոր արտայայտութիւնն է, կեանքի գեղեցկութիւնները խոսցնող, անոր իմաստն իսկ ամփոփող կենդանի, ոգեկան իրականութիւն մը: Ինքն է ըսողը:

Կը մտածեմ քէ եթէ օր մը մահուանըս պահը գայ, աւ խելքս գլուխս ըլլայ, աշխարհէն բաժնուիլ ստիպուած ըլլալուս համար պիտի ափսոսամ, ցաւ գգամ միայն մէկ կամ երկու բանի պատճառաւ: Այդ բաներէն երկուքն ալ կապուած են բնութեան եւ իր երաշխիքներուն հետ: Պիտի ափսոսամ, որովհետեւ ալ ո'չ գարնան գալը պիտի գգամ, եւ ո'չ ալ՝ կարեմաւ ունկեղյալ մշտաբոն ծովուն, խաղաղութեան վրայ փշրուելուն, շառաչելու ազմուկին:

Նկարչական գեղեցկութիւնները սիրող գեղապէտի մը խօսքերը չեն միայն ասոնք, այլ նաեւ շարժումն ու կեանքը գովերգող կենսասէրի մը, բնութեան վերանորոգումը որպէս թաքուն զօրու-

թիւներու արտայայտութիւն սիրող մարդու մը։

Յատկանշական է, սակայն, որ ծովու շատայն իսկ երգած ժամանակ՝ Արամ Հայկազ բիրտ ուժի գովքը չի հիստեր։ Մովսէս Բարեթեմի արտփող ներկայութիւն մըն է իր էջերուն մէջ. զօրաւոր է, բայց խաղաղական տրամադրութեամբ համակուած։ Նոյն ձեւով՝ ժայռերու եւ լեռներու նկարագրութեան իսկ մէջ՝ հողը, երկիրը զուսպ, գիտակից հսկայի մը պէս կը ներկայանայ։ Անսանց ուժերու մոլեգնումը, չղթայաղերծ զօրութիւններու աւերը չենք տեսնիր այս գրականութեան մէջ։ Կամուրջները տանող յորձանքն իսկ տարերային իր թափին մէջ կարծես խռնու թան մը ունի, ինչպէս խարակներուն վրայ փլուզբող խողուն ծովը։ Լոյծ այս զօրութիւններու կողքին կը հանդիպինք նաեւ կանաչ դաշտերու, մշակուած արտերու, խաղաղ արօտատեղիներու ներշնչող նրկարագրութեան։

Այս բոլորն մէջ կ'արտայայտուի Արամ Հայկազի հիմնական ձգտումներէն մէկը. անմեղութեան, անաշարութեան պովերգումը։ Նոյն ձգտումի արտայայտութիւնն է նաեւ իր խանդակաթ սէլը մանուկներուն հանգչի։ Կեանքի խորհրդաւոր ուժերուն զեղումը կը սիրէ անոնց մէջ, թէ՛ վաղահաս աղէտով դառնացած իր իսկ մանկութեան պատկերը։ Թերեւս երկուքն ալ։

Մանուկները իր դրականութեան տիրական քիտանքէն մէկը կը կազմեն։ Գուրգուրանքով կը պատմէ իր զաւակներու մանկութիւնը, անոնց պզտիկ բարեկամներուն կատարած չար ու բարի գործերը, կը մանկանայ կարծես անոնց հետ, պահելով միշտ, սակայն, կեանքը ճանշող մարդու իր տարօրինակ ժպիտը, որուն մէջ ուրախութիւն կայ անշուշտ, բայց նաեւ յուզում։ Մանանաւանդ՝ երբ դպրոցական վերամուտի առաջին օրը փողոցի մը ծայրը կանգնած կը դիտէ երեսներու հաւաքուիլն ու դպրոց մտնելը, հանրապօրէն, կ'ըսէ, խոր յուզումով։

Կեանքի եւ բնութեան հաճոյքները սիրող այս բուխ հոգիին մէջ անմեղ երեսներու շուրջ անկիւն մըն ալ կայ։ Կարելի է հաւատալ իրեն երբ կ'ըսէ՝ ես չար չեմ. մարդու չարիք չեմ կամենար. կը սիրեմ նոյնիսկ դեղին թղթադ դաշտերուն մէջ ցատկոտադ մարախներն ու առուի կաւէ անկողնին մէջ կըռկըռացող գորտերը։

✽

Զարմանալի պիտի ըլլար, եթէ բարութեան ու բնութեան այս գովքին չմիանար նաեւ զգայութիւններու եւ ըզզուգումներու երգը։ Մազուող անձրեւը սիրող, կանաչներու երաժշտական ծրարձակումով արեւոյդ նախկին հօտաղը ուշադիր ունկնդիր մըն է զգայութիւններու նուագին։ Ամբողջ գործը լեցուն է զգայական տարրերով։ Արամ Հայկազ իր թուրք գաղափարներով կը թրթռայ կեանքի պղծեցկութիւններուն առաջ, արքիւտ հոգիով կ'ընկալէ զանոնք։ Կարծես առաջին մարդն է կեանքի եւ աշխարհին առաջ կանգնած։

Սովորութիւն է. մենք ամբողջ մեր ստացական անցեալով, բնութեցումներու եւ լսովի տեղեկութիւններու մէջլէն կ'ընկալենք արտաքին աշխարհը։ Մեր միտքին մէջ պատրաստ են արդէն բառերը, որոնք իրերուն ու երեւոյթներուն պիտի կապենք, մեր երեւակայութեան մէջ կը սպասեն պատկերները, որոնց պատճէնը միայն պիտի գտնենք բնութեան մէջ։

Արամ Հայկազի համար այդպէս չէ։ Իրերն ու երեւոյթները կարծես գոյութիւն կ'առնեն ճիշդ այն վայրկեանին, երբ իր զգայութիւնը կը կեդրոնանայ անոնց վրայ։ Տակաւին կոյս աշխարհի մը վրայ նետուած մանկական կոյս նայուածքով նոյն կը տեսնէ զանոնք, կարծես կը հնարէ։ Աւելի լաւ կ'իրարկում կարելի չէ երեւակայել Մալարմէի հաստատումին, թէ՛ իրերը գոյութեան կը կանչուին այն վայրկեանին, երբ բանաստեղծը կ'անուանէ զանոնք։

Հո'ս է անկասկած դադարեցրել բանաստեղծին այն գրաւչութեան, որ իր գրա-

կանութեան արժանիքներէն մէկը կը կազմէ: «Մէր տունի ճամբան», «Կապանի գիւղեր», բազմաթիւ հատուածներ Քիւրճի-ՍՏԱՆԻ Լեւոնեմի-Մէջէն քնարական չիանալի էջեր են՝ զգայութիւններու սարսուռն թարմութեամբ լեցուն: Իսկական արժակ բանաստեղծութիւններ:

Զգայութիւններու արտայայտութեան մեղքի որոշ ըմբռնում կը կապենք սովորաբար: Քրիստոնէութեան ազդեցութիւնը, թէ՛ ընկերային կեանքի կեղծիքն է պատճառը այս երեւոյթին: Արամ Հալիպի գրականութեան մէջ, սակայն պարապի տակ, զգայութեան ու մեղքի նման զուգորդութիւն չկայ: Նախնական կուսակցութեան, չիմնական անմեղութեան մը միջոցառումը կը տիրէ Հոն: Այն աստիճան որ ուրիշ գրիչի մը տակ շուայտ թուելիք խօսք մը կամ արարքի մը նկարագրութիւնը Հրաշալիօրէն մարութ ու անմեղ կը ներկայանան ընթերցողին:

Պատճառը ի՞նչ հեղինակի վերաբերումին ու կեանքի ըմբռնումին մէջ պէտք է գտնել: Իրերն ու երեւոյթները պարզապէս կան՝ ստեղծական, անմասնաւոր ու անիմաստ: Մէնք կ'իմաստաւորենք զանոնք, կը բռնաւորենք այս կամ այն տպաւորութիւնով, յետին միտքով: Իրեն համար անոնք կը պահեն իրենց ստեղծական վիճակը, մասնաւոր նշանակութիւն չեն ստանար, չեն ծանրանար մեղքի զգացումով: Հոս ու Հոն յիշուած համայնքները, գեղեցիկ կնոջ մը ներկայութեան զգացումը զգայական գինովութիւնը կը վերլուծուին ու կը պատմելին պարզօրէն, եւ կը կարգացուին առանց վրդովումի, որովհետեւ ծանրացած չեն որեւէ յետին միտքով. արտայայտութիւնն են կեանքի գեղեցկութիւններու ընկալումին:

Յովհաննէս Թումանեան կրնար Հրապարտ ըլլալ թէ ոչինչ գրած է, որ իր աղջիկները կարմրելով կարգային: Կոյս ականջներ վիրաւորող կամ ամօթիւմած հոգիներ պտտող ո՛չ մէկ խօսք կայ իր զրականութեան մէջ: Արամ Հալիպ

միեւնոյն բանը կրնայ բաւ ասպրումի իր էջերուն մասին, բայց այս անգամ ո՛չ իր ընտրած նիւթերու պատճառով, այլ պանծալ տալու իր ձեւին: Մարտը Հոգիներ խորհեցնելու կոչուած ոչ մէկ խօսք կայ Հոն, ո՛չ մէկ պատկեր:

Զարմանալի չէ, հետեւաբար, որ 60րդ անց տրդէն՝ կարենայ բաւ պարզօրէն՝ կը սիրեմ ծաղիկները, երեսնամբը եւ... կ'իմեյր:

Կիները մեծ տեղ ունին Արամ Հալիպի հոգիին ու զրականութեան մէջ: Կեանքի եւ բնութեան խորհուրդը խոսքերով գեղեցիկ էակներ են: Անվերապահ պարզութեամբ կը պատմէ իր հանդիպումները, սէրերը, կիներու կողմէ իր հոգիին մէջ ձգուած վաղանցիկ կամ մընայուն յիշատակները:

Յատկանշական է, այս տեսակէտէ, «Միտքս պանդուկ մըն է» գեղեցիկ գրութիւնը: Տան խաղաղութեան մէջ առանձին մնացած հեղինակը հանդերձարանէն կ'իջեցնէ կոպտած տուփ մը, որ, ճիշդ իր սիրտին պէս, պանդուկ մըն է գեղեցիկ յիշատակներու: Ինչե՛ր չկամ հոն, ինչե՛ր... Նամակներ, ժապաւէններով կապուած ու բարումնաւէտ տոմսակներ, մէջը սիրտ ու համբոյր գրուած թուղթեր, արցունքի հետքերով եւ յիշատակներով բռնաւոր ուրիշ մամակներ, հետեւ եւ օտար երկիրներու դրօշմաքաղութեամբ փակուած ծրարներ, ծաղիկներու բրածոներ, մագերալ փնջիկներ՝ վարդագոյն ու կապոյտ ժապաւէններով խեղդուած, կոճակ մը, մետաքս գուլպայ մը կ'ընդ:

Արամ Հալիպը համարակալութիւնը կ'ընէ իր զգացական յիշատակներուն, ինչպէս ուրիշ մը իր հարստութիւնը պատի հաշուէր: Իր ալ հարստութիւնը կեանքի կողմէ հոգիին մէջ լեցնուած վայելքն է, ասպրումը:

Համապրումով, համակրանքով կը կարգանք այս ու նման էջեր, որոնք միշտ ջինջ կը մնան մեր տպաւորութեան մէջ, ինչ ալ ըլլան պատմուած մանրամասնութիւններ: Բայց բացառիկ հաճոյքով, զգայական եւ գեղարուեստա-

կան խոր վայելքով կ'ըմբռնենք յատկապէս «Մեր տունի ճամբան», որ այս սեռի գրութիւններու գլուխ-գործոցն է անկասկած։

Հեղինակը կը բացատրէ թէ ի՞նչ ձեւով տուն կը տանին իրենց այցելութեան եկող հիւրերը, ո՞ր ճամբաներէն, ինչի՞ մասին խօսելով։ Յետոյ կը պատմէ մասնաւորաբար մէկ ուղեւորութիւն՝ զապուտը, շատ աղուոր աղջիկ»ի մը հետ։ Երկար ճամբայ մը կ'ընտրեն, կը դանդաղորդին բնութեան գեղեցկութիւնները վայելելու համար, անձրիւի օրհնութեան տակ սիկառէթ կը ծխեն ու երբ տուն կը հասնին՝ կարմիր ներկ կայ իր շրթունքին վրայ եւ չափազանցութեամբ զգացումով քիչ մը դառնացած երջանկութիւն»՝ հոգիին մէջ։

Գեղեցիկ է մասնաւորաբար վերջին մասը դրութեան, որ երաժշտական ֆիլոսոփի մը պէս բարձրակէտի, կատարելութեան կը հասցնէ զգայութեան երգը։ Զգայութիւնը ուրախացնող բոլոր տարրերը կը համագործին՝ գեղեցիկ ու անուշաբուր ծաղիկները, անձրիւի նուազը, սիկառէթի երջանկացնող ծուխը եւ «ուշացած կայծոռիկներու պէս կարմիր» կրակը «Երկրին դպած գիշերին մէջ», որոնք աւելի խռովիչ կը դարձնեն աղջիկին գեղեցկութիւնը եւ աւելի խոր՝ կայծալի ճարճատիւնով տարբերային հղօրութեան հասնող ապրումը։ Զգայութիւններու խոկական հանգէս մըն է։

ՏՃ

Ամէն ինչի մէջ հիմնականին ու նախնականին դովքը հիւսող այս գրականութիւնը փառաբանումն է նաեւ պարզ կեանքի եւ պարզ մարդերու։

Հարուստ ու շփեղ քաղամասերը չեմ սիրեր, կը գրէ Արամ Հայկազ 1930-ին. հոն իմֆզիմֆս փոքրացած ու անգոր կը գգամ. դեռ իմ հոգիս արեւելեամ է...

Երեսուն տարի վերջն ալ նոյնքան «արեւելեան» մնացած է իր հոգին։ Պարբեր մէջ, արեւելքի պարզութեան եւ արեւմուտքի չեղելութեան հակադրութիւնը չէ, որ ընտրութեան կը մղէ. աւելի խոր ապրում մը ունի, որ դինք զրկը-

ւածներու բանակին կը կապէ, անոնց համակրանքով կը լեցնէ իր հոգին։ Հասարակութեան մասին քիչ խօսք կայ իր գրականութեան մէջ, գրեթէ չկայ։ Նիւթական հարստութենէն անդին բան մը կը փնտռէ մարդկային հոգիներուն մէջ եւ կը գտնէ մանուշակ համեստ ապրուստի տէր մարդոց մօտ։ Իրեն համար՝ սպորտստի ճոխութիւնը խոտոր կը համեմատի ապրումի հարստութեան հետ։ Զի՛ սիրեր տիրակալները, դրամի կամ զօրութեան իշխանները։ Ժողովրդը պարզ է. հակումով, ճաշակով, ողջ էութեամբ։

Առ հոստարակ հերոսները համեստ միջոցներու տէր աշխատաւորներ են՝ արհեստաւոր կամ Խաչատուեայ, որոնց համար ապրիւր եթէ տապանապաշտի պայքար չէ փոր մը հացի համար՝ բարեկեցութեան եւ արժանավայել կեանքի համար մղուած կռիւ է, ամէն պարագայի տակ։ Անոնց մէջ շեշտուած է մանուշակայ յարաբերութիւններու պարզութիւնը եւ հոգիի շերտութիւնը։ Հագուստ-գիւղ տունեւոր հերոսներն ալ մարդկային վերաբերում ունին, իրենց յարաբերութիւններուն մէջ պարզ են եւ դիմացինի բարոյական արժանիքները միայն նկատի ունին։

Արամ Հայկազ շերտութեամբ, դուր-դուրանքով կը խօսի կեանքէն անտես-ուածներու մասին։ Զի՛ պթար, կը համակրէ։ Բաժնեկից է անոնց ցաւերուն՝ նոյնիսկ երբ չի ճանչնար պանոնք, ինչպէս ձրի ուտելիք ստանալու համար պոչ բռնող մարդիկը «Սոստուկին մէջ ի՞նչ կարծի։

Գուրգուրապին այս վերաբերումը մարդ էակին հանդէպ ունեցած իր յարգանքէն կը ծնի։ Ի՞նչ ազգի ալ պատկանի, ի՞նչ կրօնի ալ հաւատայ՝ մարդը գերադոյն նպատակ է իրեն համար, կեանքի գեղեցկագոյն արժէքներու կրողը։ Բոլոր տարբերութիւններէն անդին ու վեր՝ հիմնական, ընդհանրական տարբեր կան մարդկային էութեան մէջ, որ կը կապեն բոլոր մարդերը իրարու։ Այս տարբերու փնտրութեան ու արտա-

յայտութիւնն է Արամ Հայկազի գրականութիւնը:

Այս է պատճառը, որ իր ներկայացուցած աշխարհը այլադան է ու խայտարհէտ. աշխարհագրական այլադանութեան հետ հոն տեղ գտած են նաեւ ցեղային եւ ընկերային տարբերութիւններ: Հաւանօրէն առանց մասնաւոր դիտումի, բնական մղումով եղած է այդպէս. իր գրականութիւնը մարդկային հոգրոյրութեան փաստական արտայայտութիւնն է հերոսներու Էդգմփոյիւր հանդամանքով:

Հոն միեւնոյն համակրանքով կը խօսուի Ձինացիին, Բոալացիին, Շուկտացիին ու Հայուն մասին, առանց նեղմըտութեան, առանց մոլեռանդութեան: Բոլորին մէջ ալ արտայայտուող գլխաւոր արժանիքը մարդ տնտեսի ոէրն է եւ մարդկային յարգանքը: Ձինական խորհրդաւոր յարաբերութիւնները, իտալական բացախրտ ու քիչ մը պոռոտ մարդմօտութիւնը, հիւսիսային Սուրպացիներու քիչ մը վերապահ բայց անկեղծ վերաբերումը տարբեր ձեւերով միեւնոյն բանը կ'արտայայտեն. հոգիներու հաղորդութիւնը, մարդոց փոխադարձ հաճութիւնը:

Մէկ ժողովուրդ միայն չնորհ չի գտնիր Արամ Հայկազի գրականութեան մէջ. Թուրքը: Ճիշդ է, անձնական դառնութիւններու եւ ազգային ցաւերու արձագանգը կայ մերժողական այս վերաբերման մէջ, բայց ազգային մոլեռանդութիւն չկայ: Դէպքերէն ու երեւոյթներէն ներշնչուող բնագրական խորշանք մըն է իրը, որ ո՛չ մէկ ձեւով կը հակասէ ամբողջ գործի մարդկային ու մարդասիրական միջնորոտին: Նուազագոյն արդարութեան մը արտայայտութիւնը պէտք է տեսնել այս կեցուածքին մէջ:

Նոյնքան բնագրական է Արամ Հայկազի վերաբերումը իր ազգին հանդէպ: Ձրկանքներէն ու կարօտէն խորացած յորդառատ զգացում մը կը կապէ գինք Հայութեան: Բայց զգացումը մոլորութեան չի տանիր գինք, չի՛ խափանէր

գաղտնիութեան վճիռը: Ազգի, հայրենիքի սէրը աւելի եւս կը խորանան իր մէջ՝ երբ, առանց հաւաքական եսականութեան, առանց մոլեռանդութեան, կը պնահատէ իր ժողովուրդի արժանիքները:

Յուզիչ է, խռովիչ՝ նոյնիսկ, հայրենասիրութեան զգացական արտայայտութիւնը իր գրականութեան մէջ: Դաւրեղու աւանդութիւնէն եկած հոգի կարօտն իսկ գրականորձ ժամանակ, ծիծաղելի էրեւելո՛ւ իսկ գինով՝ իր հերոսները որտառուէլ հարապատուութեամբ մը կ'արտայայտեն ամբողջ Հայ ժողովուրդի ռումանթիք սէրը իր հողին ու ազգային սրբութիւններուն հանդէպ:

Անոնցմէ մէկը, որուն հողին մէջ հայրենիքէն հեռու ըլլալու ցաւին հիւսուած է նաեւ «կէս-հայ» գաւազներ ու նենալու դառնութիւնը, կ'ըսէ.

Երբ գարուն գայ, (Հայաստանէն եկած) այդ հողը պիտի ցրտեմ պարտէզիս մէջ եւ ձգեմ որ գաւազներս քայքայուին վրայ. ո՞վ գիտէ, քերուս հրաշքը զոր չկրցի ես կատարել, կատարէ Հայաստանի հողը ու գաւազներս դառնան Հայ:

Հին, Արշակեան աւանդութիւնն է, բայց այս պարագային կրկնակ է ողբերգութիւնը. պանդուխտ Հայը իրեն համար չէ որ կ'ուղէ օգտադարձել հայրենի հողի աւանդական հրաշքը, այլ իր զաւակներուն:

Նման, բայց տարբեր է ողբերգութիւնը ուրիշ հերոսի մը, որ օտար աշխարհի մէջ հայկական վարչութեան մը կարօտովը կը տառապի:

Գիտեմ, կ'ըսէ, հիմա պիտի խնդաք վրաս, բայց եոգս չէ. երբ Հայաստան հասնիմ գետնէն քառ մը պիտի առնեմ ու կտորեմ առաջիմ հանգիստ ապակիմ ու սպասեմ որ հայ փոխսը դառ ու հայերէն ձերբակալէ դիս: Թող այդ օրը տեսնեմ ու թող Աստուած հոգիս առնէ, միմալ քէ՛ տեսնեմ այդ օրը:

Կ'ըսէ ու կու լայ, որովհետեւ ապրումը շատ խոր է եւ ցաւը՝ շատ հին: Որոշ է. ազգայնական գորաւոր ջիգ

մը կայ Արամ Հայկազի մէջ: Բայց այս իրողութիւնը չի հակասեր մարդկային բնականական ապրումին, որովհետեւ չի տանիւր տյալմերժութեան կամ մոլեռանդ նեղմտութեան: Վերի հատուածները, ամբողջ Յանուն Հօր»ը կամ «Ծիծեռնակը բոյն էր շինում»ը աղգային մոլեռանդութենէ աւելի՝ մարդկային ողբերգութեան մը արտայայտութիւնն են:

Եւ այս խմաստով կարելի է քննել թէ պանդուխտ մարդու տառապանքը քիչ տեղամ տալքան որտալոյց կերպով ու միտմամանակ արուեստով տրուած է: Հակառակ որոշ նիւթերու փաթեթի՝ բրնձի չորհրդանշական ձգտում կամ ածանքարող կարելի չէ պահել Արամ Հայկազի դրականութեան մէջ: Սփիւռքահայութեան կարօտի երգն ու հայրենասիրութիւնը անխորհուրդ ու վճիտ հոսումով մը տեղ կը գտնեն հոն՝ ձերբադատ քաղաքական նկատմաներէ կամ քաղաքական շեշտներէ: Գրականութիւնը որպէս միջոց չի՝ գործածելու հայրենասիրական զեղումի, չի զոհեր արուեստը գաղափարին. համերաշխի դոյակցութեամբ մը կը համադրէ իրարու, այնպէս մը որ անոնք փոխաբարձաբար իրար լրացնեն՝ տալու համար հարազատօրէն՝ պարզը, խորը, յաւիտեանականը: Ինք իսկ լաւագէտ կը բնորոշէ այս պարագան, երբ կ'ըսէ.

Ես անձնագրէս երբ կը գրեմ, բան տրվեցնելու յաւակնութիւն չունիմ. բայց, առանց ուղիւս եւ առանց իմ կողմէ մեծ ճիգի կամ առաջադրութեան, երբ գրածս ստորագրելէ ետք աչքէ կ'անցնեմ, կը տեսնեմ, որ միշտ Հայ ըլլալու հպարտութեան ու Հայ մրմալու թելադրութեան մեծ թեթեւ հով մը կայ... Մեր կացութեան պէս կացութեան մը մէջ գտնուող ազգի մը համար, ամէն տեսակ քարոյի ու ձեւումի դէմ պայքարիլը ամէն Հայու եւ գրողի առաջին պարտականութիւնն է:

✽

Այս բոլոր տարրերով կը ստեղծուի Հայկազեան վերաբերումը կեանքի հան-

դէպ: Ընկերային, բնականացական, բարոյական որոշ դիրքորոշում մը կայ անոր մէջ, աշխարհիմացութեան բնականութիւնը մը, բայց կարելի չէ խօսիլ կազմաւորուած ու դասաւորուած փիլիսոփայական հայեացքի մը մասին: Ապրելու արուեստ մըն է տրուածը, ո՛չ անպայման՝ օրինակային արժէքով, բայց անձնական փորձառութեան եւ կիրարկումի բերած հարազատութեան շեշտով ու խորութեան բարեքով:

Այսքանով ալ կը դոհանայ Արամ Հայկազ: Ոչ կը փորձէ փերլուծել, ոչ ալ՝ դատել: Պահանջ ալ չ'ըզգար կարծեմ, մտածումի լոյսը սփռելու բնագոյնի իր վերաբերումին վրայ: Հո'ս նաեւ զգայական է մօտեցումը:

Մէկ պարագայի, ստիտի, դատողական մօտեցումով կը շուքաբերէ. երբ կը բացատրէ իր սէրը հայկական եկեղեցիին հանդէպ: Հիւանդ պատկած է եւ կը տեսնէ որ այլ դաւանանքի պատկանող կրօնաւոր մը կը պատրաստուի հազորդութիւն տալու ուրիշ հիւանդի մը: Ինքն ալ կ'ողջ հազորդութիւն եւ երբ քահանան կը մերժէ իր խնդիրը դաւանական տարբերութիւնը պատճառարանելով՝ Արամ Հայկազ դովքը կը հիւսէ ազգային եկեղեցիին, որ լայնախոհ է, այսինքն աւելի համապատասխան՝ մարդկային յարաբերութիւններու իր իտեւութիւն:

Կրօնական աւելորդապաշտութիւններու կամ արտաքին, Ժրտական ձեւերու մասին խօսք չկայ: Ընդհանուր ոգիի մը, մթնոլորտի մը մասին կարելի է խօսիլ միայն:

Արամ Հայկազի գրականութեան մէջ յաճախակի տկնարկութիւններ կան նաեւ Աստուծոյ, մահուան, հանդերձալ կեանքի մասին: Մահուան անգոյնալի վճիռը տեսակ մը շուար տրամադրութիւն կը ստեղծէ, անգորութեան որոշ զգացում. բայց վախ չ'առաջացներ: Հիւանդ կը կատակէ նոյնիսկ, ուրիշներու եւ իր սեփական վախճանի մասին, ա՛յդպէս՝ քիչ մը սկեպտիկ ժպիտով, իրատես մարդու բանիմաց զուարթախո-

Հուլիսամիսը: Աստուծոյ եւ անդենականի մասին ալ կը խօսի, աւելի ա՛յս կեանքի կապակցութեամբ, կարծես այս աշխարհի գեղեցկութիւնները շնչաւու համար:

Իսկ մնացեալ սուրբերը կը ծանօթանային ու կ'ազօրեւորէին: Կ'ազօրեւորէին ու կը ծանօթանային:

Ու Հայր Աստուած, լուսեղէն իր գահին վրայ թաղման էր ու կը լսուէր չի գիտցուի ինչ...

Քիմ մահճի այս տողերը ընդհանուր վերաբերում մը կը բնորոշեն: Որոշ վերապահութիւն կայ այս կեցութեան մէջ, քիչ մը թերահաւատ արամատութիւն եւ իրական աշխարհի բացայայտ նախընտրութիւն:

Արամ Հայկազ կ'երեւակայէ, երազի մը ընթացքով հնարաւորութիւններէն օգտուելով, այն բոլոր գէպերը, որ տեղի կ'ունենան իր մահէն ետք: Կը նրկապագոյէ բարեկամներու եւ ծանօթներու ցաւակցական այցելութիւնը, յուզարկաւորներու թափօրը, իր հոգիին թոխշը գէպի երկինք եւ կեանքը դարձաւ մէջ: Այս բոլորը առիթ կու տան իրեն հեղինակ մարդոց այս կամ այն վերաբերումը, ստեղծելու ճեպանկարային բայց յատկանշական տիպարներ, թերահաւատ կարծիք մը ձեւակերպելու, վերջապէս, կեանքի մասին:

Կեանքը շատ չի՝ խանդավառեր զինք, բայց անդենականը բնա՛ւ չի խանդավառեր: Սուրբերուն ու Աստուծոյ հետ ինք ալ կը ծանօթանայ եւ կ'ուզէ վերադառնալ: Յատկանշական է այս փոփոխը, ամէն բանի հակառակ եւ ամէն բանէ աւելի՝ կապուած է կեանքին:

Կեանքի յամառ այս սէրը կ'արտայայտուի նաեւ իր հաւատքին մէջ: Կ'ըսէ (Հէրանդանոցին մէջ) թէ կը հաւատայ Յարութեան խորհուրդին եւ անմիջապէս ետք կը խօսի կեանքի վերանորոգման եւ դարունի մասին: Երկու միտքերու այս յաջորդականութիւնը թոյլ կու տայ մտածելու թէ կեանքի վերադարձումի մէկ արապայտութիւնն է իրեն համար Յարութիւնը:

Բնութեան, կեանքի խորհրդաւոր ուժերու իր սէրը շատ բնականօրէն կը համադրուի, ամէն պարագայի տակ, կրօնական նման տրամադրութիւններու հետ:

Կեանքի սէրը հիմնական տարրն է նաեւ Արամ Հայկազի իմաստասիրական հայեացքներուն: Յուսախարութիւններ, դառնութիւններ, Լիւսնի տարիներու դժոխքը բնական տրամադրութիւն մը ստեղծած են իր մէջ, զինք առաջնորդած յաճախ զրիթէ յոռետես Լեզակացութիւններու: Բայց «վերադարձում» է միշտ. ո՛չ անպայման լուստեսութեան, բայց համակերպումէն ծնած կեանքի իրատես ըմբռնումի մը: Իր աշխարհիմացումը ի վերջոյ կը վերածուի հանդարտած մարդու մը հեղինական բայց բարի հայեացքին՝ աշխարհի գեղեցկութիւններուն ու լաւ մարդերուն վրայ:

Հանդարտ այս զուարթախոհութիւնը խորոխած է հոգիի խորքը կազմող թախծի մը վրայ: Զանազան առիթներով կ'ըսէ. ես արդէն միշտ սիրած եմ տխուր բաները – հաւատքս մեռած է եւ հոգիս պոստրած – Մեմֆ ալ երջանիկ ըլլալը մոռցաւ: Այլեւս ընա՛ւ, բնա՛ւ հրջանիկ պիտի չըլլամք: Կ'ըլլա՛յ, սակայն: Զիգոյ թերեւս, համակերպութեամբ, լու ու գեղեցիկ բաներու յամառ սէրով: Եւ անշուշտ թախծալի այս խորքէն ծնած ըլլալուն համար այդքան ուռողջ է իր զուարթախոհութիւնը, այդքան խոր ու մարդկային՝ իր ծիծաղը:

Մարդը, Արամ Հայկազի մէջ, գէպքերու դատով սկեպտիկ դարձած որոշ չափով, բայց հաշտուած աշխարհին հետ՝ կ'եղբակցանք թէ գեղեցիկ է կեանքը եւ յարգանքի ու սէրի արժանի՝ իր նմանը, Մարդը:

Դ.

Կեանքի դառնութիւնները ճշապահ եւ վայելքները ըմբռննած մարդը դարձած է ապրելու արուեստ մը, որ զինք

խաղաղական արամադրութեան ու բարի ժպիտի հասցուցած է: Գրողը աւելին կ'ընէ. ստեղծագործելով՝ կը խորացնէ իր ապրումները, կը հասնի պոհունակութեան: Ըլլալու վայելքին գերագոյն աստիճանը ստեղծելն է:

Կը գրեմ երջանիկ ըլլալու համար: Կը գրէ նաեւ երջանկացնելու. Համար: Որովհետեւ այս գրականութիւնը եսասէր ու եսակեդրոն հոգիի մը միօրինակ յանկերգը չէ: Զինք մարգերուն եւ մարդիկը իրարու կապող գեղեցիկ երապորժում մըն է, աղուոր մարդերգութիւն մը: Մոնթենէի մը պէս՝ ինքզինք տալով իր գրականութեան մէջ՝ մարդկութիւնը սուսած կ'ըլլայ: Եւ ընթերցողը կ'երջանկանայ ո՛չ միայն իր ապրումները պոհունակելու, այլ նաեւ գեղեցիկ արուեստ մը, որ կը խորացնէ իր հոգին, կ'ազնուացնէ:

Բայց Արամ Հայկազ կը գրէ նաեւ այլ նպատակով:

Կը գրեմ, որովհետեւ փառասեր եմ ու կ'ուզեմ որ մարդիկ, մեռնելէս առաջ ալ, վերջն ալ, իմ մասին խորհին ու յիշեն զիս:

Եթէ, նկատի չունենանք կատարական խառն շէտը, եւ այս «փառասիրութիւնը» իր իսկական համեմատութեան վերածենք, այսինքն՝ մարդկային հաղորդութեան արդար ցանկութեան մը՝ կըրնանք ըսել որ նպատակին հասած է Արամ Հայկազ: Իր մասին խորհողներու մեծ թիւ մը կայ, ազահովաբար, ներկայիս, ու զինք յիշողներու աւելի մեծ թիւ մը պիտի ըլլայ հետագային:

Որովհետեւ՝ ապրումի այս գրականութիւնը մեր մշակութիւն մէջ արժանաւոր իր տեղը պիտի ունենայ, որպէս թանկագին վկայութիւն իր անձին մէջ իջն Հայն ու Մարգը Արուեստին առաջող տաղանդաւոր գրողի մը:

Գ. Շ.

(վերջ)

ՅԱՌԱՋԱՊԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Վարչակարգ մը, իրենու քերականութիւն լիակ, հաստատուելուն պէս, արդէն իսկ ես մնացած կ'ըլլայ: Արտայայտութեան ձեւ մը ծանօթ դառնալուն պէս, հիմքած կ'ըլլայ: Ըստած բան մը՝ մեռած բան մըն է արդէն: Իրականութիւնը իրականութեանն ալ կողմ կը դնուի: Փարագած մտածում մը, խօսելու ձեւ մը, ուրիշն նաեւ ըլլալու ձեւ մը, որ պարտադրուած է, կամ որ պարզապէս ընդունուած է, արդէն իսկ անընդունելի է:

Յառաջապահ մարդը տեսակ մը ներքին քննարկ է, որ բազմին մէջն է, ներսն է ու ներսէն կ'աշխատի բայցայիլ զայն, կ'ըմբռնատանայ անոր դէմ. որովհետեւ, Քիշոյ վարչակարգերու նման, արտայայտութեան ձեւ մը որ տեղաւորուած է, արդէն տեսալ մը թնշում է: Յառաջապահ մարդը, արդի *սիստեմ*-ի մը ընդդիմադիր, դիմացը գտնուող մարդն է. բննադատ մըն է եղածին, ներկան բննադատող մը, եւ ոչ թէ ներկան փառաբանող մը:

Անցեալը բննադատելի դիւրին է. մանաւանդ երբ իշխանութեան գլուխ գտնուող վարչաձեւը կը ֆայտլիւրէ այդ ազգութեամբ. կը մղէ գրողը դէպի հոն, կամ անհուազեմ, կը տանի որ բննադատեն՝ ասիկա ներկայիս գոյութիւն ունեցածին ամբապնդումն է, ֆարսցումի մը տեսակ մը սրբացումը, տեսակ մը ռզմասիւնի խոնարհում՝ բնականութեան եւ ջրհանկիրութեան դիմաց:

ԷՕԺԷՆ ԻՕՆԵՄԻՐՕ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐՈՒԵՍՏԻ ԴՐՍԵՒՈՐՄԱՆ ԱՌԱՆՋԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Եթէ Բակունցի երկերը իրենց բովանդակութեամբ եւ նպատակասլացութեամբ տոգորուած են ապրող ժողովրդի իրական կեանքն ու իրական ձգտումները ներկայացնելու, կեանքի իրական ճշմարտութիւնը գեղարուեստական պատկերաւորման միջոցով տեսանելի, շօշափելի եւ ուսանելի դարձնելու մտահոգութեամբ, ապա նոյնքան հետաքրքրութիւն են ներկայացնում արուեստի գրքատնորման իրենց իւրայատկութեամբ, — մանաւանդ, երբ նկատի ենք առնում, որ այդ արուեստը խիստ տարբերում է խորհրդային պայմաններում իր ժամանակ խրախուսուող անկենդան չորութիւնից:

Բակունցը մեծ խնամք է տարել իր երկերի արուեստը մշակելու բնագաւառում եւ ջանացել է որ այն լինի նուազ «արուեստական» եւ, որքան հնարաւոր է, չափ ընդհանր: Նա միշտ ուղիքի առջեւ է ունեցել արտայայտման եւ ընկալման հոգեբանութեան օրինաչափութիւնները: Երբեք չի փորձել խաբուսիկ գեղեցկութիւններ ստեղծել եւ սպասել, որպէսզի մարդիկ նրանցով հրապուրուեն ու կուրանան, այլ ձգտել է յայտնարելու կեանքի ԹԳԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ կողքին նստել նրա

գեղեցիկ կողմերը՝ մնայուն վայելքի համար:

Եթէ արուեստի դերը որոշ առումով կայանում է գեղարուեստական հանդիմանականութեւ մէջ, ապա Բակունցը լիովին յաջողել է իր ստեղծագործութեամբ: Անուանի գրականապէտ Աղբալեանը առհասարակ արուեստի այդ կողմի մասին գրում է.—

«Արդ՝ սահման է հաճելի եւ այն ամէնը, որ կշռույ՞ ունի: Առօրեայ փորձը եւ վայելիքի հոգեբանութիւնը այդ եւ մեզ ասում: Մեր ձեռքը հաճոյք է գգում սահման ու սզորկ մարմինների շփումից: Կոր զծելոյն եմ, որ հաճոյք եմ սրտմառում աչքիմ: Երանգն աւելի սիրով եմք դիտում քան որոշ գոյնը: Անկիւնաւորոյն ու խիստը ցնցում եմ մեզ եւ հանդուրժում եմք՝ կարիմ ու մեղմին անցնելու սպասումով: Ներդաշնակը շաշում է մեր ակամբը: Աննեղաշնակը համադրծելի է, երբ վաղանցուկ է եւ անցնում է մեր դաշնակիմ: Միօրինակը բերում է թրմբիք եւ ցնցումը դարձնում հաճելի: Մեծ ու փոքր շատ եմ սիրում օրորում, որ ասել է ցունց ու անկում մերապրել: Խօսքի եւ ձայների ալիքաձեւ ընթացքը դաշնաւորում է մեր մերժիմ աշխարհը: Նուազի բախումը եւ

երգի շնորհ կարգ են հաստատում մեր ֆառսի մէջ, մեզ համուս են այս կեանքի թռեւորդից, որ մի ժխտը է ինքնին եւ մեզ տանում են հեռու հեռաստան, որ խօսք ու ձայն ընթանում են կշռոյթով: Այսպէս է մեր զգացական աշխարհը: Ուստի այն բոլոր գրական երկերը, որ իրենց արտաքին ձեւով պիտանի են անմիջապէս կամ թէ վարժութեամբ ձեւաւորելու մեր զգացական աշխարհը՝ կարող են միւր դառնալ գրականութեան պատմութեան: Տեղ ունեն մասն ալն բոլոր երկերը, որ մոյն յատկութիւններով համամասն դեր կատարած են մեզանից առաջ:

Նոյնը կարող ենք ասել եւ մեր իմացական աշխարհի համար:

Գեղարուեստական հանոյք պատճառելու ալք պայմանները աւելիով յարդրած են Բակունցի երկերում: Բակունցը յարգանք ունի մարդկային առողջ զգայարանների նկատմամբ: Վերեւ ասացինք, որ Բակունցը նախանձախնդիր էր, որպէս իր արուեստը լինի բնական: Բայց դա չի նշանակում, թէ նա անտարբերութեամբ անխորհրդ կերպով ընդօրինակում էր բնութեանը: Բնութեան մէջ խառնիճաղան շատ բան կայ, որը ոչ միայն համեմատելի է մարդուն, այլև թշնամական է նրա նկատմամբ եւ վառողական: Հաճելիի ճիշդ ընտրութիւնը ստեղծագործական արարք է, կարգաւորում եւ առանց զգացման անկեղծութեան ու բանականութեան միջամտութեան անհնարին է: Բնականը հենց այդ զգացման անկեղծութեան եւ մտածուած պատասխանատուութեան արդարօրէն է:

Բակունցի արուեստի մէջ առաջին հերթին պէտք է նշել նրա ընտիր լեզուն: Հանրայայտի է, որ լեզուն առհասարակ ամէն մի գրական երկ հիւսելու հիմնական գործիքն է: Հետեւապէս խնամուած լեզուն եթէ ամէն բան չէ, արուեստնային որեւէ գրական երկի միւս արժանիքների համար նախապայման է: Բայց լեզուի այս կամ այն բնոյթը պատահական չէ, այլ պայմանաւորուած է

գործածողի մակարդակով, հոգեբանութեամբ եւ աշխարհայեացքով: Հենց այդ էլ նկատում ենք Բակունցի ամբողջ ըստեղծագործութեան մէջ:

Բակունցը գրականութեամբ էր ըզրադուում այն ժամանակ, երբ խորհրդային երկրում չէր ունեւ էին ոչ միայն սոցիալական, այլեւ մշակութային, հոգեկան, արտայայտչական հասկացողութիւնները: Շատերը պատիւ եւ առաքինութիւն էին համարում ուրանալ իրենց շոշափելի էութիւնը, չտեսնել ամէնօրեայ իրականութիւնը եւ մարքսիզմ-լենինիզմի գեղարդական գորգի վրայ սաւառնել հեռաւոր ոլորտներում տնտեսաբանատու հնարանգութեամբ՝ երկրւործութեամբ կրկնելով երեւակայական տրամաբանութեան թելադրած անկապ նշանախօսքերը: Ստեղծուեց հասարակագիտական ու գրականագիտական լեզուի լարելիքի ժամ: Բնականը վիճակում՝ անկարելի էր հետեւել այդ լեզուով շարադրուած մտքերի ընթացքին: Նոյն անբնականութիւնը, մի այլ կերպարանքով, բոյն դրեց նաեւ գեղարուեստական գրականութեան մէջ: Այդ լեզուն յաճախ կամ շատ վերացական էր, կամ շատ գոհակ: Բակունցը շուրջաւ իր ճաշակը, չհեռացաւ իր շրջապատից եւ երբեք չհրապուրուեց վերացական մտածողութեան ու լեզուի խայծերով:

Խորհրդահայ մտաւորականներից մէկը, փնտրեան առնելով Բակունցի ըստեղծագործութեան լեզուն, գրում է, -

«Ամէն մի հեղինակի լեզուաձեւակաւ առանձնայատկութիւնները զիջ պատկերացնելու համար պէտք է իննել մրա ստեղծագործութիւնների գեղարուեստական առանձնայատկութիւններից ընդհանրապէս, մրա ստեղծագործական տարբերի յատկանիշներից: Բակունցի տաղանդի կարեւորագոյն առանձնայատկութիւնները, մեզ քաւում է, հետեւեալներն են, - քանաստեղծական մեծ մերշնչամբ, ուժեղ ֆնարականութիւն, կրքակոտ, անգուսպ սէր հարապատ ժողով-

Լ. ՄԻՐՏՁԵԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐՈՒԵՍՏԻ ԴՐՍԵՒՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Եթէ Բակունցի երկերը իրենց բովանդակութեամբ եւ նպատակաւորացութեամբ տողորուած են ապրող ժողովըրդի իրական կեանքն ու իրական ձգտումները ներկայացնելու, կեանքի իրական ճշմարտութիւնը գեղարուեստական պատկերաւորման միջոցով տեսանելի, շօշափելի եւ ուսանելի դարձնելու մտահոգութեամբ, ապա նոյնքան հետաքրքրութիւն են ներկայացնում արուեստի դըրսեւորման իրենց իւրայատկութեամբ, — մանաւանդ, երբ նկատի ենք առնում, որ այդ արուեստը խիստ տարբերում է խորհրդային պայմաններում իր ժամանակ խրախուսուող անկենդան շորութիւնից:

Բակունցը մեծ խնամք է տարել իր երկերի արուեստը մշակելու բնապատկան եւ ջանացել է որ այն լինի նուազ «արուեստական» եւ, որքան հնարաւոր է, շատ բնական: Նա միշտ աչքի առջեւ է ունեցել արտայայտման եւ բնկարման հոգեբանութեան օրինաչափութիւնները: Երբեք չի փորձել խարուսիկ գեղեցկութիւններ ստեղծել եւ սպասել, որ պէտքէ մարդիկ նրանցով հրապուրուեն ու կուրանան, այլ ձգտել է յայտնաբերել կեանքի ազնուութիւնների կողքին նաեւ նրա

գեղեցիկ կողմերը՝ մնայուն վայելքի համար:

Եթէ արուեստի գեղը որոշ առումով կայանում է գեղարուեստական հաճոյք պատճառելու մէջ, ապա Բակունցը լիովին յաջողել է իր ստեղծագործութեամբ: Անուանի զբաղանազէտ Ալքսանդր առհասարակ արուեստի այդ կողմի մասին գրում է. —

«Արդ՝ սահունն է հաճելի եւ այն ամենը, որ կշռոյթ ունի: Առօրեայ փորձը եւ վայելիքի հոգեբանութիւնը այդ եմ մեզ ասում: Մեր ձեռքը հաճոյք է գգում սահուն ու ողորկ մարմինների շփումից: Կար գծերն են, որ հաճոյք են պատճառում աչքին: Երանգն անկի սիրով եմք դիտում քան որոշ գոյքը: Անկիւնաւորն ու խիստը ցնցում են մեզ եւ հանդուրժում եմք՝ կարին ու մեղմին անցնելու սպասումով: Ներդաշնակը շոյում է մեր ակամքը: Անմերդաշնակը հանդուրժելի է, երբ վաղանցուկ է եւ անցնում է մեր դաշնակին: Միօրինակը բերում է թշուրիւր եւ ցնցումը դարձնում հանելի: Մեծ ու փոքր շատ են սիրում օրորուել, որ ասել է ցունց ու անկում մերապրել: Խօսքի եւ ձայների ալիքաձեւ ընթացքը դաշնաւորում է մեր մերձին աշխարհը: Նուագի բախումը եւ

երգի շնորք կարգ են հաստատում մեր քառսի մէջ, մեզ համուծ են աշս կեանքի քոնուքոնից, որ մի ժխար է ինքնին եւ մեզ տանում են հեռու հեռաստան, ուր խօսք ու ձայն ընթանում են կշռոյքով: Այսպէս է մեր գգացական աշխարհը: Ուստի այն բոլոր գրական երկերը, որ իրենց արտաքին ձեւով պիտանի են սնմանքապէս կամ թէ վարժութեամբ ձեւաւորելու մեր գգացական աշխարհը՝ կարող են միւթ դառնալ գրականութեան պատմութեան: Տեղ ունեն մաւել այն բոլոր երկերը, որ մոյն յատկութիւններով համաման դեր կատարած են մեզանից առաջ:

Նոյնը կարող ենք տեսի եւ մեր իմացական աշխարհի համար:

Գեղարուեստական հաճոյք պատճառելու այդ պայմանները աւելիով յարգւած են Բակունցի երկերում: Բակունցը յարգանք ունի մարդկային առողջ գոյաբանների նկատմամբ: Վերեւ առաջինը, որ Բակունցը նախանձախնդիր էր, որպէս իր արուեստը լինի բնական: Բայց դա չէ նշանակում, թէ նա անտարբերութեամբ անխորհրդ կերպով ընդօրինակում էր բնութեանը: Բնութեան մէջ խառնիճազան շատ բան կայ, որը ոչ միայն համեմատելի մարդուն, այլև թշնամական է նրա նկատմամբ եւ վանողական: Հաճելի ճիշդ ընտրութիւնը ստեղծագործական արարք է, կարգաւորում եւ առանց զգացման անկեղծութեան ու բանականութեան միջամտութեան անհնարին է: Բնականը հենց այդ զգացման անկեղծութեան եւ մտածուած պատասխանատուութեան արդարեւ է:

Բակունցի արուեստի մէջ առաջին հերթին պէտք է նշել նրա ընտիր լեզուն: Հանրայայտնի է, որ լեզուն առհասարակ ամէն մի գրական երկ հիւսելու հիմնական գործիքն է: Հետեւապէս խնամուած լեզուն եթէ ամէն բան չէ, աշխուժանայնիւ որեւէ գրական երկի միւս արժանիքների համար նախապայման է: Բայց լեզուի այս կամ այն բնոյթը պատահական չէ, այլ պայմանաւորուած է

գործածողի մակարդակով, հոգեբանութեամբ եւ աշխարհայեացքով: Հենց այդ էլ նկատում ենք Բակունցի ամբողջ ըստեղծագործութեան մէջ:

Բակունցը գրականութեամբ էր ըզրազուում այն ժամանակ, երբ խորհրդային երկրում շրջուել էին ոչ միայն ողջիւղական, այլև մշակութային, հոգեկան, արտայայտչական հասկացողութիւնները: Շատերը պատիւ եւ առաքինութիւն էին հաժարում ուրանալ իրենց շօշափելի էութիւնը, շտեմել աւճեղորեայ իրականութիւնը եւ մարքսիզմ-լենինիզմի ձեռնարկական գործիք վրայ սաւառնել հեռաւոր ոլորտներում անպատասխանատու հնազանդութեամբ՝ երկեղածութեամբ կրկնելով երեակայական տրամաբանութեան թելադրած անկապ նշանախօսքերը: Ստեղծուեց հասարակագիտական ու գրականագիտական լեզուի լարելիներթոս: Բնականն յիշակում՝ անկարելի էր հետեւել այդ լեզուով շարադրուած մտքերի ընթացքին: Նոյն անբնականութիւնը, մի այլ կերպարանքով, բոյն դրեց նաեւ գեղարուեստական գրականութեան մէջ: Այդ լեզուն յաճախ կամ շատ վերացական էր, կամ շատ գոհնիկ: Բակունցը չուրացաւ իր ճաշակը, չհեռացաւ իր շրջապատից եւ երբեք չհրապուրուեց վերացական մտածողութեան ու լեզուի խայծերով:

Խորհրդահայ մտաւորականներից մէկը, քննութեան առնելով Բակունցի ըստեղծագործութեան լեզուն, գրում է, -

«Ամէն մի հեղինակի լեզուաճակատաւանդակայտկութիւնները ճիշդ պատկերացնելու համար պէտք է ելնել նրա ստեղծագործութիւնների գեղարուեստական առանձնայտկութիւններից ընդհանրապէս, նրա ստեղծագործական տարերքի յատկանիշներից: Բակունցի տաղանդի կարեւորագոյն առանձնայտկութիւնները, մեզ քաւում է, հետեւեալներն են, - բանաստեղծական մեծ ներշնչմամբ, ուժեղ քնարականութիւն, կրքալատ, անգուսպ սէր հարազատ ժողով-

վրդի մկատմամբ, մրա կեանքի ամենախոր ծանոթութիւն, տիպականացման եւ միջավայրի կոյորիտ ստեղծելու մեծ վարպետութիւն: Այս երեք էին մնական գրական յատկանիշներով էլ պայմանաւորուած եմ Բակունցի գրութեան լեզուի առանձնատկանութիւնները՝ Լեզունի ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹԻՒՆԸ, Լեզունի ԱՅՆ, ՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՏԻՊԵՐ ՈՒ ԿՈՂՈՐԻՏ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԱՐՊԵՏՈՒԹԻՒՆԸ: Բակունցի լեզուի այս առանձնատկանութիւնները մրա երկերում համընդհանուր գալիս միանալու են:

Ժիշդ է ասուած, որ լեզուի այդ առանձնատկանութիւնները հանդէս են գալիս միահիւստուած: Բակունցի երկերում այդ տարրերից որեւէ մէկը չի գերակշռում միւսների հաշուին: Անշուշտ, այս կամ այն ժամանակ գրուած գործերում շեշտը գրուած է լեզուաարտայայտման որեւէ կողմի վրայ, ինչպէս եւ տարբեր երկերում լեզուատարբերի օգտագործման տարբեր խտութիւն է նկատուում: Բայց ամէն մի ստեղծարարն ստեղծագործութիւն ինքն իր մէջ ներդաշնակ է եւ առհասարակ լեզուական սկզբունքը մեծ տարբերութեան չի ենթարկուած: Կանայան երկերում, եթէ շահունքը ձեւական որոշ բնաշրջանում:

Վերեւ յիշուած լեզուական երեք առանձնատկանութիւնները թէեւ անպայմանօրէն առկայ են Բակունցի բոլոր ստեղծագործութեան մէջ, բայց չեն կարող սպառել պատկերացում տալ գրողի կատարած գերի եւ խորհրդահայ գրական լեզուի վրայ ունեցած ազդեցութեան մասին: Իսկ տուեալ գէպում, հասկանալի է, անպատեհ է կանգ առնել գրաւոր: Բայց պէտք է շեշտել այդ լեզուի ժողովրդայնութեան բնորոշ: Բակունցի երկերում, ինչպէս առհասարակ բոլոր գրական երկերում, կոպտ կողքի են դրուում հեղինակային լեզուն եւ գործող հերոսների լեզուն: Սակայն գրանց միջեւ անանցանելի վիճակային չկայ: Հեղինակային լեզուն գրուած է գրեա-

յին շորութիւնից, խրթնարանութիւններից, հնարաւոր կամ նորարար նմաններէ, սեթեւեթ սաւառնումներից, շարահիւսական խորթութիւններից, - այն պատկերաւոր է, կուռ, արամաքանօրէն գրուած եւ պարզապէս մատչելի: Գործող հերոսների լեզուն մեծ մասամբ գրուած է մեկուսացած ու կենտրոնախոյս ձեւերից, կենսունակութեան հեռանկար շունչացող եւ ամուլ դարձուածքներից, - բայց իմաստային ու ախորժալու է նաեւ մշակուած մարդկային համար: Բակունցի երկերում հանդէս են գալիս հայկական տարբեր բարբառներով խօսող մարդիկ, - զանգեղութիւն, քանութիւն, սասունցի, վանցի, զաղախեցի եւայլն, - իրենց ուրոյն մտածելակերպով, հոգեբանութեամբ եւ լեզուամիջոցներով: Հասկանալի լինելով հանդերձ՝ նրանք գործ են ածում նաեւ ոչ բնականացած բառեր, ոճեր, վարձուածքներ, նոյնիսկ օտար լեզուներից: Գրողը այդ բոլորին անդ է տալիս, որովհետեւ համակուած է կենսունակ ամբողջութեամբ բնաշրջանում ստեղծագործական տեսլով նաեւ լեզուի բնագաւառում, եւ բացի այդ՝ որովհետեւ նա ամէն տեղ յանգանք փնտրող վճարովի դատարան է: Ամէն մի լեզու մշակում է աստիճանաբար, ուշադիր ու զգոյշ միջամտութիւնների շնորհիւ, երբ յենում է ժողովրդական ու կենսական տուեալների վրայ: Բակունցի գրական նութեան լեզուն մարդկայինացնելու ամենահետադան մշակներից մէկն է խորհրդահայ իրականութեան մէջ:

Բակունցի ստեղծագործութեան մէջ աչքի է զարնում երկերի շարին ու կառուցուածքը ճշգրտորէն նկատմաբ ցուցաբերած խնամքը: Ձեւը միշտ հաւասարատեսակում է բովանդակութեանը: Կամայական յաւելումներ ու խճուղումներ դժուար է գտնել: Աւելի շուտ նկատուում է անդի խնայողութիւն եւ արտայայտութեան ժուժկալութիւն: Կառուցուածքի ճարտարապետական ներդաշնակութիւնը բնորոշ է Բակունցի բոլոր երկերին, սկզբնական փոքր ու

կարճ բովանդակությամբ ունեցող պատմաբաններից մինչև առաջիկա ծառայուն երկերն ու կիսաաւարտ վէպերը: Այդ խնդրանքով իմ ներդրումներն են բնորոշ է նաև մէկ ուրիշ վաստակաւոր գրողի՝ Ստեփան Զօրեանի երկերին, բայց Բակունցի երկերը խլում են մրցանիշը, որովհետեւ ձեռքի ճշգրտեման հետ ունեն նաև հիւսիսի խտութիւն, զգացական յազօգուածութիւն եւ քանաստեղծական թրթռում ապրումների բարախում:

Բակունցի երկերի մեծ մասը, մասնաւոր սկզբնական շրջանում գրուածները, ունեն փոքր ծաւալ եւ համապատասխանաբար կարճ ու միջադէպային բովանդակութիւն: Այդ տեսակէտից ներքան, թերեւ, կարելի է նմանեցնել ողջ գրող Ջեֆսոնին: Բայց այդ կարճ բովանդակութեան մէջ գրուած է այնպիսի խորութիւն եւ ճշգրտութիւն, մանաւանդ պարուրուած է այնպիսի թափանցիկ ու ինքնաբոյր մթնոլորտով, որ խմտորը ըմբռնելու համար կողմնակի ընդլայնումների կարիք չի զգացուած: Բակունցը թանձրացնելով ձեւով եւ լիովին է տալիս կենսի մէկ դրուագը, երեւոյթը, ստորը: Նրա ամէն մի երկը ինքնաբան է: Բայց Բակունցը կանգ չառաւ սահմանափակ ծաւալների վրայ եւ դեռևս 1928 թուին գրեց «Կարմրաբար» վէպը, որը նոյնիսկ այն ժամանակ մի ուշադրաւ երեւոյթ էր ոչ միայն հեղինակի, այլև խորհրդահայ ամբողջ դրականութեան համար: Առհասարակ Բակունցը դուրս էր, չէր շտապում եւ ենթարկուած էր միայն իր սեփական ներքին թելադրանքներին: Այդպէս էր եւ ձեռքի փնտռման տեսակէտից: Բակունցի մասին խորհրդահայ հեղինակներից մէկը գրում է:—

«Առանց դիվարացիաների, առանց շուղալից ինքնաբերականաբանում, Բակունցը ազգաբարեց, որ գրելու է այն կեանքից, ինչ իրեն լաւ ծանօթ է, ինչ միւս ինքը հաստատապէս ուսումնասիրել է: Եւ գրելու է այն ձեւով ու ոգով, որով աւելի յաջակամ կարող է դարձը—

նել իր երկը, որով ինքը կարող է համակել ընթերցողներին: ... Բակունցը խոստապահանջ արուեստագետ էր: Նա ամենայն մանրակրկիտութեամբ մշակում էր գրուածքի կոմպոզիցիան, լեզուն ու ոգը: Ասկեստիկ պատմաւածքի ժանրը շատ բանով է պարտական Բակունցին: Նրա ազդեցութիւնը ակներև է մեր մի շարք շնորհալի հեղինակների վրայ: ... Եթէ պատմութեան անալիզին շարժում աւժեղ է լիթիկական շեշտը եւ գործադրութիւններն անհամեմատ աւելի տակաւ, ապա՝ «Սիւ ցելերի սերմնացանը» շարժում հեղինակը պահպանելով, աւելի բիւրեղացնելով երկերի լիթիկական երանգը, մի քանի պատմութեան անհամեմատ շատ էական տեղ է յատկացրել գործադրութիւնների ծաւալմանը: Համեմատաբար շատ են դիվարացիաներ, եւ աւելի լայն միջավայր է ընտրուած»:

Այսպէս, ձեռքի համաշափութեան մտահոգութիւնը եւ երկերի բովանդակութեան ընդարձակումն ու հարստացումը ընթանում են դուրսահոսքաբար, մշակում եւ ամուսն են իրար հետ համաձայնեցուած եղանակով: Մեղեդին փոխարինում է համանուագով, որի բաղկացուցիչ տարրերը աւելի խնամքով են անդադրում, որպէսզի մէկը միւսին չխանգարեն:

Գեղարուեստական երկերի ձեռքի ու կառուցուածքի ուշադիր ընտրութիւնը ինքնանպատակ չէ: Այն օգնում է, որպէսզի հեղինակը իրարից զատի տուեալ գործի համար պիտանի կենսական վերջութիւնները՝ դրա հետ առնչութիւն չունեցող կողմնակի տարրերից: Հեղինակի ստեղծագործական սկզբունքն է՝ կենսաբան պատկերել աւելի շուտ մատչելի խորութեամբ, իր կենսական ինքնութեամբ, քան թէ լայնութեամբ, որովհետեւ լայնութիւնը մարդկայնօրէն հասանելի սահման չունի, կապակցութիւնների քանակական չափան անծայր է եւ անընդգրկելի:

Բակունցը մթնոլորտ եւ տրամագրութիւն ստեղծող գրող է: Որքան էլ

խօսի անդորրութեամբ ու որոշ հեռաւորութիւնից, միշտ համակրելի է իւր ասածի գեղեցիկ ճշմարտութեամբ: Նա առհասարակ խուսափում է ծամծմուած ու հոնտորական շարժումներից, անպայման խելացի ու արտասովոր երեւալու մարմնից, — բայց այնքան ջերմութեամբ ու հաւատով է վերաբերում իր կատարած գործին, որ շատ շուտով առանց ճիշդի յափշտակում է ընթերցողի հետաքրքրութիւնը: Բակունցը ոչինչ չի գրում անտարբերութեամբ, ձանձրութեամբ կամ ակամայ: Ամէն ինչի նկատմամբ երեւում է նրա զրական կամ բացասական վերաբերմունքը, որը այնքան անշատ է, որովհետեւ Բակունցը աշխարհն ու մարդկանց դիտում է ազդունիքով հասունացած մարդու բարձունքից, որոնցից, սակայն, ինքը բաժանուած չէ, այլ գտնւում է ամենօրեայ շփման մէջ նրանց հետ: Այդ իսկ պատճառով Բակունցի բոլոր երկերը, որքան էլ պարտուած լինեն ողբերգական թախծով, թրթռում են քնարականութեամբ եւ լուսաւորուած են երգիծանքով: Նրա երկերի բոլոր ուսումնասիրողներն էլ շեշտում են այդ պարագան, որը բաւական ակնյայտ եւ շօշափելի իրողութիւն է: Բակունցը բանաստեղծ արձակագիր է: Անշուշտ, դա բացառիկ երեւոյթ չէ՝ առհասարակ գրականութեան պատմութեան մէջ: Մանաւանդ հայ գրականութեան մէջ միշտ էլ դիտելի է, որ իւրաքանչիւր արձակագիր որոշ չափով քնարական բանաստեղծութիւն է դնում իր այս կամ այն երկում, որոշ չափով էլ հրգիծանք: Նրանցից յիշենք թէկուզ Ոսկայանի Արտիւնին, Բաֆֆուն, Մուրացանին, Աւետիս Ահարոնեանին, Վրթանէս Փափաղեանին: Բայց մինչեւ այժմ ոչ ոքի ստեղծագործութիւն չի եղել թախտաւորած այդ յատկութիւններով այնքան ամբողջական, հետեւողական ու օրգանական ձեւով, որքան Բակունցի ստեղծագործութիւնը: Քնարականութիւնը Բակունցի գրական շնչառութիւնն է:

Բակունցը գրել է ոչ միայն պոեմ-

մին երգիծական երկեր («Յովնաթան Մարշ», «Պրովինցիայի մայրամուտը», «Կէօրեն»), այլեւ անխոր բոլոր երկերում գրել է երգիծական շնչով: Անշուշտ, ստեղծագործական հոգեբանութեան տեսակէտից հետաքրքրական երեւոյթ է արտաքուստ իրարից տարբերուող քնարականութեան ու երգիծանքի այդ օրգանական զուգակցումը Բակունցի երկերի մէջ: Թերեւս դա իրականութեան պատճառած թախծը բարեխառնելու ներքին մշտական թելադրանքի արդիւնք է:

Պորհրդային գրաքննադատները Բակունցի երգիծանքի մասին խօսելով, սովորաբար նրան վերագրում են երեւոյթներին մօտենալու երկու միտումնաւոր տարբեր վարքագիծ, մարդկանց նկատմամբ երկու չափ ու կշիռ ունենալու հակում: Նրանք պնդում են, թէ Բակունցը շահագործող տարրերին ծաղրում է թունոտ ծաղրով, իսկ շարքային մարդկանց մօտենում է գոբրդաբանից բարեկամական հեգնանքով: Դա թիւրիմացութիւն է: Բակունցը մէկ դիրքից է դիտում բոլոր մարդկանց, բայց այդ մարդիկ գտնւում են տարբեր արտայայտութեամբ: Բակունցը իր երգիծանքի մէջ անգամ մարդկային է: Նա բարձր խաւերին չի վերագրում չունեցած արատներ, ինչպէս եւ ներդաժիտ չէ ցածր խաւերի արատներին նկատմամբ: Բայց որովհետեւ ամէն ընթերցող բարձրից ունի արժանիք եւ պակաս արատ է սպասում, քան շարքային մարդկանցից եւ իրականութեան մէջ յաճախ չի տեսնում այդ, — ապա նրան թւում է, թէ հեղինակը դիտաւորեալ կերպով խտացրել է գոյները: Այնինչ Բակունցը նոյն իսկ սոցիալապէս անհամակրելի տարրերին (Ջորբա Օսեփը «Ջորբան» պատմածքում, Ջամբա Մատուրը, Ամբարի կատու Սողոմոնը, Պոլա Մակչը, Մատթէոս քէյը եւ միւսները «Կէօրեն»-ում, Պոլա Նիքանը, Մկրտումը «Կարմրաքարում») բնաւ չի գրկում մարդկային խորքից, յաճախ նրանց բնական է դնում ըստ ամենայնի արժան-

բանեցած մտքեր։ Այդ արևում է եւ զուտ երգիծական, եւ երգիծանքով խառը միւս երկերում։

Բակունցի քնարականութեան մէջ չկայ ունեւորեցողութեան, զգացում խաղալու ամենայնպէս նշոյն անգամ։ Իսկ երգիծանքը երբեք չի իջնում վաղանցուկ ծիծաղ շարժելու եւ աշտու կործիններ հրամայելու աստիճանին։ Դրանք սանձուած են լրջութեան մշտական ներկայութեամբ։ Իսկ լրջութիւնը զորովի ուժի եւ կորովի ամենամայան զիջումներն է։ Ուժն ու կորովը Բակունցի արուեստի շարժիչներն են։ Դրանք բխում են, անշուշտ, հեղինակի անհատական խառնուածքից։ Բայց առանց Պրանց՝ Բակունցի գրականութիւնը չաւանդուէր։ Երբեք չեն յիշուի իր նամիքը յատուկ է Բակունցի բոլոր երկերին։ Դրա հետեւանքով՝ ամէն մի ըստեղծագործութիւն աչքի է ընկնում ոչ միայն նկարչապէս պատկերմամբ, այլ՝ եւ, առաւելապէս, խօսքի ու մտածման, գործողութիւնների զարգացման կշիռով, երաժշտականութեամբ, հարկ եղած դէպքում ցնցիչ դարձումներ կատարելու բուռն թափով։ Այդ է պատճառը, որ Բակունց չի վարանում հանդուգային պահերին միջամտել կարճ, բայց տուեալ տեղում խիստ անհրաժեշտ բացականչութեամբ։ Ուրեմն նկարչականութիւնն ու երաժշտականութիւնը միահիւստեան են արտայայտում Բակունցի երկերում։

Բակունցի պատմութեանը եւ անարկներում յաճախ կարելի է գիտել, որ սկզբում կամ վերջում բացառիկ շեշտով կցւում են առանձին բացականչութիւններ, զորոյցի նմանող մի քանի խօսքի փոխանակում կամ ուղղակի փոքրիկ հատուածներ, որոնք թէեւ գործին աւելնում են եւ լրացնում կամ բացատրում են բովանդակութեան իմաստը, բայց այնքան ուժեղ եւ կրքով են արտայայտուած լինում, որ անմիջապէս կենտրոնացնում են ընթերցողի ուշադրութիւնը իրենց վրայ։ Դրանք լինում են մանաւանդ այն դէպքերում, երբ

գրութեանը նիւթը շատ մօտ է հեղինակի սրտին, բայց նա այս կամ այն պատճառով չի կարող ընդարձակել սիրած ուղղութեամբ եւ իր ներքին աստիճանին ելք տալու համար բաւարարում է մի հումեստ անկիւնով՝ կուտակուած մըտքերն ու զգացումները, գերազոյն լարուածութիւնը յաղթահարելով, դրսեւորելու նպատակով։ Այդ ձեւի գեղումները շատ են Բակունցի երկերում։ Մենք ուզում ենք զէջ անպայման նշել երկու պարագայ, որովհետեւ դրանք ուշադրաւ են ամենից առաջ իրենց գաղափարական նշանակութեամբ։

Նախորդ գլխում յիշուած «Մի քանի փողը» պատմութեանը, անշուշտ, լաւ է գրուած եւ մի ամբողջութիւն է կազմում։ Բայց պատմութեանը շարադրելու ժամանակ շատուած, իսկ հեղինակի ներսում կուտակուած մտքերը որեւէ կերպ իր շարտայայտելու եւ ֆիզիքապէս, հոգեբանօրէն, եւ ստեղծագործական տեսակէտից անհնար էր, հեղինակը երբեք չէր կարող իրեն հանդիստ զգալ։ Ուստի ամէն ինչ նկարագրելուց ու ներկայացնելուց յետոյ՝ նա արտայայտում է նաեւ իր վերաբերմունքը այնքան կարեւոր հարցի նկատմամբ։

— «Փողը» խաղաղութիւն է։

Քննել եմ յոգնած մարդիկ, եւ փառացի լապտերների լայն տակ օրօրում եմ քաղաքի տները, նրանց սեւ պատուհանները։ Լեռներից գով է իջնում քաղաքի վրայ, եւ գիշերային գովը բերում է սուսամբարի բոյրը, լեռների յստակ օդը եւ մաքուր ջրերի ձայնը։

Եւ գոցում եմ ուղեւորութեան իմ տնտրը, նրա մէջ սուսամբարի երկու տներ՝ գորշ ու չոր, ինչպէս հանգած մոխիր։ Լեռների վրայ վրձնում է իմ ձիւն՝ ինչպէս սանձաւոր մարտիկներն են, ինչպէս սպիտակ ջրվեժը, որ իջնում է բարձրներից, քափով կտրում դաշտը, խտնում մի պտուղ գետի եւ ձիւնը ջրերի հետ գնում դէպի անհրաժեշտ ծովը։

Ձեռներդ։ Ձեռներդ։

Դու գտնում ես անպարտելի ամբողջ, քո բարձր լեռները զարթնել են, և քո լանդշեյփն հնչում են յաղթաբան երգերը:

Մի վիթխարի ծիրանի փուղ, առանց հիմ ահի եւ մոր խնդաբանք հնչեցնում է մեր արդար երգերը:

Նոյն ձեւով է վարուած նաեւ «Անձրեւ» ակնարկի վերջում: Հեղինակը պատմելով Խորհրդային Հայաստանի նշանաւոր նորակառոյց էլեկտրակայանէ՝ Զորապէսի մասին, խորհրդածութիւններ է տնում արդի շինարարութեան օգուտներէ եւ հեռանկարներէ վերաբերեալ, առանց նոյնիսկ յիշատակելու այն ժամանակ ընթացիկ «սոցիալիզմի կառուցում» բառերը: Որովհետեւ նա այդ ամէնը դիտում է հայրենասէր մարդու աչքերով եւ ուրախանում է առաջին հերթին հայ մարդու յառաջդիմութեամբ: Սակայն միայն Զորապէսի նեղ նկարագրութեամբ հեղինակի այդ միտումը թերի եւ անհասկանալի կը մնար: Ուստի նա դիմում է պատմական համեմատութեան ու ընդհանրացման ձեւին:

~ «Ես նայում եմ նրան եւ յիշում իմ երկրի հիմ պատմութիւնը:

Փայտերն ու մագաղաքները աւանդում են նրա քաղաքների կործանումը, եւ սուր, եւ գաղթ:

Ինչպէս մի եղէգն՝ նախ խոնարհել է գլուխը հողմերի առաջ եւ խաղաղութեան ժամին նորից յանձնել: Նա սարսափահար փախել է իր գիւղերից, ինչպէս նախիրը հրդեհուող անտառից, ապա տուն է շինել քաղաքների վրայ եւ անձրեւախառն քամին ծեծել է նրա հագաշէն խրճիթը:

Մեր երկրի ժայռերի վրայ յաղթողները սնանկարժէք սնով փորագրել են ա-

ւարառութեան եւ կողոպտի պատմութիւններ, իսկ խաւար խուցերում պատմագիրը յօրինել է նոյնքան սնամէջ առասպելներ հիմ փառքի մասին:

Ռաւիկն անմոռոնջ պառկել է խանի, քաւաղի եւ սպիտակ ցարի մտրակի տակ, երբեմն ըմբոստացել, որպէսզի միւս օրն ապաւինի իր տխուր երգերին եւ նորից քաշի հիմ լուծը: Նա հերկել է օւրիշի հողը, սերմել է արիւն-քրտինք, իսկ առիւծի բաժին առել են ռէսը, վանքը եւ ռուբլու արքան:

Նրա գորշ հիւղերի վրայ երկինքը մաղել է տրտմութեան անձրեւը:

Ես նայում եմ այս նորագ մարդու աչքերին եւ կարդում նոր պատմութիւնը: Դեռ ինչպիսի շէնքեր պիտի բարձրանան մեր լեռների լանջերին եւ ձորերում, ինչպէս քաղաքներ պիտի յառնեն տափարակներէ վրայ եւ զուարթաձայն հնչեն կառուցողների նոր երգերը:

Երկրի եւ մարդկանց վրայ, հերկած հողերի վրայ, իջնում է աշնան քարեքեր անձրեւը:

Այս հատուածները գրուած են 1931-32 թուականներին, երբ օրուայ նիւթը սոցիալիստական շինարարութիւնը, կոմունիզմը եւ Ստալինին գովերգելն էր, իսկ հայրենիքի ու հայրենաստեղծ ժողովրդի մասին խօսելը աններելի յանցանք էր համարուում: Բայց Բակունցը իր աշխարհայեացքին հաւատարիմ մընալով՝ կուռքեր եւ սուտ աստուածներ չպաշտեց, այլ բաւականացաւ նուազագոյն, ընդհանրապէս արդար տուրքով:

Այսպիսով, Բակունցի արուեստը դրսեւորուեց իր ուրոյնութեամբ, - լեզուի, երկերի կառուցուածքի, բովանդակութեան խտութեան, քնարականութեան, երգիծանքի եւ ներքին դիմադրմի, ուժի ու կորովի յատկանիշներով:

Լ. Մ.

Բ. ԹԱՇԵԱՆ

ԳՐԱԿԱՆ «ՄԱՆՐՈՒՔ»

ԳԱՐԵԳՐԻՆ ՊԵՏԿԵՆԻՍԻՆԻՍԻՆ

«ՄՐԻՆԳ»

«Մասին» 1892 Սեպտեմբեր 19-ի թիվին մէջ Հրատարակուած է Խարերդացի վաղամեռիկ բանաստեղծին՝ Գարեգին Պէշկէօթիւրեանի ՄՐԻՆԳը: Ձեռագիրը թերթի խմբագրութեան զրկած է Ռուբէն Զարդարեան, Պէշկէօթիւրեանի մահէն ետք:

Հրանտ Ասատուր թերթի նոյն թիւին մէջ կը գրէր՝

«Երբ նոյնիսկ Կովկասցի երաժիշտներ այնչափ անծանօթ կը մնան մեզ, դարձանալի չէ՞ որ անունն անգամ լսած չըլլանք այն գաւառացի երաժիշտ-բանաստեղծին, որուն մասին կը գրէ մեզ Խարերդէն Պ. Ռուբէն Զարդարեան: Գարեգին Պէշկէօթիւրեան անցեալ տարի Յունիսին մեռեր է թոքախտէ: Պէշկէօթիւրեան ճարտար սրնդահար ու գաշնակահար է եղեր: «Միշտ տեսակ մը հիացում կար՝ ըզմանքի հետ խառնուած՝ ամէնուն բերանը, եթէ երբեք իր նկատմամբ խօսք մը գառնար խմբակի մը մէջ. Եսմըզ շիշ կը ցարմէ, կ'ըսուէր իր շուրջը», կը գրէր Պ. Զարդարեան: Մեր Խարերդացի թղթակցին ձեռքն անցեր են վերջերս անոր գրածներէն հասակոտորներ, որոնցմէ Սրիմզը զրկած է մեզ Հրատարակութեան համար: Այդ տաճարներն մէջ ճշմարիտ բանաստեղծութեան զբոսը կրող հատուածներ գրուածք: Հէք թոքախտաւորը, իր վեհա-

կին գիտակից, թախծողին սրտառու շեշտեր ունի, որոնք բռնագրօսիկ տողերու մէջ չեն գար ի յայտ, այլ հեղասահ, մեղմիկ, ժորակի մը խորը թաքուն դիպող առուակի մը պէս, որուն անցքին վրայ խութիւր ու ժայռեր չի կան»:

Պէշկէօթիւրեանի քերթուածը տալէ ետք, Հր. Ասատուր կը շարունակէ.

«Այս տողերուն մէջ չէ՞ք գտներ գաւառացի Դուրեանի մը սիրտը. եւ սրբինգին վրայ բացուած երկաթի վէրքերը, թոքախտաւորին կուրծքը ծակելող վէրքերուն բաղդատուած, մահաբոյր բան մը չե՞ն տար այս տաղերուն, Դուրեանի մերձ ի մահ գրուած ոտանաւորներուն պէս, բան մը որ ընթերցողին սիրտը կը լնու արգահատանքով ու թախծութեամբ...»:

Հրանտ Ասատուրի այս բացատրութիւնները Հրատարակեցին «Յուսաբեր» ամսագրի 1947 Հոկտեմբերի թիւով. իմ կողմէս աւելցուցի ես ալ.

«ՄՐԻՆԳը առաջին անգամ Հրատարակուած է «Մասին» մէջ: Արդ՝ նկատեցի, որ քերթուածին առաջին եւ վեցերորդ տուններուն տակ, մէկ տողի վերայ, բազմակէտեր գրուած են, ինչ որ կանկած ներշնչեց ինծի, թէ զեղչուած տուններ կան Պէշկէօթիւրեանի քերթուածին մէջ»:

Արդարեւ, ի՞նչ կրնային նշանակել այդ բազմակէտերը, եթէ ոչ՝ զեղչուած մասեր: Ի՞նչպէս ոտուգել սակայն, որ բազմակէտերը իրապէս ջնջուած մասեր կ'ենթադրէին: Ո՞վ կրնար բացատրու-

թիւն մը տալ այս մասին, քանի որ մեռած էին երեք վկաներն ալ, — Հեղինա-կը, «նաբերդցի թղթակից»ը՝ Ռուբէն Զարդարեան եւ թերթին խմբագիրը՝ Հրանտ Ասատուր:

«Արինգ»ին հրատարակուած մասը չորսական տոգնոց ութ քառականերէ կը բաղկանայ, ընդամենը 32 տող:

Հիմա կը յիշեմ, որ իմ կասկածներս հրատարակուելու յայտնելէ ետք, «գրասէր ոմն» գրեց ինծի, թէ այո՛, «Մասիս»ի հրատարակած Արինգին մէջ զեղչուած էին ո՛չ թէ քանի մը, այլ ճշգրիտ ՏԱՄՆԸ-ՎԵՅ քառականեր: Ուրեմն՝ ամբողջ քերթը (քառական), ճիշդ ԻՆՆՍՈՒՆԸՎԵՅ տող: 32 տողը կայ, 64 տողը չկայ: զեղչուած է: Ո՛վ գիտէ, ի՞նչ եղած է հիմա ձեռագիրը: պահուած է տեղ մը, Հրանտ Ասատուրի «արխիւ»ին մէջ մնացած է, պատուում չեն տուած է, թերեւս Հայաստան դրկուած է:

Ո՛վ ոք կրնայ ճիշդ պատասխան մը տալ այս հարցումներուն: Միակ ստոյգն այն է, որ Պէշկէօթիւրեանի քերթուածին երկու երրորդը զեղչուած է: Եւ այդ զեղչուած մասը ԱՆՀԵՏ ԿՈՐՍՈՒՄԾ է, զէթ ինչպէս կ'ենթադրեմ ես:

Հիմա չեմ յիշեր, թէ ո՛վ էր — եւ ո՛ր է այժմ — այն «գրասէր ոմն»ը, որ վկայեց ու հաստատեց, թէ այո՛, Պէշկէօթիւրեանի Արինգը 24 տուն էր (96 տող) եւ թէ 16 տուն էր (64 տող) զեղչուած է: Կա՞յ արդեօք ուրիշ «գրասէր ոմն», որ կարենայ լուսաբանութիւններ տալ մեղի այս մասին: Չեմ կարծեր: Չեմ յուսար:

Ափսո՛ս, կ'արժէր, որ Արինգը ունենայինք ամբողջութեամբ: Մաս մը չըրատարակուած է Զարդարեանի «Մեղ-բաղէտ»ին մէջ (բարձրագոյն ընթացք), կարգ մը լեզուական փոփոխութիւններով: Հետաքրքրուողները կրնան կարողալ բնագիրը «Մասիս»ի 1892 Սեպտ. 19 թիւին մէջ: Պէ՛տք էր արգեօք վերհրատարակել զայն «ի պէտս անգիտաց»...:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ «ԼԵԳԵՆԻ»Ը

Այո՛, իրապէս «լեգենդ»՝ ո՛չ միայն ծնունդը, այլեւ կեանքը եւ վախճանը մեծ տաղասացին, որուն մահուան 160 ամեակը լրացաւ 1961-ին:

Հայէպէն Թիֆլիս զաղթած Կարապետի եւ Թիֆլիսի արուարձաններէն Հաւարարի բնակիչ Սառայի որդին էր աշուղը: Այսօրն ուր է: Ի՞րրեւ ի՞ր ծընընդեան տարեթիւ ընդունուած է 1712 թուականը: Ժի՛շդ է ասիկա: Ի՞ր տաղերէն մէկուն մէջ (թիւ 51), որ գրուած է 1757-ին, անմահ կրգիւր կը վկայէ. «Սայաթ-Նովա, տարիս էլալ քարա-սուն»: Այս կը նշանակէ, որ Կարապետի եւ Սառայի որդի Արուսթինը ծնած էր 1717-ին: Ո՛ր: Կ'ենթադրուի՝ Սանահինի մէջ, որ վրաց Գիւրգի ԺԳ. Թազա-ւորին պատկանող արքունի կալուած մըն էր եւ ուրիշ Սայաթեան ընտանիքը զաղթած էր Թիֆլիս: Այս է եռամեծ տաղասացին «լեգեք ծննդոց»ը:

Հաւանաբար 1762 թուին Սայաթ-Նովա կը վտարուի վրաց արքունիքէն, որ պալատական երգիչ էր: Այդ թուականէն ետք, քահանայ կը ձեռնադրուի, հակառակ իր կամքին, եւ կը կոչուի Տէր Ստեփան: Աւելի ուշ, 1770-ին, կնոջը մահէն ետք, վարդապետի աստիճան կը շնորհուի իրեն: Եւ կը փոխադրուի Հաղբատի վանքը:

Ե՛րբ մեռած է: Կամ՝ մեռած է թէ սպաննուած է:

Մինչեւ 1930 այն կարծիքը կը տիրէր, թէ ուրիշ շատերու հետ սպաննուած էր Աղա Մահմէտ Խանի զինուորներուն կողմէ, 1795 Սեպտ. 20-ին, Թիֆլիսի գրաւման ատեն: Գ. Ախմերզեան կը գրէ, համաձայն իր ընթանի ապրող ծերունիներու վկայութեան, թէ երբ Պարսից բանակը կը հեռանայ Թիֆլիսէն, Սայաթ-Նովայի դիակը «թաղում են մեծ բերդի եկեղեցու հիւսիսային փողը դրան տուէն: Թէպէտ Սայաթ-Նովա զերեզմանն չունի քար զցած, բայց էսպէս պատմում են նրա թաղման պատահողներն»:

Սահայն այս վկայութիւնը աւանդուքիւն է, պատմութիւնն չէ: Գ. Լէոնիճէն եւ Պրոֆ. Միլիքսէթ-Բէկ, ուրիշ վկայութիւններու վրայ հիմնուելով, հաստատեցին, թէ Սայաթ-Նովա բնական մահով մեռած է 1801-ին, 84 տարեկան, եւ ո՛չ թէ սպաննուած է 1795-ին: Իր սպանութեան մասին որեւէ յիշատակութիւն չկայ իր ժամանակակիցներուն կամ զաւակներուն եւ թոռներուն կողմէ: Ասկէ զատ՝ վրացի արեղայ մը ծերունի տաղասացին հանդիպած է 1800-ին:

Առեղծուած մըն է ինչպէս Արովեանի, նաեւ Սայաթ-Նովայի մահուան պարագան:

Գ. Ախմէրզեան, Լէօ, Յովհ. Թումանեան, Գ. Ասատուր, Պոլոնսկի, Քիշ-ժիշեւ, Պոտոս, Ա. խախանյապիլի, Վ. Բրիւսով, Կեկելիճէ, Ի. Գրիշաշվիլի կ'ընդունին, թէ Սայաթ-Նովա ՍՊԱՆՆՈՒԱՄ Է Հայոց եկեղեցիին մէջ, Թիֆլիս, եւ թաղուած է Քարափի Ս. Գէորգ եկեղեցում, ուր, 1914-ին, Կովկասի Հայ Գրողներու Ընկերութեան ջանքերով դամբարան մը կը կառուցուի:

Կ'ըսուի, թէ Սայաթ-Նովա, իբրեւ վրաց թագաւորին եւ ժողովուրդին բարեկամ, իր սաղով ու քամանչայով ճապատ կ'առաջնորդէ վրացի զինուորները՝ ընդդէմ Աղա Մահմէտ Խանի բանակին: Վրացիները կը յաղթուն Նարիզայա ամրոցին տակ, ուր կը սպաննուի նաեւ Հայ աշուղը 1795-ին:

Վրացի գրաչէտը՝ Գ. Լէոնիճէն, Թիֆլիսի մէջ դասախօսութեան մը ընթացքին, քանզեք ծանօթ բոլոր աւանդութիւնները եւ հաստատեց, թէ Սայաթ-Նովա ո՛չ թէ սպաննուած է 1795-ին, այլ բնական մահով մեռած է 1801-ին: Վրացի պատմագիր մը՝ Պլա-

տոն Խոսեւենի, իր մէկ գործին մէջ՝ «Վրաստանի վերջին քաղաւոր Գիորգի 13-րդի կեանքը», խօսելով Սայաթ-Նովայի մասին, որ ժամանակակից էր այս թագաւորին, կ'աւելցնէ, թէ Հայ աշուղը ՄԵՌԱՄ Է 1801-ին: Լէոնիճէն կը նկատէ իրաւամբ, որ Սայաթ-Նովա, այլեւ շատ ծերացած ու տկար, չէր կրնար առաջնորդել վրացի զինուորները 1795-ին:

Գոր. Լեւոնեան կը քննադատէ Լէոնիճէնի տեսակէտը եւ հինգ հակափաստեր առաջ կը բերէ, որոնք համոզիչ չեն սակայն: Ուշագրութեան արժանի միակ վատտը այն է, որ Սայաթ-Նովայի տըղան տեսարակի մը մէջ զրած է. «Այս մտխամամաղը Սայաթ-Նովա յօրինեց, որ Շահը պէտք է զայն մեծ ժխորով նրա դերեղմանի վրայ. այս է պատճառը, որ նրան մաս-մաս արին»:

Դժբախտաբար, յստակ չէ այս «փաստ»ին լեզուն: Առ այժմ կրնանք վերահայել, որ Հայ աշուղը ծնած էր 1717-ին եւ մեռած՝ 1801-ին (ո՛չ թէ սպաննուած՝ 1795-ին):

Հարիւր տարուան ընթացքին (1852-1952), Սայաթ-Նովայի հայերէն տաղերը, լրիւ կամ ոչ-լրիւ, առանձին հատորներով հրատարակուած են 12 անգամ: Հայերէն տաղերը կը հաշուուին 68, վրացերէնները՝ 32, ատրքելաներէնները՝ 71, ընդամէնը՝ 171: Կը կարծուի, թէ մեծ աշուղին տաղերէն շատերը կորսուած են կամ անյայտ մնացած եւ թէ մեզի հասածը Հաղիւ մէկ երրորդն է իր ամբողջական գործին:

«Լեզե՛նդ», իրական «լեզե՛նդ»՝ անհրման տաղասացին կեանքն ալ, գործն ալ, մահն ալ...

Բ. Թ.

ՄՏԱՆՈՒՄՆԵՐ ՊԵՐՆԱՐ ՇՈՅԷՆ

Վայրենիմ կը խռարի փայտէ ու քարէ կուտօնու սալի, Քաղաքակիրթ մարդը՝ միտէ եւ արիւմէ:

✽

Ազատութիւն կը ճշմարիտ պատմութեան պատմութիւն, անո քէ իմյո՛ւ մարդոց մեծ մասը կը վախճայ անկէ:



ՍԵՐՈՒՆԴԻ ՄԷ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ՝ ԲԻԻՋԱՆԻ ԵՂՆԵՍՅԱՆ

450 մեծագիր էջ, տպարան Ամբիոն 1962

Վեպ մը չէ անշուշտ, ոչ ալ մանկավարժական ուրոյ նիւթի մը մասին ուսումնասիրուած երկարաշունչ գործ մը. հայ ուսուցիչի մը, հայ տնօրէնի մը, մարմնաշարժող սրտով կրթական մշակի մը տարիննրու ընթացքին, կեանքին նկատմամբ իր անձնական ազդեցութեանց տակ քաղթին յանձնած տպաւորութիւններն են, փնտաւորումները, սրտի խօսքը:

Նշուած մը գիրքին քովամղակութեամբ վրայ արդէն իսկ կը պատկերացնէ մտանգութիւնները հեղինակին՝ Հայ պարագին արժէքը. մեր մասնակցութեամբ անկուս. Մամուլապարտէզի մասնցումի պատրաստելը. տեղացիներ եւ մարդկայինը ռաւամ մէջ. դաստիարակին հեղինակութիւնը. տղաք խաղալով կ'աշխատին. երիտասարդ գրողներու պատրաստութիւնը. ազգին շրջամտաբանները. ազգը պէտք ունի ընտրեալ մտադր. ճիշտակեցնել ճանի մը հատը միայն այն ապրումներուն ու մտանգութեանց որ Պրն Բիւզանդ եղիպիանինն են իրարմ, կրթական անխօս մշակի ու դաստիարակի իր երկայտեսութեամբ ընթացքին:

Այս կշռաչափով պէտք է մօտեմալ գրքին, ու այն ատեն է որ բուն արժէքաւորումը կարելի է կատարել. եւ երբ աւարտէք ըմբերումներ այս ծաւալուն գործին, անպայման կը հասնիք այն հերթականութեամբ, որ զմարդ կերտելու ծառայող պատասխանատուութիւնը կրկնակիորէն ծանրացած, զհայ մարդ կերտելու զգուշացումը պարտականութիւնը իր ունեւում կրած կրթական մշակի մը փնտաւորումները, յուզումները, հիասթափութիւններն ու յանգումները իրարմ պատրաստութիւններն են ու կրնան ռազի մը ցոյց տալ մանաւորներու, ըլլան անոնք կրթական մշակ թէ ծնողք:

Ինչպէս հեղինակը ստեղծուած է իր լազման խօսքին մէջ, շուրջ գրութիւններն ալ կը կանգնին մանկավարժական հիմնաւոր ըմբռնումներու եւ փորձառական համոզումներու վրայ: Ու յաջող փորձ մըն է զմանկավարժական զիտութիւնը ժողովրդականացնելու, Ափիւսի մէջ անձն սերունդի մը դաստիարակութեամբ ուղիներով:

Իր այս մտադրութեամբ մէջ, գրքին ունեցած

ամնապատ քանը իր ծաւալն է գլխաւորաբար, որովհետեւ դարձ արագութեամբ դարձ է, ու զգուշութեամբ պիտի զգուշանայ այսքան նրաւարարունչ գործ մը կարգաւ: Արժէք տալայն որ կարգացուի այս գիրքը. կարգացուի մանաւանդ, զիք ուսուցիչն եւ ուսուցչուհին կողմէ:

Բ. Փ.

ԱՆԳՈՅ ՀԵՏԳԵՐ

ԹԱՏԵՐԱՆԱԿ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՎ

Հեղինակ՝ ՋԱՐԵԶ ՄԵԼԻՍԵՆ

88 էջ 24 սմ. 17 սմ.

Եպ. Սեւան 1963

Ն.Բ.Ը. ժամանակակից կեանքի կ'ըսուի առեւտրական ըլլալ. եւ իրօք, կրնայ ժամանակակից համարաւոր, թէեւ մասնաւորաբար ժամանակին հետ կապող տարրեր շատ էին կան հոն: Աւելի ճիշդ կ'ըլլար թերեւս զարգեցման կեանքի համարաւոր զայն, եւ այն ալ հարապակեմ, կամ ամերիկեան կաշիւու պայմանով, հակառակ առեւտրական հայկականութեան, ճանի որ խնդրող առարկան երկատեսակ կ'ըն մըն է, զաւանդուն տէր, բաժնուած իր ամբողջութեան, աւելի ճիշդ ամուսինը դուրս ընած է զինքը, որովհետեւ իր զայն հիւանդութիւն մը ռաւեցած, հիւանդանոց, ինքնանոց մտած է ատոր համար. առաջացած է ու դուրս եկած: Թէեւ այժմ տառաջացած, սակայն իր զաւանդուն իսկ տեսնելու արգելքին տակ առնուած, ամուսինն կողմէ, չգիտենք ինչու. այս կէտը բաւարար չափով չի քաջատրուի, սակայն որպէս տրամաբան երեւոյթ կը փորձուի օգտագործուի երկրորդ արարի վերջաւորութեան:

Այս երկատեսակ կ'ըն յոյս կողմը կը դառնան երկատեսակ (հարաւոր) բժշկ մը (իրենց տան տարիներու բժշկը՝ ամուսին) իր ամուսինը մայրիսկ (տունէն հեռացած, որիչ երկատեսակ ազգայն մը յոյս կողմը դառնալու վրայ, ուսկայն դեռ իր կնոջ հետ կապուած), մայր մը, նաւատարիւ պատուելի, հարաւոր մը՝ որ հրեւան

Հղճարներ

« ԹԵՐԹԵԼՈՎ ՉԱՐԵՆՅԻ ԹՂԹԵՐԸ »

Այո է վերնագիրը այն յոգուածին, որ գրած է Գուրգէն Մահարին՝ Չարենցի թղթերը թերթելու ատեն:

Այդ կարճ յոգուածը քիչ մը լոյս կը սփռէ 1933-1937 թուականներու խաւար օրերուն վրայ: Հակառակ անհասի պաշտամունքին դէմ ըսկըսուած պայքարին, համարձակ գրիչ մը տակաւին լրիւ պատկերը չտըւաւ այն օրերու դաժան կոտորածին, որուն ենթարկուեցան Խ. Հայաստանի դքսագէտներն ու մտաւորականները, եւ որոնց ոչնչացումով նոր Ապրիլ-նամ եղեռնի մը ահաւոր հոգեվիճակը տարածուեցաւ մեր երկրին մէկ ծայրէն միւսը:

Ասկէ ետք պիտի գրուի՞ այդ սահմակեցուցիչ պատմութիւնը: Սպասենք եւ յուսանք:

Գ. Մահարին «Թերթելով Չարենցի թղթերը», կը խօսի Չարենցիի հետ: Առ այժմ գոհանանք այս պատահիկներով:

«Անհատի պաշտամունքի ամենադաժան շրջանը: Այդ շրջանը դու տպրեցիր անս այս ոչ լրիւ Թղթերով, որոնք ընդգրկում են 1933-37 թվականները: Խորին, անօդ գիշեր է տիրում այս սպիտակ Թղթիկների վրայ, որոնք երբեմն փնտելկուում են կայծակի գիկզակներով:

«Աւաղ, մութ եզաւ ու մահ ու անկումի գուժում»:

«Ո՞րն էր ամենից սարսափելիս այդ սեւ իրադարձութիւններում: Այդ մասին անտ քո տողերը»:

Չարենցի քանի մը տողերը.

«Ձկայ աւելի առհէի պատիժ, քան այն, երբ մարդուն դատապարտում են իրրեւ գաւաճանողի մի գաղափարի դէմ, որը հենց նրա կեանքի միակ սրբազան գաղափարն է»:

Հաւատաքննիչները, հակառակ Չարենցի այս հաւատումներուն, հալածանքը կը շարունակեն:

Գ. Մահարի կ'եզրակացնէ.

«Դուրսը մատած արքան ճիշդ եւ գուշակել, քէ յիրաւի ինչ է կատարում դաժան «ներսում», ստալինեան գործերի արիւնտ գործարանում, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ քարայկան և փիգիփական սպանդանոց»:

Չարենցը զգացած է թէ դէպի սպանդանոց կ'առաջնորդեն դիմքը:

«Եթէ այսպէս գնայ,

«Դեռ ով գիտէ, քէ ի՞նչ

Թիաքաններ հասնեա...»

Գ. Մահարին Ձարենցի խօսքն զերջ կը շարունակէ.

«Այդպէս չեղաւ սակայն: Դուն հանգար առաջին քիարանում:

«Եւ միեջղեա ստալինեան ազատամին ցնծութեամբ էր դիմաւորում իւրաքանչիւր ձերբակալութիւն աւ մահ, դու պայծառ տողերով ռըրացիր նահատակների մահն ու կորուստը»:

«Երգեցիր դու եղբրամահ Ա. Խանգեամին ու երգեցիր դեռ Բակում-ցին «պայծառ նահատակ», միևնու հասար եւ հաւասարութիւնը նրանց»:

Ձարենց իր մահէն 8 ամիս առաջ, Մարտ 22-ին թղթին կը յանձնէ Հետեւեալ տողերը, «ԶՈՒԱՐԹ ԳԻՏՈՒԹԻՒՆ» զերնագրով.

«Իմ 40-ամեայ տարեգարդի օրը...

«Այսօր լրանում է նաեւ իմ գրական գործունէութեան քսանեւիմեայ տարին...

...Եւ ահա այսպէս. քսանեւիմեայ տարի ստեղծագործական աշխատանքով հայրենի ռզեկում հերկը հերկելուց յետոյ, տօնում եմ իմ կրկնա-ճի յօբելանքը, մենակ ու հալածական պոէտ, աքսորեալ սեփական հայրենիքում, հերկի եզերքին հայրենական երգի, ամայացած դաժանագոյն եւ առնչով սեփական նախարարների եւ պետերի, հայրենի երգակիցների, դեռ մնացած մի քանի խեղճերի յախումն ցնծութեան ճերմոյ...»:

Գ. Մահարին կ'աւելցնէ.

«Կար այդ «յախումն ցնծութիւնը» եւ կային յախումն ցնծացող-ճերմը»:

Թալաթը գլխատեց Արեւմտահայ մտաւորականութիւնը, որպէս-զի յիսուն տարի Հայոց խելքը գլուխը չգայ: Սթալինեան համայնավարու-թիւնը նոյն ոճրամոտութեամբ, գլխատեց Հայ ընտրանին եւ ուշադրութիւն չգործուց Հաւատարմութեան երդումներուն: Վերապրողները այս ճշմար-տութիւնը կ'ըմբռնեն արդեօք:

Այո՛, կային յախումն ցնծութիւնները քսանեւիմեայ տարի առաջ սեփական երկրի մէջ ու գարշելի ցնծութիւնը շարունակուեցաւ սփիւտքի մէջ այդ դաժան օրերուն յաջորդող տարիներուն: Միայն... քսանեւիմեայ տարի անցնելէ ետք, Հիմա առանց ակնոցի, կը տեսնեն Ձարենցի «պայ-ծառ անունը»:

Մենք սգակից ենք բոլոր անոնց որ մատնուեցան անպատմելի այդ եզեռներն: Ճշմարիտ եւ անկեղծ երգողներուն եւ մտաւորականութեան կը միացնենք մեր ձայնը՝ դաժանագոյն այդ օրերու ոճիւրները դատապարտե-լու համար: Մենք, այն օրերուն, քսանեւիմեայ տարի առաջ, արդէն մեր զայրոյթը յայտնած ենք անմարդկային ոճիւրներուն դէմ: Բայց պէտք կը զգանք քիչ մը խորհրդածել Գ. Մահարիի լաւատեսութեան վրայ:

Գ. Մահարին կը գրէ.

«Այժմ այդ ամէնը մի ծանր երազ է, մղձաւանջ: Օղը մաքրուում է եւ աւելի պիտի մաքրուի, քրովիներու ուժի մէջ եմ մտնել լեռնանաւ ճար-մաները»:

Իրա՞ւ «օղը մաքրուում է»...

Լեռնանաւ նորմաները մենք տեսած ենք Սթալինի երեսնամեայ տի-

ԴԷՄՔԵՐ

ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՓԱՅԱՍԼԵԱՆ

(1915 — 1963)

Յաղթահասակ՝ Առողջ։ Բուրբուրողին կայտառ, բուրբուրողին գեղեցիկ։ Երեղի՛ պէս բան մը այս երիտասարդ կրօնաւորը՝ երբ, Հալէպի ընդարձակ թեմին մէջ, հարիւր հազար Հայերու և Աստուծոյ յարաբերութեանց թիւ առաջին միջնորդը կը կարգուի, հին Հայրապետութեան մը նուիրական զեսպանը։ Երբ, Երկնքին ու Երկրին պատկանող գործերուն գերադոյն ղեկավարը, վերին վերակացուն կը նշանակուի շրջանի մը Հայութեան Համար։ Եւ այսպէս, երբ գեռ կանուխ տարիքի մը մէջ, բարձր աստիճանի մը կը տիրանայ ու աշխատանքի բարձրագոյն եռանդով մը, կիրքի աստիճանին հասած խանդով մը դրեթէ, կը նուիրէ իր դարուն կեանքին բոլոր ցերեկներն ու գիշերային ժամերուն մեծ մասը, Հայութեան ու Հայ եկեղեցիի գործերուն, Հայրութեան ու Հայ եկեղեցիի այս ու այն մտահոգութեան, այս ու այն կարիքին, այս ու այն ցաւին։ Ու երբ, վերջապէս, մինչեւ վերջ կարծես ամէն ինչ կանոնի սկսած, կեանքի վիշտին ու ժպիտին, վերելքին ու անոր կապուած հազար դժուարութիւններուն կանուխէն ծանօթացած, մեծ ասպարէզի մը ու մեծագոյն կոչումի մը քաղցրութիւնն ու դառնութիւնը փոխն ի փոխ ու լիովին աղբաւ, բացառիկ անուններուն բացառիկ ճամբով, եկեղեցականի հակառակդական դէմքի մը վերածուած՝ Ամենակալին այս բարձրագոյն մէկ պաշտօնատարը, անսպառ աշխոյժով ու կանգ առնել չգիտող կենսայորդ աւելանով մը, հոս

է միշտ, հոգ է ու հոն՝ մեծ բանի մը համար, միջակ բանի մը համար, ու երբեմն, բուրբուրողին փոքր, բուրբուրողին աննշա՛ն բանի մը համար։

Պելճիքայէն վերադարձած նախկին զպրեկանցի համալսարանական վարդապետը, որուն կեանքը, կրկնենք, անսպառանք մը, վաղքի նման բան մը եղաւ դէպի վերելք, դէպի լայն ժողովրդականութիւնն ու հոռի ապա դէպի մահ՝ գերաշնորհի աստիճանին հասած օրն իսկ կարծես, հրաժարեցաւ վախ, ընկրկում ու խուսափում նշանակող մօտ ու հեռու բոլոր բառերէն։ Եպիսկոպոսական փառքին պէս, որ իր մարմինը կը պատմաւանդէր, կրեց նաեւ իր հոգին շեղացընող խիզախութեան փրկունը։ Նահանջ ու նահանջականութիւն ըստածին ճիշդ հակառակ ճամբուն մեծ ճամբորդներէն եղաւ Փայասլեան ընտանիքին բարի Սիւսոնը, ուսման ու Աստուծոյ ծարաւ Հալէպի պատանին։ Սիւսոնը հեռուն, պատանութեան քաղցրին ու մշուշին մէջ ձգեց։ Ու քալող, ու վազող տարիներուն հետ նախ քով վարդապետ ու շուտով քաջակող Զարեհ Եպիսկոպոս մը եւ ապա կաթողիկոս եղած՝ բարձր բաներու սա գերագոյն մէկ ծարաւեալը, դրօշակ ըրաւ իր կեանքին համար քանի մը բառեր, որոնցմէ մէկը եթէ սէրն էր միշտ, երկրորդը յանդգնութիւնն էր շարունակ, ու երրորդը մաքրութիւնը հողի՛ իր բոլոր քայլերէն անբաժան։

Բերիոյ քաջակորով ու քաջաբախտ Առաջնորդը, որ յետոյ Հայոց Մեծի

Ճանն կիրիկիոյ վեհափառներուն ամէնէն սեւաբախտը եղաւ, սեւ ընչացք ունէր, սեւախիտ յօնք ու սեւ աչքեր: Ունէր նայելու ուղիղ, խելացի, յստակ կերպ մը: Թաւ ձայնին հետ թաւօրէն նայելու առնակա՛ն կերպ մը ասիկա՛ որ յետոյ, կաթողիկոսութեան օրերուն, վերածուցաւ հետզհետէ բոլորովին խոր ու խոհուն կերպի մը, քանի որ եօթը տարուան մէջ աւելի դժուրքի մը վրայ բացուող Հոգիի մը պատուհաններէն կու գային այլեւս այդ նայուածքները քան մարդկային սովորական աչքերէ: Այսպէս՝

Եպիսկոպոսական խորխոս ու միաժամանակ այնքան աղնուօրէն ու աղնը՝ տկանօրէն խոնարհ նայուածքին, որ կեանքը բարութեան ու բարձրութեան անկիւնէ մը սովոր էր դիտել՝ յաջորդեց, հայկական տխրապոյն, օ՛, աւելի՛ քան տխրապոյն անհասկացողութիւններու ամենապառակ աշխարհութեան մը եօթնամեային զուգահեռ, վեհափառական նայուածքը Զարեհ բաղմաշարչար, բաղմաշարած ու բաղմաշարաց կաթողիկոսին: Օ՛, եօթը անհուն տարիներու անհուն դժուրէն անցած, դժնդակօրէն այդ դժուրէն երբե՛ք չհեռացուած վկայատիպ ու վկայագեղ այս հովուապետին նայուածքը այդ օրերուն ու ատկէ ետք, մինչեւ Փետրուարի դիշերուայ մը մահուն նախածանոյց չեփորը անոր կիսաւեր սրտին առջեւ, մինչեւ ամերիկեան հիւանդանոցի իր կեանքի վերջին ու մահունան սկզբնական երթը, մինչեւ խաղաղօրէն ու խոնջօրէն յանձնելը իր Հոգիին Աստուծոյ գրկած մէկ հրէշտակին: Օ՛, այդ նայուածքը նորէն: Հոգիի դեբապոյն տրամութենէ մը եօթը տարի նայող, եօթը տարի ներող, եօթը տարի զինք հալածողներու աննշտ խաւարին վրայ սիրոյ անվախճան ցերեկի մը պէս պայծառացող, հաշտարար ծիածանի մը նման կամարուող, այդ նայուածքը նորէն...

Անթիլիասի վեհապայծառ դահալային այդ խոր, այդ անբա՛ւ նայուածքը,

որուն նման քիչեր նայեցան այս ցուրտ մոլորակի ցուրտ արամաղբուքիւններուն. որուն նման, օր մը, պահ մը, խորունկ անցեալի մը մէջ, Արե՛ւը նայեցաւ, եղբօր մը սեւ ուրուականին, ապա շինջ երկինքներու, ապա ժօտեցող, զինք մայրօրէն գրկող ու վերջին աստուածակա՛յքը տանող մահուան:

✽

Մտքի տիտան մը չէր քրիստոնէական կրօնին բարձրագոյն տիտղոսներէն մին կրող ամերիկեան հիւանդանոցին մահամերձ կրօնապետը, որուն կեանքին վրայ, երկու լման օր, հարիւր հազարաւոր սրտեր, սփիւռքի չորս ծաղերէն, զողացին, անձկութիւններուն ամէնէն իրականովը, ամէնէն խորունկովն ու ցաւադինովը: Յուշումի եւ անուր անձկութեան այդ պահերը հայկական զաղթախարհի մէջ, համաժողովրդային համակրանքի վկայութիւն մը իրրեւ պիտի մնան, ի խաղաղութիւն երանաշնորհ հանգուցեալի իր հոգիին:

Մտքի տիտան մը չէլլալէ զատ, չէր նաեւ զբիւ հսկայ մը, չէր նոյնսէլ խոնարհ դրիչ մը, Փայասիան Զարեհ Ա. կաթողիկոսը: Չէր՝ եկեղեցական հոշակաւոր տրիբուն մը: Բայց, տեսանք, հարիւր հազարներ տեսան ու կարգացին, որ մտքի տիտանէ մը, զբիւ հոշակայէ մը ու բարձրօրէն պերճաբարբառ հոկտորէ մը աւելի՛ մարդ ցնցեց իր մահունան լուրով, աւելի՛ ժողովուրդ ուխտաւորեց իր անշունչ մարմնին առջեւ, աւելի՛ բազմութիւն դուժարեց ու ծովացուց զէպի մահունան նուահանգիւստը իր երթի ճամբուն վրայ: Յուշումով, հարազատութեամբ, Հոգիով ու Հոգեբխումով լեցուց Պէյրութէն Անթիլիաս տանող Փետրուարի մը անձրեւամալ՝ պողոտան:

Տեսաք: Կարգացիք: —

Անթիլիասի հայածական Օծեալը ունհուն սուգ ու անհամար սգակիր կուտակեց ճամբաներուն վրայ, պատշգամբ-

ներուն վրայ, տանիքներուն ու հեռու-
ներու վրայ:

Ծո՛վ բան մը պատահեցաւ այդ օր.
ծո՛վ բան մըն էր ատիկա: Ծո՛վ մը
սիրտ էր վասնզի եւ ծո՛վ մը բարու-
թիւն՝ Հայոց այս կաթողիկոսը: Ծո՛վ
մը հաւատք էր ու հայութեան արժէք-
ներուն հանդէպ ծո՛վ մը սպարում: Ծո՛վ-
օրէն մեծ դաս մը իր հայրավետական
կեանքն ու մահը՝ հայութեան մեծ պա-
ռակտումը սպարող այս օրերու մարդոց:



Մեր գիտցած, կարգացած, տարի-
նե՛ր սմբողջ սերտած գրականութեան
մէկ երկր շղթեց կիլիկեան Աթոռին մեծ
նշնեցեալը, որպէսզի իրաւունք ունենա-
յինք «Բաղին» գրական գէմքերու էջե-
րէն մէկ քանին յատկացնելու իրեն:
Մենք այդ իրաւունքը տուի՛նք մեզի սա-
կայն՝ գրականութեան ու արուեստի
փհհարժան այս հովանաւորը, գրողնե-
րուն համար ի Պիքֆայա գրական շա-
քալ ստեղծած այս Հայրապետը, հեղի-
նակ համարելով, գիրով չդրուած, բայց
գերարժէ՛ք գիրքի մը, որ իր սպարած
կեանքը եղաւ, մանաւանդ եօթնէն տասը
տարուայ շրջանի մը: Այդ գիրքին մաս-

նաւորարար վերջին հատորը, լուսա-
հունշ շարագրութեամբ մը յօրինուած
կարծես, ամէնէն յուզիչ, խոր ու խոռ-
գիչ վէպերէն մին եղաւ, որ տեւէ հեղի-
նակ յաջողած ըլլայ զրեւ, այդքան հա-
րապատութեամբ, այդքան կարճ ժամա-
նակի մը մէջ: Տառապանքի եւ առաքի-
նութեան դիրք մը՝ շտպուած բնու,
բայց սպարուած միշտ, էջ առ էջ, յաճախ
տող առ տող:

Հատուածի մը կողմէ շընդունուա-
ծի, միշտ մերժուածի կեանք մը ապրե-
լով, իր դառնութիւնն ու ցաւը կրելով,
ու դառնալով ամէն օր աւելի ազնիւ ու
առաքինի, զրած եղաւ Զարեհ Վահագն
իւր համատարած սիրոյ ու խորակուիծ
ապրումին կրակէ հատորը, լոյսի ու ա-
րիւնի խառնուրդ իւր կեանքին հեքիա՛թ
գիրքը, որուն վերջին էջին տակ, թո՛ղ
ներէ մեզի լոյսերու մէջ հանդիպող իւր
լոյս հողին, եթէ մենք ուզենք գրել հի-
մա հայ մեծ բանաստեղծի մը նմանո-
ղութեամբ:

— Վասն ժողովարդիդ ու վասն Խա-
չիդ մեռար, դուք շա՛տ ապրեցար...:

Ե՛ր. ՊՈՅԱՃԵԱՆ



ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Այս քուէ քէ ան (Վիգոր Հիւկո) ստեղծուած եղաւ մասնայատուկ մէկ երգար-
տակովը Յալիսեմականիմ:

ԷՐԵՆՍԻ ԲԸՆԱՆ

«ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Պր. Հրայր Մերումեան (Պէյրուք) Հայր Ասողիկ Գրլըճեանի (Մ. Նաճանգներ) :
- Պր. Իսկէմտէր Քեսքանեամ (Մոնթէվիտէօ) Համազգայինի Պուրճ Համուտի մասնաճիւղին (Պէյրուք) :
- Օր. Սոնիա Փիլիկեան (Ֆրանսա) Պր. Գրիգոր Փիլիկեանի (Ֆրանսա) :
- Պր. Վարդան Կատարեան (Մ. Նահանգներ) ՊՊ. Յակոբ Տոլայանի (Ֆրանսա), Պետրոս Թազոբեանի, Ժորժ Արեւելեանի եւ Տէր եւ Տիկին Փօլ Պուրնազեանի (Մ. Նաճանգներ) :
- Պր. Մանուկ Տէր Սարգիսեան (Քերֆուֆ) Պր. Մանուկ Ղազարեանի (Մ. Նաճանգներ) :
- Պր. Ռազմիկ Սիմոնեան (Պաղտատ) Պր. Հայկ Աթանասեանի :
- Պր. Տ. Ս. (Պաղտատ) Պր. Յարութիւն Բաղդումեանի (Թէհրան) :
- Պր. Զօհրապ Ղազարեան (Պաղտատ) Պր. Գրիգոր Ղազարեանի (Մ. Նաճանգներ) եւ Պր. Բարսեղ Ղազարեանի (Պաղտատ) :
- Պր. Ժիրայր Արքարեան (Պէյրուք) Պր. Սարգիս Գալստգեանի (Անգլիա) :
- Պր. Հրանդ Սամուէլեան (Պէյրուք) Տաթև Ազատ Եսայեանի (Իտալիա) :

ՄԱՍՈՒԼԻ

ԵԴ. ՊՅԱՃԵԱՆԻ

ՊԱՍՏՈՒԱԾՔՆԵՐՈՒ - ԳԵՂԵՑԻԿ ՄԷԿ ՀԱՏՈՐԸ

ՏՈՄԱՐ ՏԱՐԱԳՐԻ

Տ Ա Կ Է

ՈՐ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵ

«ԱՏԼԱՍ» ՏՊԱՐԱՆԵՆ – ՊԵՅՐՈՒԹ

2

ՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ – ՀԵՌ. 243402 – ՊԵՅՐՈՒԹ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ. —

DIKRAN KOUYOUMDJIAN

P. B. 587, Beyrouth — Liban